


Ա. Մովսիսյան  
Ռ. Ղազարյան  
Ռ. Ցականյան  
Հ. Կարապետյան



Ք.Ա. ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅԱՐԱՄԱԿԻ  
ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ  
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ  
ԼԵՇՆԱՇԽԱՐՀԻ  
ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՏԱԿԱՐԱ  
ՀԱՄԱԼՍԱՐԱԾ

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ  
АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

**АРТАК МОВСИСЯН<sup>†</sup>, РОБЕРТ КАЗАРЯН,  
РУСЛАН ЦАКАНЯН, ЛИАННА КАРАПЕТЯН**

**АРМЯНСКОЕ НАГОРЬЕ В ПИСЬМЕННЫХ  
ИСТОЧНИКАХ ДРЕВНЕГО ВОСТОКА В III  
ТЫСЯЧЕЛЕТИИ И ПЕРВОЙ ПОЛОВИНЕ II  
ТЫСЯЧЕЛЕТИЯ ДО Н.Э.**

**КНИГА II**

**ИСТОЧНИКИ ПЕРВОЙ ПОЛОВИНЫ II ТЫСЯЧЕЛЕТИЯ  
ДО Н.Э. ОБ АРМЯНСКОМ НАГОРЬЕ**

**ЕРЕВАН  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ  
2023**

**YEREVAN STATE UNIVERSITY  
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES**

**ARTAK MOVSISYAN<sup>†</sup>, ROBERT GHAZARYAN,  
RUSLAN TSAKANYAN, LIANNA KARAPETYAN**

**THE ARMENIAN HIGHLAND IN WRITTEN SOURCES  
OF THE NEAR EAST IN THE III MILLENNIUM AND THE  
FIRST HALF OF THE II MILLENNIUM BC**

**BOOK II**

**SOURCES OF THE FIRST HALF OF THE II MILLENNIUM  
BC ABOUT THE ARMENIAN HIGHLAND**

**YEREVAN  
YSU PRESS  
2023**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ†, ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ,  
ՌՈՒՍԼԱՆ ՑԱԿԱՆՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ  
Ք.Ա. III ՀԱՅԱՐԱՄՅԱԿԻ ԵՎ II ՀԱՅԱՐԱՄՅԱԿԻ  
ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ**

**Գիրք II**

**Ք.Ա. ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅԱՐԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ  
ՍԿՐՖՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ  
ՄԱՍԻՆ**

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2023**

ՀՏԴ 930.2

ԳՄԴ 63.2

Հ 253

**Հրատարակության է երաշխավորվել Երևանի պետական  
համալսարանի և ՀՀ ԿԱԱ արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհուրդների որոշմամբ:**

Հ 253 Հայկական լեռնաշխարհը Հին Արևելքի Ք.ա. III հազարամյակի և II հազարամյակի առաջին կեսի գրավոր աղբյուրներում / Ա. Մովսիսյան, Ռ. Ղազարյան, Ռ. Ցականյան, Լ. Կարապետյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2023.- Գիրք II: Ք.ա. Երկրորդ հազարամյակի առաջին կեսի սկզբնաղբյուրները հայկական լեռնաշխարհի մասին.- 124 էջ:

Աշխարությունը ներկայացնում է Հայկական լեռնաշխարհի երկրների և բնակավայրերի հնագույն պատմության կարևորագույն սկզբնաղբյուրներից Ք.ա. XIX-XVII դդ. «կապադովկյան», միջագեղրյան և հին խեթական (Ք.ա. XVII-XVI դդ.) սեպագիր փեքսվերի գիտական հրատարակությունը՝ կից պատմագիրական հետազոտությամբ:

Աշխարությունը «Հայկական լեռնաշխարհը Հին Արևելքի Ք.ա. III հազարամյակի և II հազարամյակի I կեսի գրավոր աղբյուրներում» շարքի երկրորդ հատորն է և կարող է օգտակար լինել հայագեղրյան ու արևելագեղրյան, ինչպես նաև Հին Արևելքի պատմությամբ հետաքրքրվող ընթերցողներին:

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի դրամաշնորհային ծրագրի շրջանակում (20TTSH-047, 2020-2023 թթ.):

ՀՏԴ 930.2

ԳՄԴ 63.2

Գիրքը տպագրվել է ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

ISBN 978-5-8084-2652-8

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426528>

© ԵՊՀ հրատ., 2023

© Հեղ. խումբ, 2023

Գիրքը նվիրվում է  
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ,  
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի  
առաջատար գիտաշխատող, պ.գ.դ., պրոֆեսոր  
Արտակ Մովսիսյանի հիշատակին (1970-2020 թթ.):



## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>ԱՌԱՋԱԲԱՆ</b> .....	<b>7</b>
<b>ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸԸ</b> .....	<b>9</b>
<b>ՀԱՊԱՎՈՒՄԸԵՐ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ,</b> <b>ՀԱՄԱՌԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>11</b>
<b>ԳԼՈՒԽ 1</b>	
<b>ՀԻՆ ԱՇՅՈՒՐՅԱՆ («ԿԱՊԱԴՈՎԿՅԱՆ») ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ</b>	
<b>ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ</b> .....	<b>15</b>
1.1. ԱՇՅՈՒՐՅԱՆ («ԿԱՊԱԴՈՎԿՅԱՆ») ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	
ԹԵԳԱՐԱՄԱՅԻ ՄԱՍԻՆ .....	21
1.2. ԱՇՅՈՒՐՅԱՆ («ԿԱՊԱԴՈՎԿՅԱՆ») ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	
ՍԱՄՈՒԽԱՅԻ ՄԱՍԻՆ .....	37
1.3. ԱՇՅՈՒՐՅԱՆ («ԿԱՊԱԴՈՎԿՅԱՆ») ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	
ԿՈՒՍՍԱՐԱՅԻ ՄԱՍԻՆ .....	49
<b>ԳԼՈՒԽ 2</b>	
<b>ՀԻՆԲԱԲԵԼՈՒՅԱՆ ԵՎ ՄԱՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԳՐԵՐԸ</b>	
<b>ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ</b>	
<b>ԲՆԱԿԿԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ</b> .....	<b>60</b>
2.1. ԲԱԲԵԼՈՒԻՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ .....	60
2.2. ՄԻԶԱԳԵՏՔՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ	
ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ .....	68
<b>ԳԼՈՒԽ 3</b>	
<b>ՀԻՆ ԽԵԹԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ</b>	
<b>ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ</b> .....	<b>96</b>
<b>SUMMARY</b> .....	<b>110</b>
<b>РЕЗЮМЕ</b> .....	<b>111</b>
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</b> .....	<b>112</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ</b> .....	<b>119</b>
<b>ՏԵՂԱՑՈՒՆՆԵՐ</b> .....	<b>119</b>
<b>ԱՆՁԱՆԱՌՈՒՆՆԵՐ</b> .....	<b>122</b>

## ԱՌԱՋԱԲԱՆ

Յուրաքանչյուր երկրի պատմության կարևոր բաղադրիչներից մեկը պետականության սկզբնավորման և վաղ փուլերի ժամանակաշրջանն է: Այդ ժամանակաշրջանում են ծևակորվում տվյալ ժողովրդի հոգեկերտվածքի ու պետական մտածողության մի շարք բաղադրատարրեր, որոնք ուղեկցում են նրան ողջ պատմության ընթացքում: Այդ առումով Հայաստանի պատմության Ք.ա. III և II հազարամյակների առաջին կեսի պատմության ուսումնասիրությունը կարևոր և արդիական է, հատկապես պետականաշինության մեր ժամանակներում:

Հայկական լեռնաշխարհի Ք.ա. III հազարամյակի և II հազարամյակի առաջին կեսի պատմությունը հնարավոր է լուսաբանել հարևան տարածաշրջանների՝ Միջագետքի ու Փոքր Ասիայի պետություններում ստեղծված աղբյուրների շնորհիվ: Դրանց մեծագույն մասը, սակայն, մինչ օրս թարգմանված չէ հայերեն, մեծ թվով բնագրեր ցայսօր չեն մտել հայագիտության շրջանառության մեջ<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Առանձին բնագրեր իրենց տառադարձումներով, թարգմանություններով ու մեկնաբանություններով լրց են տեսել Ա. Մովսիսյանի «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրակիր աղբյուրների)» գրքի հավելվածում (Երևան, 2005, էջ 104-167), Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայում (հ. I, Երևան, 2007, էջ 43-72, համապատասխան թամբների կազմող և թարգմանիչ՝ Ա. Մովսիսյան) և առանձին հոդվածներում ու ուսումնասիրություններում՝ վկայակոչվելով այս կամ այն խնդրի հիմնավորման նպատակով: Փոքր Ասիայի, Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի հին շրջանի պատմության վերաբերյալ աշխատություններ են հրատարակել նաև տվյալ թեմատիկ խմբի անդամները՝ Ռ. Ղազարյանը, Ռ. Ցականյանը, որոնց աշխատություններում տեղ են գտել նաև աղբյուրներ իրենց տառադարձումներով ու թարգմանություններով, օրինակ՝ Ղազարյան 2013, Քոսյան, Ղազարյան, Խանզադյան, Մարտիրոսյան 2018, Ղազարյան Ռ., Ցականյան Ռ., Ղազարյան Ռ., Ցականյան Ռ. 2021ա:

Ք.ա. II հազարամյակի առաջին կեսի աշշուրյան («կապադովկյան») և Հին խեթական և բաբելոնյան ժամանակաշրջանի աղբյուրներում տեղեկություններ են պահպանվել Հայկական լեռնաշխարհի՝ տվյալ ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ:

Գրքում ներառված են աշշուրյան («կապադովկյան») և հին խեթական, ինչպես նաև հինբաբելոնյան տեքստեր, որոնցում կան տեղեկություններ Հայկական լեռնաշխարհի երկրների ու բնակավայրերի մասին: Հարկ է նշել, որ աշշուրյան («կապադովկյան») սեպագիր աղբյուրները եզակի են այդ ժամանակաշրջանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի վերհանման առումով: Պատմագիտական կարևոր նշանակություն ունեն նաև Հինբաբելոնյան և հին խեթական թագավորության ժամանակաշրջանի աղբյուրները: Հայագիտության մեջ այդ աղբյուրների մեծ մասը շրջանառության մեջ չեն դրվել և հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմելու Հայկական լեռնաշխարհի հատկապես արևմտյան ու հարավային մասի քաղաքական և տնտեսական իրավիճակի մասին:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատությունում տեղ են գտել տվյալ ժամանակաշրջանի աղբյուրների հիմնական մասը, որոնք ունեն պատմագիտական որոշակի նշանակություն Հին Հայաստանի պատմության համար: Հայագիտության ոլորտում առանձին նման աշխատության տեսքով մինչ օրս չի իրականացվել: Հաշվի առնելով այդ բնագրերի կարևորությունը Հայաստանի հին շրջանի պատմության ուսումնասիրման համար՝ ձեռնարկվեց սույն աշխատանքը<sup>2</sup>:

Տեքստերի թարգմանությունը, տառադարձումը, մեկնաբանությունները կատարելիս հաշվի ենք առել վերջին տարիների սեպագրագիտության նոր մոտեցումները: Առանձին ներկայացվել են նաև այդ աղբյուրներում տեղ գտած անձնանունների ու տեղանունների ցանկերը՝ մեկնաբանություններով հանդերձ:

Աշխատությունում օգտագործել ենք նաև մի շարք հատուկ նշաններ, հապավումներ, որոնց ամբողջական ցուցակը տրված է սկզբնամասում: Սույն ուսումնասիրության մեջ կիրառվել են հետևյալ սկզբունքները՝

- ներկայացվել է աղբյուրների ամբողջական տառադարձումը, այնուհետև տրվել է ամբողջական թարգմանությունը,
- տառադարձման ժամանակ նշվել են մեր կամ այլ հերիխակների նկատառումները տեքստում տեղ գտած բացթողումների կամ սխալների վերաբերյալ,
- թարգմանության ժամանակ որոշ բառեր կամ բառակապակցություններ ավելի հասկանալի դարձնելու

<sup>2</sup> Հեղինակները իրենց երախտագիտությունն են հայրնում << ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի վարիչ, պ.գ.դ. Արամ Քոյսյանին՝ սույն աշխատությունը խմբագրելու ու օգրակար խորհուրդներ դրալու համար:

համար տրվել են նաև մեր մեկնաբանությունները դրանց վերաբերյալ,

- հատուկ անունների դեպքում պահպանվել է ներկայումս սեպագրագիտության մեջ ընդունված գրելաձևը,
- տեքստում գործածված շումերերեն բառերը, վերջավորությունները, սահմանիչները (դետերմինատիվները) տառադարձման ժամանակ տրվել են լատիներեն մեծատառերով, իսկ աքքադերեն բառերը՝ շղագիր լատինատառ,
- սահմանիչները, շումերագիր ու աքքադագիր վերջավորությունները տրվել են բառերի վերսի մասում:

## **ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼՇԱՆՆԵՐ, ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Դկ** – Դիմային կողմ

**Հկ** – Հակառակ կողմ

[.....] – վնասված, բացակայող և չվերականգնված հատված

[ ] – բացակայող, սակայն վերականգնված հատված

↑↑ – վնասված կամ վատ ընթեռնելի մեկ կամ մի քանի սեպանշան

\* – տեքստերի վերաբերյալ բացատրություն

արք. – արքադերեն

**ՊԲՀ** – «Պատմաբանասիրական հանդես», Երևան

**Adana** – Արանայի հնագիտական թանգարանում գտնվող աշշուրիցի առևտրականների («կապադովկյան») տեքստերը

**AKT 3** – E. Bilgiç, C. Günbatti, Ankararer Kültepe-Texte, III (Freiburger Altorientalische Studien Beihefte 3, Stuttgart, 1995)

**AKT 4** – I. Albayrak, (Ankara) Kültepe Tabletleri (Kt 0/k), IV (Türk Tarih Kurumu Yayınları VI/33b), Ankara 2006

**AKT 5** – Veenhof 2010

**AKT 6-ա** – Larsen 2010

**AoF** – Altorientalische Forschungen. Akademie der Wissenschaften der DDR. Berlin

**ArchAn** – Archivum Anatolicum. Anadolu Arşivleri. Ankara Üniversitesi Dil ve Tarih Coğrafya Fakültesi, Eskiçağ Dilleri ve Kültürleri, Ankara

**ARMT 1** - Dossin 1946

**ARMT 2** – Jean 1941

**ARMT 6** – Kupper 1954

**ARMT 13** – Dossin et al 1964

**ARMT 14** – Birot 1974

**ARMT 26, I/2** – Charpin et al 1988

**ARMT 28** – Kupper 1998

**CAD** – The Assyrian Dictionary of the Institute for the study of Ancient Cultures of the University of Chicago, 21 volumes (1961-2010)

**CCT 1** – Cuneiform Texts from Cappadocian Tablets in the British Museum, London, Part 1, 1921

**CCT 2-4** – Smith 1924-1927

**CCT 5** – Smith, Wiseman 1956

**CTH** – Laroche E., Catalogue des textes hittites, Paris, 1971, Editions Klincksieck, 267 p. Premier Supplément, RHA, 1972, № 30, pp. 94-133

**JCS** – Journal of Cuneiform Studies (New Haven)

**JSOR** – Journal of the Society of Oriental Research (Chicago)

**Kay** – Kayseri Arkeoloji Müzesi (Կեսարիայի հնագիտական թանգարանի «կապադովկյան» աղյուսակներ)

**KBo** – Keilschrifttexte aus Boğazköi (Leipzig/Berlin, 1923ff)

**Kt 72/k-85/k:** Առկա են միայն մի քանի մատչելի և ընթեռնելի տեքստեր: Աստրականների արխիվների մեծ մասը թվագրվում է REL 80-110 (Ք.ա. 1885-1855 թթ.) միջակայքում: Այս շարքի մի քանի արխիվներ թվագրվում են նաև կարումի հնագիտական լի շերտով (Ք.ա. մոտ 1840-1700 թթ.):

**Kt 87-88/k** – Աշշուր-ուի արխիվը: Աշշուր-ուի ամենավաղ գործունեությունը Քանեշում թվագրվում է Ք.ա. 1890 թվականով (REL 75):

**Kt 92/k (AKT 5)** – Ալի-աբումի որդի Կուլիյա առևտրականի արխիվը (տե՛ս Veenhof 2010 և Kryszat 2004)

**Kt 93/k** – Այյուսակներ, որոնք պեղվել են Քանեշի հնավայրում 1993 թվականին: Ալի-ախումի որդի Աշշուր-թակլակուի արխիվը, տե՛ս Michel 2008: 63ff: Պարզ չէ՝ արդյոք տեքստը (kt 93/k 931), որը թվագրվում է Ք.ա. 1893 թվականով (REL 72), արդյո՞ք առնչվում է Ալի-ախումի հոր արխիվին:

**Kt 94/k (AKT 6)** – Այյուսակներ, որոնք պեղվել են Քանեշի հնավայրում 1994 թվականին: Իսուու-արիկի որդի Շալիմ Աշ-

շորի արխիվը: Այս արխիվից է գտնվել Քանեշում հայտնաբերված ամենավաղ թվագրվող տեքստը, որը պատկանում է Բաշտում-դամքատի որդի հստու-արիկին (տեքստը թվագրվում է Ք.ա. 1932 թվականով (REL 42)): Sté'u Larsen 2010:

**Kt g/k** – Առանձին մի տեքստ, որը թվագրվում է Ք.ա. 1848/1839 թվականներով (REL 117/126):

**Kt m/k-r/k** – Տվյալ արխիվները պարունակում են տեղեկություններ, որոնք թվագրվում են Քանեշի կարումի հնագիտական II շերտի (Ք.ա. մոտ 1970-1840 թթ.) ուշ փուլով: Օրինակ՝ kt m/k 79 տեքստը թվագրվում է REL 134-ով, այսինքն՝ Ք.ա. 1831 թվականով:

**Kt m/k** – Պուզուր-իլի որդիների՝ Ամուր-Շամաշի ու Իկունումի արխիվը: Sté'u Hecker 2004:

**Kt n/k** – Այյուսակները գտնվել են Քանեշի կարումի 1962 թ. պեղումների ժամանակ: Պատկանել են Ամուր-իլի որդի Աշուր-իմիտուի արխիվին:

**KTP** – Stephens 1927

**KUB** – Keilschrifturkunden aus Boğazköi (Berlin, 1921ff)

**KUG** – The Assyrian cuneiform texts of the Gießen University Library

**MDOG** – Mitteilungen der deutschen Orient-Gesellschaft zu Berlin

**OLZ** – Orientalische Literaturzeitung, Berlin

**PIHANS** – Publications de l’Institut historique et archéologique néerlandais de Stamboul (Leiden)

**REL** – Revised Eponym List (վերանայված էպոնիմների ցուցակ)

**RGTC VI** – Del Monte G.F., Tischler J., Répertoire Géographique des Textes Cunéiformes. Band 6. Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978, 596 S.

**RHA** – Revue Hittite et Asianique (Paris)

**StBoT** – Studien zu den Boğazköy-Texten (Wiesbaden), 1965ff

**TC** – Tablettes cappadociennes du Louvre, Paris

**TC 3** – Lewy 1935-1937

**TPAK 1 (Kt 90/k)** – Պուգուր-Իշտարի արխիվը: Տե՛ս Michel C., Garelli P. 1997:

**TTKY** – Türk Tarih Kurumu Yayınlarından (Ankara)

**VS (VAT)** – Vorderasiatische Museum zu Staatliche Museum zu Berlin («Կապաղովկյան» աղյուսակներ Բեռլինի պետական թանգարաններից՝ մեկում՝ Առաջավորասիական թանգարանում)

## ԳԼՈՒԽ 1

### ՀԻՆ ԱՇՅՈՒՐՅԱՆ («ԿԱՊԱԴՈՎԿՅԱՆ») ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ

Աշխուրցի առևտրականները Ք.ա. XX-XVIII դդ. Փոքր Ասիայի արևելքում, Հայկական լեռնաշխարհի արևմուտքում և Ասորիքի հյուսիսում՝ մոտ քառասուն քաղաքներում, հիմնադրել էին առևտրական կայաններ, որոնք տվյալ քաղաքներում նրանց առևտրային գործունեության կենտրոններն էին: Պահպանվել և հայտնաբերվել են նաև այդ առևտրականների թղղած գրավոր տեղեկությունները, որոնք Փոքր Ասիայի և հարակից տարածքների պատմության վերաբերյալ առաջին գրավոր տեղական աղբյուրներն են («կապադովկյան»<sup>3</sup>, կամ Քանեշի, կամ Աշխուրի առևտրական աղյուսակները): Աշխուրի առևտրական գաղութների գործունեությունն արտացոլող տեքստերը բովանդակությամբ բաժանվում են հետևյալ խմբերի՝ առևտրական գործարքների վերաբերյալ նամակներ, իրավաբանորեն ձևակերպված պայմանագրեր, առևտրական գործունեությանն առնչվող ցուցակներ, Փոքր Ասիայից Աշխուր ուղարկվող ապրանքների մասին տեղեկանքներ և այլն: Հաճախ այդ տեքստերը կրում էին անձնական բնույթ, և դրանց շնորհիվ մենք տեղեկանում ենք նաև այդ ժամանակաշրջանի ընտանեկան հարաբերությունների, անձնային կապերի և այլնի մասին:

---

<sup>3</sup> Դեռևս 1881 թ. Բրիտանական թանգարանը հրատարակեց մի սեպագիր աղյուսակ, որը գնվել էր Կ. Պոլսում և այստեղ էր բերվել պատմական Կապադովկիայի տարածքից: Նմանատիպ աղյուսակ կար նաև Փարիզի ազգային գրադարանում: Այդ պատճճառով այդ աղյուսակները կոչվեցին «կապադովկյան»: Վերձանված ու հրատարակված «կապադովկյան» գրավոր աղբյուրները ներկայացնում են Քանեշի առնվազն Ք.ա. մոտ 1930-1710 թթ. պատմությունը, սակայն դրանց մեծագույն մասը թվագրվում է Ք.ա. 1895-1865 թվականներով:

Նրանց մեծ մասը հայտնաբերվել է ներկայիս Քյուպթեփե (Մոխրաբլուր) բլրի մոտ և թվագրվում է հիմնականում Ք.ա. XX-XVIII դարերով:

Հնագիտական տվյալների համաձայն՝ Քանեշի հնագիտական շերտերը (18 հնագիտական շերտ) ընդհանուր առմամբ սկսվում են ուշ վաղ բրոնզեդարից և տևում մինչև ուշ հռոմեական շրջան: «Կապադովկյան» աղբյուրներով վկայված Քանեշի թագավորության շրջանը (Ք.ա. XX-XVIII դդ.) 6-8-րդ հնագիտական շերտերն են (8-II, 7-Ib, 6-Ia): Հնավայրի II շերտը թվագրվում է Ք.ա. մոտ 1970-1840, իսկ Ib շերտը՝ Ք.ա. մոտ 1840-1700 թվականներով:

Դեռևս 1925 թ. չեխոսլովակյան արշավախումբը՝ Բ. Հրոգնու գլխավորությամբ, թույլտվություն ստացավ պեղումներ անցկացնելու Քյուպթեփեյում: Նա հայտնաբերեց մոտ հազար սեպագիր աղյուսակներ: Բ. Հրոգնու գլխավորած պեղումների և ուսումնասիրությունների հիման վրա հաստատվեց, որ Քյուպթեփեն Քանեշն է:

Քանեշ կամ Նեսա քաղաքը գոյություն է ունեցել Ք.ա. III հազարամյակի վերջից և առևտրային կապեր է ունեցել Միջագետքի ու Ասորիքի հետ դեռևս աքքադական պետության և Ուրի երրորդ հարստության ժամանակաշրջանում<sup>4</sup>: Քանեշի միջնաբերդում (Վերին քաղաքում) 2013 թ. հայտնաբերվել են հարյուրավոր կնիքներ: Գտնված ամենահին կնիքը թվագրվում է Ք.ա. 1928 թվականով<sup>5</sup>: Աշշուրյան առևտրական գաղութի՝ կարումի<sup>6</sup> ստեղծման ժամանակ ակնհայտ է, որ արդեն առևտրական կապեր կային Քանեշի և այլ քաղաքների միջև<sup>7</sup>:

<sup>4</sup> St' u Dercksen 2008: 112:

<sup>5</sup> St' u Dercksen 2008: 111:

<sup>6</sup> Աքքադերենում կարում (kārum) բառը նշանակում է հանգրվան, կայան, նավահանգիստ, վայր, որտեղ առևտուր էր իրականացվում, տե՛ս CAD 8: 233-235:

<sup>7</sup> St' u Özgürç 1986:

Կարումից գտնված մոտ 23.500 աղյուսակներից մոտ 23.000-ը հնագիտական և շերտից են հայտնաբերվել, միայն հինգ հարյուրը՝ լի շերտից: Քանեշի միջնաբերդում (Վերին քաղաքում) գտնվել է միայն 40 աղյուսակ, մնացած բոլորը՝ կարումից: «Կապարովկյան» աղբյուրներում առաջին անգամ հիշատակվել են խեթական հատուկ անուններ, նաև խեթերենից փոխառած բառեր:

Քանեշը նաև բրոնզեդարյան ժամանակաշրջանում Փոքր Ասիայում ծևավորված պետական կազմավորումներից մեկի կենտրոնն էր: Այն հավանաբար իր պատմությունը սկսել է դեռևս Ք.ա. III հազարամյակի երկրորդ կեսին, համենայն դեպք քաղաքը գոյություն ուներ մինչև աշշուրցի առևտրականների ժամանումը այդտեղ և ակտիվ առևտրատնտեսական գործունեության սկիզբը:

Քանեշն իր ազդեցությունն է թողել նաև խեթական պետության (Ք.ա. XVII դ. կեսեր-XII դ. սկիզբ) կազմավորման ու կայացման գործընթացում: Քաղաքը խեթական պետության մեջ հայտնի երկրորդ կենտրոնն էր Կուսարայից հետո, և նրա տարածքը հենք է հանդիսացել խեթական պետության հետագա ընդարձակման համար: Քանեշի պետական կառուցվածքը, կառավարման համակարգը նույնպես իրենց ազդեցությունն են թողել խեթական պետական համակարգի վրա:

Փոքր Ասիայում դարեր շարունակ մինչ այդ բրոնզ էին արտադրում, քանի որ այստեղ կան անագի հանքավայրեր: Երբ այդ անագը պակասեց, աշշուրցի վաճառականները այն սկսեցին այլ տեղերից ներկրել Փոքր Ասիա: Այդտեղ մեծ պահանջարկ կար նաև Միջազգետքում արտադրվող կտորեղենի նկատմամբ: Բացի վերոնշյալ ապրանքներից՝ ներկրում էին նաև թանկարժեք քարեր, պղինձ, արծաթ, ոսկի և այլն: Ճանապարհին գտնվող երկրների ու քաղաքների կառավարիչները հարկեր էին գանձում առևտրական քարավաններից:

Հաճախ առևտրականները աշխատում էին շրջանցել բնակավայրերը կամ թաքցնել իրենց ապրանքը: Սակայն այդ դեպքում վտանգ կար, որ նրանց կարող են ձերբակալել, ապրանքը առգրավել կամ տուգանել: Այնուամենայնիվ, առևտուրը մեծ եկամուտներ էր բերում. մոտ հարյուր տոկոս շահովյանագի առևտրից, երկու հարյուր տոկոս շահովյանագի կտորեղենի առևտրից:

Աշշուր-Քանեշ միջազգային առևտուրն իրականացվում էր Աշշուր քաղաք-պետության և փոքրասիական քաղաք-պետությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա: Պայմանագրերը, փաստորեն, աշշուրցի առևտրականների առջև բաց էին արել Փոքր Ասիայի ու Հայկական լեռնաշխարհի շուկաները<sup>8</sup>: Սա աշշուրցիների խաղաղ ներթափանցումն էր տարածաշրջան:

Աշշուրցի առևտրականները կարողանում էին նաև տեղի կառավարիչներից և արքաներից ստանալ այնպիսի իրավունքներ, որոնք նրանց թույլ էին տալիս բնակավայրերում հաստատվելուց հետո այնտեղ գործել իրենց առանձին օրենքներով՝ վարելով անկախ ֆինանսական գործունեություն: Ըստ էության, առևտրային գաղութների ներսում գործում էին աշշուրյան օրենքները: Աշշուրցի առևտրականներն օգտագործում էին իրենց հաշվարկի միավորները, իրենց լեզուն, պաշտում էին իրենց աստվածություններին և իրենց ներքին հարցերը նոյնպես կարգավորում էին աշշուրյան օրենքներով: Քանեշի աշշուրցի առևտրականներն ունեին նաև իրենց ավագների խորհուրդը:

Սովորաբար աշշուրցի վաճառականները հիմնավորվում էին փոքրասիական քաղաքներում՝ այնտեղ գնելով տներ, կազմելով ընտանիքներ: Նրանց տներում էին պահվում նաև նրանց առևտրական արխիվները: Այդ առևտրականները

<sup>8</sup> Բացի Փոքր Ասիայի արևելյան, կենտրոնական և հարավային շրջաններից՝ առևտուրն ընդգրկել էր նաև թերակղզու արևմտյան մասը:

նաև մշտական նամակագրական կապի մեջ էին իրենց հայրենի քաղաքի՝ Աշուրի հետ:

Այսպիսով, Քանեշի պետությունը փոքրասիական քաղաք-պետություններից էր, որի պատմության անբաժանելի մասն է կազմում աշշուրցիների կողմից ստեղծված առևտրական կարումը (առևտրական գաղութը): Հաճախ այդ առևտությունների միջև տեղի ունեցող պատերազմների հետևանքով, որոնք ընթանում էին նաև միջազգային առևտրական ուղիների և շուկաների վրա վերահսկողություն սահմանելու համար: Քանեշի կարումը մի քանի անգամ հարձակումների է ենթարկվել ու ավերվել:

Հնագիտական տվյալների համաձայն՝ Քանեշը Ք.ա. մոտ 1710-1700 թթ. միջակայքում ավերել և լքվել է (Քանեշի I և հնագիտական փուլի ավարտ)<sup>9</sup>: Դա, փաստորեն, աշշուրյան միջազգային առևտուի ավարտն էր տարածաշրջանում<sup>10</sup>: Քանեշի արքայական տոհմը հավանաբար ստիպված է եղել լքել Քանեշի միջնաբերդը: Դժվար է հստակ պնդել, թե որ ուղղությամբ են նրանք հեռացել, և ով է եղել Քանեշի վերջին արքան: Հավանական ուղղություններից մեկը կարող էր լինել Կուսարը: Ամենայն հավանականությամբ քանեշցիների զգայի հատվածը նույնպես կարողացել էր հեռանալ: Հավանաբար Քանեշի պետական արխիվը նույնպես դուրս էր հանվել քաղաքից, այնուհետև՝ տեղ գտել Խաթթուսայի պետական դիվանում:

<sup>9</sup> Կա կարծիք նաև այն մասին, որ Քանեշը հետագայում չի բնակեցվել կամ մասսամբ է բնակեցվել նաև այն պատճառով, որ բնակչության պայմաններն են փոփոխվել տարածաշրջանում: Քաղաքի մոտ գտնվող գետը ցամաքել էր կամ ծանծաղել, որի հետևանքով քաղաքի մերձակայքում ճահիճներ էին առաջացել: Տե՛ս *Kulakoğlu* 2014: 86, 92:

<sup>10</sup> Փոքր Ասիայում աշշուրցի առևտրականների միջազգային առևտուի ավարտի պատճառ կարող էր հանդիսանալ նաև Հյուսիսային Միջագետքում խոտիական պետությունների հղորացումը:

Քանեշի առևտրական գաղութի վերացմամբ ավարտվեց նաև գրավոր աղբյուրների ժամանակաշրջանը տարածաշրջանում: Հաջորդը արդեն հին խեթական տեքստերի ժամանակաշրջանն է:

Աշխուրյան կամ «կապադովկյան» աղբյուրներում տեղեկություններ են պահպանվել նաև Հայկական լեռնաշխարհի տարածքում գտնվող բնակավայրերի (օրինակ՝ Թեգարամայի, Սամուխայի, Կուսսարայի) մասին: Այս առումով այդ աղբյուրները կարևոր նշանակություն ունեն նաև Հայկական լեռնաշխարհի տվյալ ժամանակաշրջանի (Ք.ա. XX-XVIII դդ.) պատմության ուսումնասիրման համար:

## 1.1. ԱՇՇՈՒՐՅԱՆ («ԿԱՊԱԴՈՎԿՅԱՆ») ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԹԵԳԱՐԱՄԱՅԻ ՄԱՍԻՆ

Թեգարամայի վերաբերյալ առաջին տեղեկությունները հայտնվել են «կապադովյան աղյուսակներում»: Քաղաքը առևտրական կապեր է ունեցել տարածաշրջանի շատ բնակավայրերի հետ: Թեգարաման առևտրական կարևոր տարանցիկ կենտրոններից մեկն էր հանդիսացել տարածաշրջանում: Առևտրական ճանապարհը, որը սկսվում էր Աշխուրում, անցնում էր Թեգարամայով և հասնում Քանեշ: Հավանաբար քաղաքում կար աշշուրական առևտրական գաղութ (կարում) և գաղութի վարչակազմ (*bēt kārim*)<sup>11</sup>:

Եթե Քանեշի աղբյուրներում տրված է, որ Թեգարաման բնակավայր է, ապա հետագա խեթական աղբյուրներում այն նշված է որպես և՛ երկիր, և՛ քաղաք: Օրինակ՝ Խաթթիի արքա Տելեայինուի (Ք.ա. մոտ 1525-1500 թթ.) «Հոչակագրում» նշվում է, որ դեպի հարավ շարժվող Խաթթիի արքա Խանտիլի I-ը (Ք.ա. մոտ 1590-1560 թթ.) ճանապարհին կանգ է առնում Թագարամա քաղաքում<sup>12</sup>: Նոյն տեքստի մեկ այլ մասում նշվում է, որ Խանտիլիի օրոք սպանել են Շուկցիյա քաղաքի<sup>13</sup> թագուհուն ու նրա երեխաներին: Նշվում է, որ մինչ այդ նրան և նրա ընտանիքին տարել էին դեպի Թագարամա քաղաք, որի մոտ էլ հավանաբար նրանց սպանել էին<sup>14</sup>: Թեգարամայի վերաբերյալ տեղեկություն կա նաև խեթական սահմանապահ իրամանատարներին տրված իրահանգների

<sup>11</sup> Տե՛ս Barjamovic 2011: 122-133, ձ. 376): Տե՛ս նաև Bilgiç E. 1945-1951: 36, Ghazaryan 2016:

<sup>12</sup> Տե՛ս Van den Hout Th.P.J. 1997: 195, Hoffmann 1984: 20-21:

<sup>13</sup> Շուկցիյա քաղաքի տեղադրության վերաբերյալ տե՛ս RGTC VI: 363-364:

<sup>14</sup> Այս իրադարձության վերաբերյալ տե՛ս նաև Hoffmann 1984: 22-23, Helck 1984: 103-108, Soysal 1990: 271-279:

տեքստում<sup>15</sup> (իավանաբար Առնուվանդա Ի-ի ժամանակաշրջանը (Ք.ա. XV դարի 1 կես)), որտեղ նշվում են զինվորներ Կասսիյայից, Խիմուվայից, Թեգարամայից և Խուվայից<sup>16</sup>:

Համադրելով «կապադովկյան», խեթական և ասորեստանյան աղբյուրները՝ Թեգարաման կարելի է տեղորոշել Վերին Եփրատի հովտում՝ գետի աջ ափին՝ Կարգամիսից (Ներկայիս Ջերաբլու հնավայրի տեղում) հյուսիս, Խուվայից (իայկական Շոփքը) արևմուտք, Վերին Երկրից հարավ ու Քանեշից արևելք<sup>17</sup>: Հարկ է նշել, որ մասնագետների մեծ մասը համակարծիք են Թեգարաման Մելիտենեի արևմուտքում տեղադրելու (Ներկայիս Գյուլբուլի տեղում<sup>18</sup>) հարցում, որին մենք նոյնպես համամիտ ենք: Թեգարամա Երկիրը, փաստորեն, տեղադրվում է հետագայի Երկրորդ Հայքի տարածքում<sup>19</sup>:

Հետագայում Թեգարամա Երկրի տարածքի մեծ մասում առաջացավ Մելիդի (Միլիդիայի, Մելիտեյայի, Մալիցիայի) թագավորությունը (այսպես կոչված ուշխեթական պետու-

<sup>15</sup> St'u KUB XIII 2 III:

<sup>16</sup> Goetze 1953: 69, Houwink Ten Cate Ph. H.J. 1970: 67, 70.

<sup>17</sup> St'u RGTC VI: 383-384:

<sup>18</sup> Gürün-ը (հայ.՝ Կիլիխն, Կյուլիխն) բնակավայր է Սեբաստիայի նահանգում: St'u Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 924: Այս տեղադրությունն առաջին անգամ առաջարկել է Է. Ֆոռերը (Forrer 1920: 75): St'u նաև Աղոնց 1972, 41-42, 310: Maxwell-Hyslop 1974: 150:

<sup>19</sup> Երկրորդ Հայքի մասին տե՛ս Երեմյան 1963, 100: Բյուզանդիայի կայսր Հուստինիանոսի (527-565 թթ.) վերափոխումների համաձայն՝ նախկին Երկրորդ Հայքը վերանվանվեց Երրորդ Հայք: Թեգարամայի տարածքը համընկնում էր հետագայի Երրորդ Հայքի տարածքին: Այստեղ հիշատակվել են Մելիտենե, Արկա, Արաբիսոն, Արիարաթիա, մյուս Կոմանա և Կումիսոն քաղաքները: St'u Աղոնց 1987, 191-192, 198: St'u նաև Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, 200-201:

թյուններից մեկը<sup>20</sup>), որի քաղաքներից մեկն էր Թիլ-Գարիմմուն<sup>21</sup>:

Հավանաբար արդեն Խաթթուսիլի I-ի օրոք (Ք.ա. XVII դ. II կես) Թեգարամայի տարածքը գտնվում էր Խեթական պետության կազմի մեջ, որպեսզի ապահովեր Խաթթի արքայի թիկունքը, երբ նա արշավում էր դեպի Հյուսիսային Ասորիք: Ամենայն հավանականությամբ այդ ժամանակաշրջանից էլ այն մտնում էր Խեթական տերության կազմում, մինչև նրա անկումը: Թեգարաման նաև ռազմավարական կարևոր դիրք էր զբաղեցնում: Մի կողմից այն սահմանակցում էր Խուտի-Միտանի պետությանը, մյուս կողմից՝ Խուլվա Երկրին: Այսպիսով, Թեգարամա Երկիրը աշխարհագրական կարևոր դիրք էր զբաղեցնում. մի կողմից այստեղից ճանապարհներ էին բացվում դեպի Հայկական լեռնաշխարհի արևմտյան այլ շրջաններ, դեպի Ծոփք, մյուս կողմից՝ դեպի Հյուսիսային Ասորիք և Հյուսիսային Միջագետք: Բացի այդ՝ Թեգարաման կարծես Խաթթի ռազմական կենտրոններից մեկն էր, որտեղ Խաթթի արքաները գորատես էին անցկացնում ռազմական խոշոր միջոցառումներից առաջ:

Թեգարաման նաև Խեթական տերության արևելյան Երկրամասերից մեկն էր: Աշխարհագրական առումով այն մասն է կազմում Հայկական լեռնաշխարհի, որով և նրա պատմությունը մեզ համար կրկնակի հետաքրքրություն է ներկայացնում: Նկատի ունենալով հայ ժողովրդի ազգածագման զգալի աղերսները վերինեփրատյան տարածաշրջանի հետ՝ մասնագետները ավանդաբար հակված են եղել նույնացնելու «Տուն Թորգոման» անդրեփրատյան տարածաշրջանում դեռ Ք.ա. II հազարամյակից հիշատակվող Թեգարամա (ասորեստանյան Թիլ-Գարիմմու) քաղաքի հետ: «Տուն Թորգոման» բառացիորեն կրկնում է Աստվածաշնչում հիշա-

<sup>20</sup> Տե՛ս Bryce 2012: 98-110:

<sup>21</sup> Տե՛ս Սարգսյան 1992, 37, 45-48:

տակվող *Bet-Togarma*-ն: Թեգարամա երկրի պատմության ուսումնասիրությունը կարևոր է նաև այն առումով, որ հայոց մատենագրության մեջ, սկսած Մովսես Խորենացուց, Հայկ նահապետը կոչվում է «Թորգոմի որդի», իսկ հայ ժողովուրդը՝ «ազգն Թորգոմայ»<sup>22</sup>:

Թեգարաման նաև Խաթթի կարևոր հոգևոր կենտրոն-ներից մեկն էր: Հայտնի է Թեգարամայի Ամպրոպի աստվածը, արական և իգական աստվածությունները<sup>23</sup>:

\*\*\*

«Կապադովկյան» աղբյուրներում Թեգարամայի մասին տեղեկություններ կան մի շաբթ տեքստերում: Դրանց մեծ մասում Թեգարամայի մասին տվյալները շատ քիչ են, կամ ուղղակի տրվել է քաղաքի անոնք: Որոշ տեքստեր տրվել են հատվածական, միայն այն մասերը, որոնցում կան տեղանունների մասին տեղեկություններ: Կան նաև վնասված փոքր տեքստեր, որտեղ հիշատակվել է քաղաքը: Այդ պատճառով որոշ տեքստեր ուղղակի չեն ներառվել գրքում, քանի որ պատմագիտական տեսանկյունից մեծ արժեք չեն ներկայացնում: Տեքստերի մեծ մասը պարունակում են տեղեկություններ առևտրական գործարքների, միջանձնային հարաբերությունների, աշշուրցի առևտրականների ու տեղական կառավարիչների միջև հարաբերությունների և այլնի մասին:

---

<sup>22</sup> «Տուն Թորգոմայի» հարցին առավել մանրամասն և հանգամանալի անդրադարձել է Ա. Քոյսյանը: Ըստ նրա՝ «Տուն Թորգոման» պետք է մուտք գործեր հայոց մատենագրություն Աստվածաշնչի միջոցով, իսկ Եփրատից արևմուտք ընկած տարածքը՝ Մելիդ-Թեգարաման, պետք է կարևորագույն դեր խաղար հայկական էթնոսի ու պետականության համախմբման գործում, որպեսզի հետազայում հայոց ինքնագիտակցության մեջ արմատավորվեր նախահայր Թորգոմի և նրա հետնորդների մասին վերհուջի տեսքով (տե՛ս Քոյսյան 1998):

<sup>23</sup>Տե՛ս KUB VI 45 II 66f. = 46 III 32f., KBo XII 140 Rs. 8:

Թեգարամա քաղաքը «կապադովկյան» տեքստերում հիշատակվել է քազմաթիվ քաղաքների հետ, որոնք են՝ Աբով[չ]խտա<sup>24</sup> (kt r/k 1), Ապալուդանա<sup>25</sup> (kt 94/k 335), Ապու<sup>26</sup> (kt g/k 220), Բանիսրա<sup>27</sup> (kt 93/k 604), Բուլուդդում<sup>28</sup> (CCT 1, 29, CCT 3, 44b, kt g/k 220), Դուրխումիս<sup>29</sup> (AKT 5, 5, AKT 6, 491), Չալպա<sup>30</sup> (Adana 237ö, CCT 1, 29, CCT 5, 3b), Չիլունա<sup>31</sup> (kt 93/k 604), Զուկուա<sup>32</sup> (kt 93/k 604), Լուխուզատտիյա<sup>33</sup> (kt

<sup>24</sup> Քաղաքը «կապադովկյան» տեքստերում հազվադեպ է հիշատակվել: Բացի այդ՝ նրա մեկ սեպանշանը դժվարնթեռնելի է: Եղած նյութը քավարար չէ քաղաքի համար որևէ հստակ տեղադրություն առաջարկելու համար:

<sup>25</sup> Հազվադեպ հիշատակվող տեղանուններից մեկն է: Խեթական աղբյուրներում քաղաքի մասին հիշատակություն չկա: Տեղորոշումը հնարավոր չէ:

<sup>26</sup> Եղած տվյալները թույլ չեն տալիս քաղաքը տեղորոշել:

<sup>27</sup> Առկա նյութը բնակավայրը տեղորոշելու հնարավորություն չի տալիս:

<sup>28</sup> Քաղաքը գտնվել է Աշշորից դեպի Քանեց տանող առևտրական ճանապարհի վրա: Այն հիշատակվել է նաև Քարադրում, Բուրունդում ծներով: Գտնվել է Խախիստամի մոտ (Ներկայիս Ալյամանի նահանգի տարածքում):

<sup>29</sup> Գտնվել է Խաթթուայից հյուսիս ընկած տարածքներում: Այն եղել է պղնձի առևտրի գլխավոր կենտրոնը Փոքր Ասիայում: Այն բազմից հիշատակվել է նաև Խեթական աղբյուրներում (Դուրմիտու), տե՛ս **Barjamovic 2011:** 242-267, RGTC VI: 442-444:

<sup>30</sup> Զալպուվա կամ Զալպա քաղաքը գտնվել է Սև ծովի փոքրասիհական ափին կամ մերձակա տարածքներում: Տեղադրության վերաբերյալ տե՛ս RGTC VI: 490-492: «Կապադովկյան» աղբյուրներում հիշատակվել է նաև մեկ այլ Զալպա, որը գտնվել է Խախիստամի մոտ, տե՛ս **Barjamovic 2011:** 117-118:

<sup>31</sup> Քիչ հիշատակված տեղանուններից է: Չիլունա անվամբ քաղաք հիշատակվել է նաև Խեթական աղբյուրում (**KUB XIV 17 II 28**) հյուսիսայինական տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների հետ: Ըստ այդմ՝ քաղաքը խիստ նախնական կարելի է տեղորոշել այդ տարածքներում:

<sup>32</sup> Հազվադեպ հիշատակվող տեղանուններից է: Եղած նյութը քավարար չէ բնակավայրը որևէ կերպ տեղորոշելու համար:

<sup>33</sup> Լուխուզատտիյա քաղաքը գտնվում էր Քանեշից արևելք՝ մինչև Թեգարամա հասնող տարածքներում: Առավել հստակ տեղորոշում դժվար է տալ: Խեթական աղբյուրներում քաղաքը հիշատակվել է Լավազանտիյա կամ Լախուզազանտիյա ձներով: Տե՛ս **Barjamovic 2011:** 140-142, RGTC VI: 237-238:

92/k 1036, *AKT* 6, 491), Խաքա<sup>34</sup> (kt g/k 220), Խառանու<sup>35</sup> (*CCT* 1, 29), Խաթթուսա (kt/k 1036, kt m/k 141, *TPAK* 1, 50), Խուրամա<sup>36</sup> (*AKT* 6, 149, *AKT* 6, 491), Խուրումխասու<sup>37</sup> (*TPAK* 1, 50), Ալիծուոատիմ<sup>38</sup> (*AKT* 5, 56), Կակարովա<sup>39</sup> (kt 93/k 604), Կուբունաս<sup>40</sup> (*AKT* 6, 491), Կուրուսա<sup>41</sup> (kt r/k 1), Կուսսարա<sup>42</sup> (*AKT* 6, 149, *AKT* 6, 491), Մամմա<sup>43</sup> (*Adana* 237ö, *AKT* 5, 21, *CCT* 5, 30°, kt g/k 25, *TPAK* 1, 50), Նիխրիյա<sup>44</sup> (*AKT*

---

<sup>34</sup> Քաղաքը հավանաբար գտնվել է Խախուումի ու Թեզարամայի միջակայքում:

<sup>35</sup> Հավանաբար նույն է, ինչ հետագայում Միջագետքի հյուսիսարևմտյան շրջաններում բազմիցս հիշատակված Խառան քաղաքը՝ Եղեսիա-Ուրֆայից հարավ:

<sup>36</sup> Խուրամա կամ Խուրմա քաղաքը խեթական Խանդիտասուր աստծո պաշտամունքի վայրն էր: Հավանաբար գտնվում էր Քանեշից հարավարևելք ընկած տարածքներում՝ ներկայիս Էլբիստանի հովտում, Թեզարամայից ոչ շատ հեռու: Քաղաքի մասին տե՛ս **RGTC VI**: 124-126, **Barjamovic 2011**: 180-187:

<sup>37</sup> Քաղաքը հավանաբար գտնվել է ներկայիս Դիարբեքիրի նահանգի տարածքում, տե՛ս **Forlanini 2004**: 412-413:

<sup>38</sup> Տեղեկությունների սակավության պատճառով դժվար է բնակավայրը որևէ կերպ տեղորոշել:

<sup>39</sup> Ինչան և նախորդ դեպքերում, այս բնակավայրի մասին տեղեկությունները շատ սակավ են, իսկ տեղորոշումը՝ առայժմ անհնարին:

<sup>40</sup> Քաղաքում եղել է աշշուրցի առևտրականների կայան: Այն տեղորոշվում Կարախնայի մոտ, տե՛ս **Barjamovic 2011**: 267-270:

<sup>41</sup> Տեղադրության համար որևէ կրվան չկա:

<sup>42</sup> Կուսսարա կամ Կուսսար քաղաքի պատմության և տեղադրության մասին տե՛ս գրքի 1.3. Ենթագլխում (Աշշուրյան («կապադովլյան») աղբյուրները Կուսսարայի մասին):

<sup>43</sup> Քաղաքում եղել է աշշուրցի առևտրականների վարարդում (արք.՝ առևտրական կայան, տե՛ս **CAD** 20: 397): Տեղադրության մասին տե՛ս **Քոյսյան 2022**: 65, ձ. 156:

<sup>44</sup> Քաղաքը հիշատակվել է նաև խեթական աղբյուրներում: Նիխրիյայի մոտ է Ք.ա. 1234/3 թ. տեղի ունեցել խեթա-ասորենստանյան ճակատամարտը: Գտնվել է Հյուսիսային Միջագետքի հյուսիս-արևմուտքում, տե՛ս **Քոյսյան 2022**, 193-194, ձ. 371:

5, 21, *TPAK* 1, 50), Τιαխատիմա<sup>45</sup> (*CCT* 1, 29), Τιοτροιαխադ-ηում<sup>46</sup> (kt 92/k 1036, kt n/k 468), Սուկովի<sup>47</sup> (kt 93/k 604), Սուպանա<sup>48</sup> (*KUG* 24), Սալախսուվա<sup>49</sup> (*AKT* 6, 491), Սալա-տուվար<sup>50</sup> (*AKT* 5, 21, *AKT* 6, 491), Սամիսունա<sup>51</sup> (kt 93/k 604), Վասխանիյա<sup>52</sup> (*TC* 3, 60), Վախսուսանա<sup>53</sup> (*AKT* 5, 5, *AKT* 5,

---

<sup>45</sup> Քաղաքը հիշատակվել է նաև խեթական աղբյուրներում, տե՛ս **RGTC VI:** 295: Եղած սակավաթիվ տվյալները բավարար չեն Պախատիման տեղորոշելու համար:

<sup>46</sup> «Կապադովլյան» աղբյուրներում այն հանդես էր գայիս որպես տարածաշրջանի կարևորագոյն առևտրական կենտրոններից մեկը: Պուրուխադրումը հիշատակվել է նաև խեթական աղբյուրներում (Պուրուխանդա): Ք.ա. XX-XVIII դդ. Փոքր Ասիայի հզոր պետություններից մեկի մայրաքաղաքն էր: Պուրուխանդան (Բուրուխաթրում) հավանաբար գտնվել է ներկայիս Աճեմիյութ հնավայրի տեղում (ներկայիս Թուրքիայի Ակսարայ նահանգում), տե՛ս **RGTC VI:** 323-324, **Barjamovic 2011:** 357-378:

<sup>47</sup> Եզակի բնույթ կրող այդ տեղեկությունը բնակավայրը տեղորոշելու հնարավորություն չի տալիս:

<sup>48</sup> Քաղաքի եզակի հիշատակությունը այն տեղորոշելու հնարավորություն չի տալիս: Հավանաբար գտնվում էր Թեգարամայի մոտ, տե՛ս **Barjamovic 2011:** 128:

<sup>49</sup> Քաղաքը հիշատակվել է նաև խեթական աղբյուրներում, տե՛ս **RGTC VI:** 332: Դատելով «կապադովլյան» աղբյուրերից՝ գտնվել է Քանեշից հարավարևելք՝ դեպի Խուրամա տանող ճանապարհի վրա:

<sup>50</sup> Խեթական աղբյուրներում այն հիշատակվել է որպես Սալատիվարա: Քաղաքը գտնվում էր Քանեշից հարավ-արևմուտք ընկած տարածներում, հավանաբար ավելի մոտ էր Պուրուխանդային: Բնակավայրի տեղադրության վերաբերյալ տե՛ս **RGTC VI:** 333-334:

<sup>51</sup> Քաղաքը խեթական աղբյուրում հիշատակվել է որպես Սամիսանա, տե՛ս **RGTC VI:** 338: Սակայն եղած նյութը բավարար չէ Սամիսունան տեղորոշելու համար:

<sup>52</sup> Վասխանիյան հիշատակվել է նաև խեթական աղբյուրներում, տե՛ս **RGTC VI:** 477-478: «Կապադովլյան» աղբյուրներում (*CCT* 5, 15b, kt 93/k 776, *KTP* 14, kt g/k 185) հիշատակվել է նաև Վասխանիյայի արքան: Քաղաքում կար առևտրական վարարդուում: Գտնվում էր Քանեշից արևմուտք՝ ներկայիս Քիրշեհիրի նահանգի տարածքում, տե՛ս **Barjamovic 2011:** 317-326:

<sup>53</sup> Վախսուսանան Քանեշից ու Պուրուխադրումից հետո ամենահաճախ հիշատակվող քաղաքն է «կապադովլյան» տեքստերում: Տե՛ս **Barjamovic**

21), Վիլուսնա<sup>54</sup> (CCT 1, 29), Տալպա<sup>55</sup> (KUG 24), Տիբուրզիյա<sup>56</sup> (kt r/k 1), Տիմելկիյա<sup>57</sup> (AKT 6, 491), Տիմնիյա<sup>58</sup> (AKT 5, 21):

**Աշշուրյան «կապադովկյան» աղբյուրներ, որտեղ առկա են տվյալներ Թեգարամայի մասին:**

**kt 83/k**

### **Գիտական տառադարձումը՝**

[*a-na kà-ri-im*] *Kà-n[i-iš] um-ma kà-ru-um Té-ga-ra-ma-ma ni-ša-me-  
ma ru-ba-um ù ru-ba-tum [.....] a-ba-ù-ni be-lu-ú-ni a-tù-nu be-l[u-ni]  
ki-ma ma-tum sà-hi-at-ni a-na a-ša-ri-ku-nu ni-iš-pu-ra-am A-šur-na-  
da ù Ku-ra ši-ip-ri-ni eṭ-ra'-ma mi-ma a-qá-ti ši-ip-ri-ni ú-lá i-dí-  
[nu]<sup>59</sup>.*

### **Թարգմանություն**

Քանեշի կարում Թեգարամայի կարումից: Լսել ենք, որ թա-  
գավորը և թագուհին [...]։ Հարգելի՛ հայրեր և դիարք, մեր  
դիարք. քանի որ երկիրը ապստամբության մեջ է՝ գրում ենք

---

**2011:** 339-350: Քաղաքում եղել է աշշուրյի առևտրականների կարում։ Մեկ անգամ այն հիշատակվել է նաև խեթական աղբյուրում, տե՛ս **RGTC VI:** 471։ Տեղորշվում է Անկարայից հարավ ընկած տարածքներում։

<sup>54</sup> Քաղաքը հիշատակվել է նաև Վոլոսնա, Վարունա ծևերով։ Եղած նյու-  
թը բավարար չէ քաղաքի տեղորշման համար։

<sup>55</sup> Հավանաբար գտնվում էր Թեգարամայի մոտ, տե՛ս **Barjamovic 2011:** 128։

<sup>56</sup> Տիբուրզիյան հիշատակվել է նաև խեթական աղբյուրներում, տե՛ս **RGTC VI:** 426։ Հավանաբար գտվում էր Թեգարամայի մոտ։

<sup>57</sup> «Կապադովկյան» աղբյուրներում բազմաթիվ հիշատակություններ կան այդ քաղաքի մասին, տե՛ս **Barjamovic 2011:** 164-169։ Տիմելկիյան մոտ է գտնվել Խախիսոմին՝ դեպի Խորամա տանող ճանապարհի վրա։ Խեթա-  
կան աղբյուրներում այն հիշատակվել է Տամալկիյա անվան տակ, տե՛ս **RGTC VI:** 391։

<sup>58</sup> Քաղաքի եզակի հիշատակությունը այն տեղորոշելու հնարավորություն  
չի ընձեռում։

<sup>59</sup> Տե՛ս **Barjamovic 2011:** 132, ծ. 419։

ձեզ աջակցության ակնկալիքով: Փրկե՛ք մեր նամակադար-ներին՝ Աշշուր-նադային և Կուրային: Նրանք մեր նամակա-դարներին ոչինչ չեն դվել:

\* Նամակից պարզ է, որ Թեգարամայի աշշուրական գաղութի ներկայացուցիչները օգնության խնդրանքով դիմում են աշշու-րական առևտրական ցանցի կենտրոն՝ Քանեշի գաղութի ավագանու ներկայացուցիչներին՝ բարդ իրավավակում խնդրելով նրանց օգնությունը: Հավանաբար անհանգիստ վի-ճակը վերաբերում էր Թեգարամային:

### CCT 5, 3b

(I. 1-15)

#### Գիտական տառադարձումը՝

*a-na I-na-a qí-bi-[ma] um-ma A-šúr-re-sí-ma ki-ma té-er-ta-kà a-na Za-al-pá i-li-kà-ni um-ma a-ta-ma a-ma-kam lá wa-áš-ba-tí ra-dí-ú a- ma-kam e-mu-ru-kà-ma i-a-um a-na-kam li-bi e am-ra-aş a-na Té-ga- r[a-ma] e-tí-iq-ma i-na Té-ga-ra-ma lu wa-áš-ba-tí ki-ma ú-mu da-nu- ni ù ša Šu-Sú-en<sub>6</sub> ra-ma-šu lá fá-bu-ni šú-ḥa-ra-am Šu-Sú-en<sub>6</sub> ù am- tám i-na Za-al-pá e-ta-zí-ba-am<sup>60</sup>.*

#### Թարգմանություն

Աշշուր-ունդից հննայային: Քանի որ քո նամակը դեղ հասավ Զալպա, որդեռ դու գրում ես. «Դու չպետք է կանգ առնես այնդեղ: Ուղեկցորդները կնկարեն քեզ այնդեղ, և ես չեմ ցանկանում այսդեղ անհանգստանալ այդ կապակցությամբ: Գնա Թեգարամա և մնա Թեգարամայում»: Քանի որ ան- հանգիստ ժամանակներ են, իսկ Շու-սուենը վագառողջ է, ես նրա ծառային և սպրկուհուն թողել եմ Զալպայում:

\* Տեքստում խոսքն այն մասին է, որ աշշուրցի առևտրական Աշշուր-ունդին խորհուրդ է տալիս մեկ այլ առևտրականի՝

<sup>60</sup> Տե՛ս Barjamovic 2011: 110, ձ. 314:

Իննայային, որ նա հեռանա Զալպայից դեպի Թեգարամա, որը, իր կարծիքով, ավելի ապահով էր այդ պահին:

### kt 92/k 1036

#### Գիտական տառադարձումը՝

(I. 3-20): *a-hu-a a-tù-nu šu-ma a-ma-kam ta-le-e-a am-tám' ú šú-úh-ra-am ma-lá ta-le-e-a-ni šu-ul'-ha-ni-im a-di KÙ.BABBAR 10 GÍN gu₅-um-ra-ma a-na Té-ga-ra-ma ú Ha-tim šé-bi-lá-ni-ši šu-ma ma-şa-ra-tum da-na-ma a-na ú-şa-im lá na-tú ú-ṭa-tim ša ša-na-at šu-up-kà-ší-im šú-ha-ru a-na Lu-hu-za-tí-a li-ik-šu-du-ni<sup>61</sup>.*

#### Թարգմանություն

Թանկագի՞ն եղբայրներ, եթե հնարավոր է դո՛ւս բերեք այդպեղից սպրկուիոն ու երեխաներին, եթե ի վիճակի եք: Պայմանավորվեք 10 սիկղ<sup>62</sup> արծաթի մասին, և թող նա բերի այն կա՞մ Թեգարամա, կա՞մ Խաթթում<sup>63</sup>: Եթե պահակակեդերը ամուր են, և հնարավոր չէ ճամփորդել, ապա կշռեք նրա համար հացահապիկ մեկ բարվա համար: Ծառաները պեսք է ինձ հասնեն Լուխուզապրիյայում:

\* Աշշուրցի առևտրականը խնդրում է իր եղբայրներին հնարավորության դեպքում իր ստրկուիոն ու իր երեխաներին, տալով գումար, ուղարկել կա՞մ Թեգարամա, կա՞մ Խաթթուսա, իսկ եթե դա չհաջողվեր, ապա նրանց հաց տալ: Առևտրականը ինքը հավանաբար դժվարանում էր ժամանել Քանեց կամ ուղևորվում էր Լուխուզատուիյա առևտրական գործերով, այդ պատճառով խնդրում էր իր եղբայրներին հոգ տանել իր ստրկուիոն ու երեխաների մասին:

<sup>61</sup> Barjamovic 2011: 126, δ. 385:

<sup>62</sup> Սիկղը (շեքել) քաշի միավոր է: Հավասար է 8.33 գրամի:

<sup>63</sup> Նկատի ունեն Խաթթուսա քաղաքը, որտեղ նույնպես աշշուրցի առևտրականների գաղութ (կարում) կար:

## Adana 237ö

(I. 10-20)

### Գիտական տառադարձումը՝

*a-li wa-áš-bu-ni qá-at-ku-nu li-iş-ba-sú-nu šu-ma a-Ma-a-ma Ší-lá-  
dIM lu-kà-ší-sú-<nu> lu a-Za-al-pá lu a-Te-ga-ra-ma lá i-bi-a-at lu-  
ká-ší-sú-nu<sup>64</sup>.*

### Թարգմանություն

Որդեղ էլ որ նրանք զդովեն, քո ձեռքը պետք է նրանց հասնի: Եթե նրանք գնան Մամմա, թող Սիլի-Աղադը նրանց հասնի: Եթե նրանք գնան Զալպա կամ Թեզարամա, նա չպետք է հապաղի, այլ նա պետք է հասնի նրանց:

\* Այս տեքստում խոսքը հավանաբար աշշուրցի առևտրականի պարտապանների մասինէ, որոնք խուսափում էին իրենց պարտատիրոջից: Եվ նա տարբեր քաղաքներում գտնվող իր մարդկանց միջոցով փորձում էր նրանց գտնել:

## Kt 94/k 1238 (AKT 6a, 149)

### Գիտական տառադարձումը՝

*i-na Té-ga-ra-ma wa-áš-Γba<sup>1</sup>-ku ... (I. 11-16): i-na <sup>d</sup>UTU-ši tup-pí ta-  
ša-me-a-ni A-lá-ħu-um lu a-na Հu-ra-ma lu a-na Ku-ša-ra a-na sé-ri-  
a li-li-kam<sup>65</sup>.*

### Թարգմանություն

Ես կանգ եմ առել Թեզարամայում ... Այն օրը, երբ որ դու լսես իմ նամակի մասին, Ալի-ախումը պետք է գա և հանդիպի ինձ հետ կամ Խուրամայում, կամ Կուսսարայում:

\* Աշշուրցի առևտրականը, երբ որ գրում էր այդ նամակը, գտնվում էր Թեզարամայում: Սակայն հետագայում պետք է այցելեր Խուրամա և Կուսսարա քաղաքները, որտեղ նրա հետ պետք է հանդիպեր Ալի-ախումը:

<sup>64</sup> Barjamovic 2011: 116, δ. 348:

<sup>65</sup> Barjamovic 2011: 126, δ. 386:

## CCT 5, 30a

(I. 1-17)

### Գիտական տառադարձումը՝

1 GÍN KÙ.BABBAR *i-na Ma-a-ma i-na kà-ší-im a-di-in* 2 1/6 GÍN  
 KÙ.BABBAR *im-ší-ma Me-ra-lí il<sub>5</sub>-qé ¼* GÍN *a-na qá-ba-im*  
 TÚG.ḤIA *i-šl-ú-ma a-dí-in* 2/3 GÍN KÙ.BABBAR *i-na Ma-a-am'* *a-*  
*É wa-áb-ri-a a-dí-in* 22 ½ ŠE KÙ.BABBAR *i-na Té-ga-ra-ma*  
 TÚG.ḤIA *a-na É.GAL-lim i-lu-ú-ma ú-lá-mì-id*<sup>66</sup>.

### Թարգմանություն

Ես դպեցի 1 սիկդ արծաթ կաշխտ-պաշլոնյային Մամմայում...  
 2 1/6 սիկդ արծաթ իր պակասիսանալովլոյան դակ վերցրեց  
 Մերալին: ¼ սիկդ ես վերցրի, երբ դանում էիք կորոները: Ես  
 վճարեցի 2/3 սիկդ արծաթ ապրուսդի համար Մամմայում:  
 Նրանք վերցրին ինձանից 22 ½ քաշ արծաթ թեզարամայում,  
 երբ կորորեղենը ուղարկեցին պալատ:

\* Աշխուրդի առևտրականը հավանաբար պատմում է իր  
 առևտրական ճանապարհորդության և գործունեության մա-  
 սին տարբեր քաղաքներում (Մամմա, Թեզարամա): Նրա  
 հիմնական ապրանքները եղել են կտորները: Խոսք կա նաև  
 Թեզարամա քաղաքի մասին, որից կարելի է ենթադրել, որ  
 Թեզարաման եղել է առանձին քաղաք-պետություն կամ են-  
 թարկվել է այլ պետության, որի դեկավարը պալատ է ունեցել  
 քաղաքում:

## KUG 24

1-13

### Գիտական տառադարձումը՝

2 ½ *ma-na ni-ga-li i-na Té-ga-ra-ma a-na É ub-ri a-dí-in* 1/3 *ma-na*  
*ni-ga-li a-na ki-ri-[í]m i-na Ta-[all]-pá* 15 GÍN *a-šar* ՚IR *i-mu-tù a-É*  
*ub-ri* 1/3 GÍN 7 ½ ŠE *a-na ki-ri-im i-Sú-pá-na* ½ GÍN *a-na ša ma-şa-*  
*ra-tim*<sup>67</sup>.

<sup>66</sup> Ulshöfer 1995: 252, Barjamovic 2011: 124, δ. 377.

<sup>67</sup> Ulshöfer 1995: 260, Barjamovic 2011: 127, δ. 387:

## Թարգմանություն

Ես վճարեցի  $2 \frac{1}{2}$  մինա<sup>68</sup> սիկդ Թեզարամայում գիշերելու համար: 1/3 մինա սիկդ վճարեցի գավաթի համար Տալպայում: Վճարեցի 15 սիկդ գիշերելու համար այն վայրում, որտեղ մահացել էր ծառան: 1/3 և  $7 \frac{1}{2}$  ցորեն գավաթի համար Սուպանայում: Կես սիկդ պահակների համար:

\* Աշշուրցի առևտրականը առևտրական գործերով այցելել էր Թեզարամա ու նրա մերձակա քաղաքները և նկարագրել այն ծախսերը, որ նա արել էր՝ այդ քաղաքներում գիշերելու համար:

**kt m/k 141**  
(I. 16-21)

## Գիտական տառադարձումը՝

ú-nu-t[ám] i-na Té-ga-ra-ma e-zí-ib-ma a-na-ku a-na Հa-tim a-ta-lá-a[k] ší-ma-am ša Հa-tim a-na-ku na-áš-a-ku<sup>69</sup>.

## Թարգմանություն

Ես թողեցի ապրանքները Թեզարամայում և գնացի Խաթթուսա: Ես անձամբ դարձ հասույթը Խաթթուսայից:

\* Աշշուրցի առևտրականի թողած տեքստը վկայում է Թեզարամայից Խաթթուսա ուղիղ կապի և երկու քաղաքներում հաստատված առևտրականների գործնական կապերի մասին:

<sup>68</sup> Մինան իին առաջավրասիական քաշի միավոր է, որը հավասար է 60 սիկդի (մոտ 0.5 կգ):

<sup>69</sup> Barjamovic 2011: 126, δ. 384:

**TPAK 1, 50**  
**Գիտական տառադարձումը՝**

a-na A-šur-e-nam qí-bi-ma um-ma Šál-ma-A-šur-ma i-na 1 me-at 14  
TÚG.HI.A ša i-na a-lim<sup>ki</sup> ta-áp-qí-da-ni 2 TÚG ša qá-tim ba-at-qú  
ŠÁ.BA 16 TÚG.HI.A i-na Ma-a-ma É Me-ra-li DUMU A-šur-mì-tí e-  
zi-ib ŠÁ.BA 6 TÚG. SIG<sub>5</sub> 30 TÚG.HI.A i-na Té-ga-ra-ma É Šál-ma-  
A-šur DUMU Il<sub>5</sub>-ba-ni e-iz-ib a-na gam-ri-a lá-šu-ma a-na Ká-ni-iš<sup>ki</sup>  
lá ú-šé-ri-ib-šu-nu a-ma-lá na-áš-pár-tí-ká 30 TÚG.HI.A ša qá-tim 15  
TÚG.HI.A SIG<sub>5</sub> i-na Ká-ni-iš a-na <sup>d</sup>UTU-e-nam IGI ší-be-e áp-qí-id 3  
TÚG.HI.A a-na ni-iš-ḥa-tim il<sub>5</sub>-qé-ú 2 TÚG É kà-ri-im il<sub>5</sub>-qé-ú 7  
TÚG.HI.A i-na pá-zu-ur-tim ú-šé-ri-ib-ma 1 ¼ GÍN.TA  
KÙ.BABBAR a-na ša ma-ṣa-ra-tim a-dř-in a-bi a-ta a-na ší-tí  
TÚG.HI.A-tí-kà i-na a-là-ki-a a-za-ku a-na ša ta-áš-pu-ra-ni um-ma  
a-ta-ma KÙ.BABBAR šé-bi<sub>4</sub>-lam lá ta-áš-ta-na-me ki-ma be-ú-lá-tù-  
a e-tár-ba-ni ù a-na gám-ri-a ú-ḥa-bi<sub>4</sub>-lu-ú a-ma-kam ša iš-tí-a uk-ta-  
i-lu-ni-ni ša-il<sub>5</sub> i-na e-nè-kà a-ṣà-ri-im a-tù-wa-ar e-lá-an 5 GÚ ša-ápt-  
tim mì-ma a-na Ha-tim ú-lá ú-šé-ri-ib a-bi a-ta KÙ.BABBAR lá tí-  
de<sub>8</sub>-e ša a-na ma-áš-kà-na-tim ha-ra-an Ni-ḥa-ri-a tū-ṣa-aş-bi-ta-ni-  
ma 3 sú-ḥa-ru-kà a-na ḥu-ru-ḥa-ší-im e-tár-bu ù KÙ.BABBAR 1 ma-  
na ḥa-al-qá-ni ù a-na-ku áš-ta-na-ku-nu a-ṣar KÙ.BABBAR 10 GÍN  
ḥa-bu-lá-ku-ni a-ta-ma tí-de<sub>8</sub>-e a-bi a-ta šu-ma sú-ba-tù-kà a-ḥu-ru a-  
na ša-ápt-tim ta-er-ṣu-nu-ma sú-ḥa-ri-kà a-na Ha-tim tur<sub>4</sub>-da-am-ma  
KÙ.BABBAR 1 GÍN li-šu le-li-a-kum ší-mu-um kà-ší-ma  
KÙ.BABBAR 10 GÍN lá ú-šé-bi<sub>4</sub>-lá-kum<sup>70</sup>.

**Թարգմանություն**

Ծալիմ-Աշշուրից Աշշուր-Էննամին: 114 կտորներից, որոնք դու  
վսկահել էիր ինձ Աշշուրում, 2 «Ճեռակերպ կտորներ» դասա-  
կարգվել էին որպես հասարակ որակի: Մնացածներից ես  
16-ը թողեցի Մամմայում՝ Աշշուր-իմի կտորի որդի Մերալիի  
դրանք: Դրանցից 6 կտորները լավ որակի էին: Ես թողեցի 30  
կտորներ Թեգարամայում Իլլ-բանիի որդի Ծալիմ-Աշշուրի  
դրանք: Ոչինչ չեմ թողնվել իմ ծախսերի համար, այդ պարզա-

---

<sup>70</sup> Barjamovic 2011: 125, ձ. 382:

ոռվ ես չթողեցի դրանք մդնեն Քանեց (պալատ): Քո նամակի համաձայն՝ ես 30 սովորական որակի կողորներ և 15 կողորներ լավ որակի Քանեշում վկաների ներկայությամբ վսղահեցի Շամաշ-Էննամիհին: Նրանք վերցրին 3 կողորներ որպես նիսխապուհարկ: Կարումի գրասենյակը վերցրեց 2 կողոր: Ես մաքսանենք ճանապարհով 7 կողորներ անցկացրի և վճարեցի 1 ¼ սիկո արծաթ յուրաքանչյուր պահակին: Իմ սիրելի՝ հայր, երբ որ ես ժամանեմ, ես կհանձնեմ մնացած քո կողորները: Այն կապակցությամբ, որ գրել ես, թե «փող ուղարկիր», չէ որ դու անընդհափ լսել ես, որ իմ շրջանառու միջոցները ծախսել եմ, և որ ես պարզբով գումար եմ վերցրել իմ ծախսերի համար: Հարցրեք այդպեղ, ով ինձ հետ էր: Քո աչքերում ես սպահուս եմ դարձել, այնուամենայնիվ, բացի 5 գրադանդ<sup>71</sup> բրդից, ես ոչինչ չեմ գրաբել Խաթթուսա: Սիրելի՝ հայր, ինչ վերաբերում է փողին, դու չես հասկանում, որ դու ես ինձ սպիհապել դուրս գալ Նիխրիյայի ճանապարհ, որպեսզի ներդրումներ անեմ, և որ քո ծառաներից երեքը հեռացել են Խուրուխաշշում, որ առնվազն 1 մինա արծաթ կորել է և ես սպիհապատ եմ եղել անընդհափ փող ներդնել: Դու գիտես, որ ես պարզը եմ առնվազն 10 սիկո արծաթ: Սիրելի՝ հայր, եթե մնացել են կողորներ, ապա դրանք փոխանակի՛ր բրդի հետ և ուղարկի՛ր քո ծառաներին Խաթթուսա, որպեսզի նրանք այնպեղ շահույթ սպանան քո համար յուրաքանչյուր սիկո արծաթի դիմաց: Շուկան փակ է, այդ պատճառով ես նոցնիսկ 10 սիկո արծաթ չեմ ուղարկել:

\* Այստեղ հստակ է, որ նամակի հեղինակն ու նամակը ստացողը ֆինանսական դժվարություններ էին կրում և այդ պահին նրանց ուղարկված ապրանքներից մեկը տեղ էր հասել Փոքր Ասիա, սակայն նրանք բավարար հավելյալ

<sup>71</sup> Տաղանդը իին չափման միավորներից է, որը հավասար է մոտ 30 կիլոգրամի: 1 տաղանդը հավասար է 60 մինայի:

գումար չունեին, որպեսզի վճարեին ապրանքի գրանցման ու մաքսազերծման համար Քանեշի պալատում: Դրա փոխարեն Շալիմ-Աշշուրը ստիպված էր իր կտորները վաճառքի հանել և ծախսել իր շրջանառության համար նախատեսված սեփական գումարը, որպեսզի կարողանար վճարել պարտքերը: Որոշ իմաստով սա նաև նամակ-հաշվետվություն է որդու առևտրական գործարքների վերաբերյալ, որը նա ներկայացնում է իր հորը:

## 1.2. ԱՇՅՈՒՐՅԱՆ («ԿԱՊԱԴՈՎԿՅԱՆ») ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՍԱՄՈՒԽԱՅԻ ՄԱՍԻՆ

Խեթական պետության հյուսիսարևելյան մասի կարևորագույն վարչական և հոգևոր կենտրոններից էր Սամուխա քաղաքը, որի մասին հիշատակություններ կան նախախեթական ու խեթական ժամանակաշրջանից: Համաձայն «կապադովկյան» աղյուսակների՝ Սամուխան ակտիվ առևտրական կապեր է ունեցել տարածաշրջանի առևտրական կենտրոնների՝ Քանեշի (Նեսա), Լուխուզատտիյայի, Կարախնայի և այլ քաղաքների հետ<sup>72</sup>: Սամուխայում կար նաև աշշուրյան առևտրականների կայան՝ վարարդում: Համաձայն «կապադովկյան» աղյուրների՝ Սամուխան եղել է բրդի ու անագի առևտրի կենտրոններից մեկը Ք.ա. II հազարամյակի սկզբին<sup>73</sup>:

Աշշուրցի առևտրական Ամուր-շամաշը նշում է, որ ինքը ապրանքների պահեստ ուներ Սամուխայում<sup>74</sup>: Մեկ այլ առևտրական՝ Շալիմ-ախումը նշում էր, որ ինքը տուն ուներ Սամուխայում<sup>75</sup>: Քաղաքի մասին հիշատակությունները շատ են հատկապես «կապադովկյան» kt 93/k արխիվում (Ալիախումի որդի Աշշուր-թակլակուի արխիվը), որը պատկանում էր առևտրականների մի ընտանիքի, որը հիմնականում բրդի առևտրով էր զբաղվում:

Հետագայում Սամուխան բազմիցս հիշատակվել է նաև խեթական աղյուրներում: Խեթական պետության ժամանակաշրջանում Սամուխան ծաղկում է ապրում և՝ որպես վարչական, և՝ որպես հոգևոր կենտրոն:

<sup>72</sup> Տե՛ս Barjamovic 2011: 136:

<sup>73</sup> Տե՛ս Lassen 2010, Barjamovic 2011: 15:

<sup>74</sup> Տե՛ս Kt 87/k 582:

<sup>75</sup> Տե՛ս AKT 3, 77:

Քաղաքի առաջին հիշատակություններից մեկը տրված է Խաթթիի արքա Տելեպինուի (Ք.ա. XV դ. II կես) տեքստում<sup>76</sup>, որտեղ թվարկվել են մի քանի քաղաքներ, որոնց մեջ էր նաև Սամուխան:

Անդրադառնանք Սամուխա քաղաքի տեղադրության հարցերին: «Կապադովկյան» աղբյուրներն այս խնդրի լուծումը չեն տալիս, սակայն դատելով այդ աղբյուրներից՝ ակնհայտ է, որ քաղաքը գտնվել է Կարախնա ու Խուլամա քաղաքների մոտ<sup>77</sup>: Իսկ խեթական KUB XXV 32+ տեքստում նկարագրվում է, որ Կարախնա քաղաքի ծիսական արարողությունները տեղի են ունենում նաև Սամուխայում, որը հավանաբար խոսում է այն մասին, որ այդ քաղաքները մոտ են գտնվել իրար: Իր հերթին Կարախնան մոտ է գտնվել Տապիկային, որը հստակ տեղորշվում է ներկայիս Մաշտիյոյուք հնավայրի տեղում (մոտ 20 կմ Զիլե (Զելա) քաղաքից հարավ): Կարևոր է նաև խեթական արքա Խաթթուսիի III-ի տեքստը, որտեղ տրվում է, որ իր և իր զարմիկի միջև ընթացող պատերազմի ժամանակ վերջինս Մարասանտիյա քաղաքից (նոյնանուն գետի (Մարասանտիյա=Հալիս) ափին) հեռանում և ապաստանում է Սամուխայում<sup>78</sup>:

Խեթական KBo I 58 (II 4'-5') տեքստի մի հատվածում Սամուխան տրվել է անմիջապես Սարհիսայից հետո (որը տեղորշվում է Սեբաստիայի մոտ գտնվող Քուշաքլը հնավայրի տեղում՝ Փոքր Հայքի տարածքում): Ավելին, խեթական միջազգային պայմանագրերում, երբ աստվածներին որպես վկա էին բերում, Սամուխայի Ամպրոպի աստվածը սովորաբար տրվում էր անմիջապես Սարհիսայի Ամպրոպի աստծուց հետո: Գոյություն ունի նաև բնակավայրերի ցուցակ ներկայացնող տեքստի բեկոր (բնույթը պարզ չէ), որտեղ Սամուխան

<sup>76</sup> Տե՛ս KBo III 1 21 (Hoffmann 1984: 40-41):

<sup>77</sup> Տե՛ս Barjamovic 2011: 151-154:

<sup>78</sup> Տե՛ս KBo VI 29 II 18-20:

ընդգրկող հատվածը այսպիսին է՝ Նենիսանկուվա, Ադունուվա, Ապշիսա, Սարիսա և Սամուխա<sup>79</sup>:

Խեթական KUB XXXI 79 տեքստում նկարագրվում է ապրանքների տեղափոխումը գետով, որով նավարկություն էր իրականացվում Պիտտիյարիգա, Արծիյա ու Սամուխա քաղաքների միջև: Այս տեքստը պատկերացում է տալիս, որ քաղաքը գտնվել է գետի ափին: Ասվում է, որ գետը որոշ հատվածներում ծանծաղ էր, և նավակները կարող էին շրջվել: Սամուխայից ապրանքները տեղափոխվում էին ավելի մեծ նավակի վրա: Տեքստի վնասվածության պատճառով անհասկանալի է, թե այնուհետև այդ ապրանքները ուր պետք է տարվեին<sup>80</sup>: Պիտտիյարիգայից Սամուխա գետային ճանապարհի առկայությունը կարևորագույն նշանակություն ունի ինչպես վերոհիշյալ երեք քաղաքների՝ միևնույն գետի ափին գտնվելու տեսանկյունից, այնպես էլ կարող է հնարավորություն ընձեռել՝ ճշգրտելու այդ քաղաքների հետ այլ տեքստերում նշված շատ այլ բնակավայրերի մոտավոր տեղադրությունը: Երկար ժամանակ տեքստում հիշատակված նավարկելի գետը նույնացվում էր Եփրատի հետ, և վերոնշյալ քաղաքները որոնում էին Եփրատի վերին հոսանքներից մինչև Մալաթիա ընկած հատվածում:

Վերջին աշխատությունների մեջ Սամուխան սովորաբար տեղորոշվում է Սեբաստիայի նահանգում՝ Քայալըփիընար (տեղանունը կարելի է թարգմանել որպես «Ժայռոտ աղբյուր») բնակավայրի մոտ գտնվող հնավայրի տեղում: Ա. Մյուլլեր-Կարպեն առաջինն էր, որ առաջարկեց տեղադրել Սամուխան

<sup>79</sup> Տե՛ս Քոսյան 2004, 123:

<sup>80</sup> Տե՛ս Lebrun 1975: 217-218, Gurney 2003: 123-124. KBo IV 13 տեքստում նույնպես տրված են Պիտտիյարիգա, Արծիյա, Սամուխա և այլ բնակավայրեր, ինչը խոսում է այն մասին, որ այդ քաղաքները մոտ են գտնվել իրար և սերտ կապեր են ունեցել՝ դեռ վաղ ժամանակներից սկսած:

վերոնշյալ հնավայրի տեղում<sup>81</sup>, որը գտնվում է Հալիսի ափին՝ Քուշաքը հնավայրից (Սարիսա) ոչ հեռու<sup>82</sup>:

Քայալըփընարի հնավայրը<sup>83</sup> մոտ 20 հեկտար է զբաղեցնում: Այն Հալիս գետի հյուսիսային ափին է՝ Սեբաստիայից մոտ 45 կմ հարավ-արևմուտք<sup>84</sup>: Հնավայրի պեղումների ժամանակ հայտնաբերվել են միջին և ուշբրոնզեդարյան ժամանակաշրջանով թվագրվող գտածոներ: Հնավայրի վաղինեթական ժամանակաշրջանով (Ք.ա. XVIII-XVII դդ.) թվագրված շերտն իր ավարտն է գտել ավերիչ կրակի մեջ: Որոշ ժամանակ անց վայրը նորից բնակեցվել է, սակայն այս անգամ այն շրջապատվել է նոր, ավելի ամուր և լայն պարիսպներով: Սա խոսում է այն մասին, որ Սամուկան կարևոր դիրք է զբաղեցրել Խաթթիին հյուսիս-արևելքից և հյուսիսից եկող վտանգներին դիմագրավելու ճանապարհին, և խեթերն այն ամրացրել են: Բնակավայրն ավերվել է նաև նորինեթական ժամանակաշրջանում: Կարելի է կարծել, որ այն հետևանք է հայասցիների ներխուժման, որն արձանագրվել է խեթական KBo VI 28 տեքստում, որում տրված է, որ նրանք արշավել էին դեպի խեթական Վերին Երկիր և Սամուկան իրենց սահմանը դարձրել: Այդ ամենից հետո բնակավայրում տեղի են ունեցել նոր վերականգնողական աշխատանքներ: Պեղումների ընթացքում հայտնաբերվել են նաև մի մեծ շինության հետքեր, որն ավերվել և կրկին վերականգնվել է մի քանի անգամ: Հավանաբար այն եղել է պալատ<sup>85</sup> կամ տաճար:

<sup>81</sup> Ste' u Müller-Karpe 2000: 355-365:

<sup>82</sup> Ste' u De Martino 2009: 1-2:

<sup>83</sup> Հնավայրը սխալմամբ տեղորոշվել է արևելյան Կապադովիկիայում, այնինչ այն Փոքր Հայքի տարածքում է՝ Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում: Հայկական լեռնաշխարհի արևմտյան սահմանների մասին տե՛ս Յօգրաբյան 1979: 14:

<sup>84</sup> Ste' u նաև Yakar, Gürsan-Salzmann 1979:

<sup>85</sup> Սամուկան գտնվող պալատի մասին է վկայում նաև խեթական KBo XLV 179 տեքստը: Հրահանգի տեսքով կազմված տեքստում թվարկվում են

Հնավայրից գտնվել են նաև արձանագրություններ<sup>86</sup>: Դրանք ունեն հիմնականում ծիսակարգային նշանակություն: Հնավայրում հայտնաբերվել է նաև «կապադովկյան» ժամանակաշրջանով թվագրվող մի աղյուսակի մաս (Կր 05/120)<sup>87</sup>: Գտնվել է նաև բավականին վնասված կավե սեպագիր աղյուսակ (Կր 05/226): Խուտիերեն այդ տեքստում խոսքը Կիցցուվատնայի (Կիլիկիայի արևելքում) և Ալալախի (Ասորիքի հյուսիս-արևմտաքում) տարածքում ռազմական գործողությունների մասին է<sup>88</sup>: Գտնվել է նաև խեթական հոգևոր ծիսակարգային բնույթի մի տեքստ<sup>89</sup>: Այն ներկայացնում է մի արարողություն, որը կապված է հշտարի՝ «աստվածային տիրուհու» պաշտամունքի հետ: Տեղը, որտեղ անցկացվում էր արարողությունը, եղել է հշտարի պաշտամունքի կենտրոններից մեկը: Այն կարևոր վայր էր, քանի որ արարողությանը մասնակից էր նաև արքան<sup>90</sup>: Խաթթիում հշտար աստվածուհու գլխավոր պաշտամունքի վայրը Սամուխա քաղաքն էր, որը, ինչպես և հնավայրը, գտնվում էր գետի ափին<sup>91</sup>: Ծիսական տեքստը թվագրվում է միջինխեթական ժամանակա-

«Խոտայի արքայի ծառաները», «Սապուխայի (=Սամուխայի) պալատի մարդիկ», Վատարունա քաղաքը և այլն: St'eu Քոսյան 2004, 132:

<sup>86</sup> St'eu Müller-Karpe et al. 2006: 227-231:

<sup>87</sup> Արձանագրության մեջ տեղեկություն կա Տամուրիյայի կողմից աշշուցի մի առևտրականից կատարված ստրուկների գնման մասին: St'eu Sommerfeld 2006: 231-233, Barjamovic 2011: 152:

<sup>88</sup> Անհայտ է, թե ով է գեկուցողը: Տրված է, որ ռազմական գործողությունները վարում էին Էսիլ-Տենոն և Իի-Չարրուման, որոնք ոչ մի այլ տեղ չեն հիշատակվել: Նրանք լեռներով ճանապարհ են ընկել դեպի ծով: Իրադարձությունները որևէ այլ տեղ չեն նկարագրվել, և կարելի է դրանք թվագրել Թուդիսայիշա I-ի ժամանակաշրջանով (Ք.ա. XIV դ. սկիզբ): Նա նոյնպես արշավել է դեպի Հայեա, և այդ իրադարձությունները վերաբերել են նաև Ալալախին: St'eu Wilhelm 2006: 233-236:

<sup>89</sup> St'eu Müller-Karpe 2000: 361:

<sup>90</sup> St'eu Քոսյան 2004, 149:

<sup>91</sup> St'eu Müller-Karpe 2000: 355-365:

շրջանով<sup>92</sup> և լրացուցիչ հիմք է Սամուխան Քայալըփընարի տեղում տեղադրելու համար:

Հնավայրում հայտնաբերվել են նաև կավե դրոշմակնիքներ: Դրանք բաժանվում են 3 խմբի՝ կնիքներ՝ լուսիական հիերոգլիֆներով գրված, խեթական սեպագրով և երկգիր<sup>93</sup>:

Տեղումների ժամանակ գտնվել է նաև կրաքարե մի քարակտոր (1,2 մ բարձրությամբ և 95 սմ լայնությամբ), որի վրա կա ռելիեֆային պատկեր՝ գահին նստած կնոջ կերպարով<sup>94</sup>:

\*\*\*

Սամուխա քաղաքի մասին «կապադովկյան» տեքստերում, ինչպես և Թեզարամայի դեպքում, տվյալները քիչ են: Որոշ տեքստերում ուղղակի տրված է քաղաքի անունը: Որոշ տեքստեր տրվել են հատվածական, միայն այն մասերը, որոնցում կան տեղանունների մասին տեղեկություններ: Կան նաև վնասված փոքր տեքստեր, որոնցում հիշատակվել է քաղաքը: Այդ պատճառով որոշ տեքստեր ուղղակի չեն ներառվել գրքում, քանի որ պատմագիտական տեսանկյունից մեծ արժեք չեն ներկայացնում: Տեքստերի մեծ մասը պարունակում են տեղեկություններ առևտրական գործարքների, միջանձնային հարաբերությունների, աշշուցի առևտրականների ու տեղական կառավարիչների միջև հարաբերությունների և այլնի մասին:

Սամուխան հիշատակվել է հետևյալ քաղաքների հետ՝ Զիմիսխունա<sup>95</sup> (kt 93/k 239), Լուխուզատտիյա (kt 92/k 3, kt

<sup>92</sup> St' u Müller-Karpe et al. 2006: 212:

<sup>93</sup> St' u Herbordt, Alkan 2000: 89-98, Müller-Karpe 2000: 355-365:

<sup>94</sup> St' u Müller-Karpe 2009: 112-114:

<sup>95</sup> «Կապադովկյան» աղբյուրներից հայտնի Զիմիսխունան խեթական աղբյուրներում տրվել է որպես Զիպիսխունա կամ Զապիսխունա: Այն մոտ է գտնվել խեթական պետության հյուսիսարևելյան Տապիգգա (Մաշտ-հյութ հնավայր) քաղաքին: Հավանաբար գտնվել է Դուրխումիտից դեպի Վախսուսանա տանող ճանապարհի վրա:

93/k 84, kt 93/k 237), Խաքա (kt 93/k 60), Խատիկախորա<sup>96</sup> (kt 92/k 3), Խուլրամա (kt 92/k 3, TC 1, 10), Կարախնա<sup>97</sup> (kt 92/k 3), Կուբուրնատ (kt 92/k 3), Կուսարա (AKT 4, 71, TC 1, 10), Կուտիյա<sup>98</sup> (kt 92/k 3), Լակունա (KUG 19), Սինախուտում<sup>100</sup> (kt 93/k 239), Վախսուսանա (kt 93/k 237), Տավինիյա<sup>101</sup> (kt 93/k 239), Տիլմրա<sup>102</sup> (TC 1, 10), Տիմելիյա (OLZ 60, 155)<sup>103</sup>:

<sup>96</sup> Եղած սակավաթիվ տվյալները քաղաքը տեղորշելու հնարավորություն չեն ընձեռում:

<sup>97</sup> Կարախնան տեղորշվում է Ներկայիս Ովուսարայ բնակավայրի մոտ: Այն գտնվել է Սամոլսայից հյուսիս-արևմտոք: Կարախնայի մասին տե՛ս RGTC VI: 177-180, RGTC VI/2: 66, Alp 1983: 43-46:

<sup>98</sup> Քաղաքի մասին սակավ տեղեկությունները այն տեղորշելու հնարավորություն չեն տալիս: Այն չի նշվել նաև խեթական ժամանակաշրջանի տերստերում: Սակայն Կուտիյայի հիշատակությունները Սամոլսա ու Կարախնա քաղաքների հետ թույլ են տալիս այն տեղադրել այդ քաղաքներին առավել մոտ տարածքներում՝ հետագայի խեթական Վերին Երկրի տարածքում:

<sup>99</sup> Քաղաքի եզակի հիշատակությունը այն տեղորշելու հնարավորություն չի ընձեռում:

<sup>100</sup> Սինախսուտումը կամ Սանախուիտուան գտնվում էր Խաթթուսայից հյուսիս-արևելք: Այն տարածաշրջանի կարևոր քաղաքական կենտրոններից մեկն էր: St'e u Barjamovic 2011: 286-291, RGTC VI: 342:

<sup>101</sup> Քաղաքը հավանաբար գտնվել է Խաթթուսայից արևմուտք ընկած տարածքում, տե՛ս Barjamovic 2011: 297-305: Տավինիյա կամ Տամնիյա քաղաքը հիշատակվել է նաև խեթական աղբյուրներում, տե՛ս RGTC VI: 416-418:

<sup>102</sup> Տիլմրա քաղաքը հավանաբար հետագա խեթական աղբյուրներում հիշատակվել էր որպես Տիլմրա, որը գտնվում էր խեթա-կասկական սահմանային գոտում: Տիլմրայի մասին տե՛ս RGTC VI: 421-422:

<sup>103</sup> St'e u Barjamovic 2011: 151, δ. 502:

## Աշշուրյան «կապադովկյան» աղբյուրներ, որոնցում առկա են տվյալներ Սամուխայի մասին

**Kt 92/k 3**

(I. 1-27)

### Գիտական տառադարձումը՝

½ GÍN KÙ.BABBAR *i-na Hu-ra-ma a-na É ub-ri a-dí-in* 12 GÍN pá-zu-ur-ti TÚG.HI.A *i-na Lu-ğu-za-ti-a a-na I-ku-pí-a DUMU Da-a-a a-dí-in* 3 GÍN AN.NA [*a-na ANŠE*]. HI.A *wa-bar-šu [i-na .....] a-dí-in* [*x GÍN AN.NA*] *i-ti-tù-ri-im* [*x GÍN AN.]NA a-na É [wa]-áb-ri i-na ḫa<sup>1</sup>-mu-ḥa a-dí-in* 1 GÍN KÙ.BABBAR *a-na ig-ri ša bi<sub>4</sub>-il<sub>5</sub>-tim a-dí ḫa-mu-ḥa a-dí-in* 3 GÍN AN.NA *i-na ḫa-tí-kà-it-ra a-dí-in* 1 ½ GÍN AN.NA *i-na Ku-tí-a a-ḥa-za-nim a-dí-in* 12 GÍN AN.NA *i-na Kà-ra-ah-na a-na GAL sí-ki-tim a-dí-in iš-tù Kà-ra-ah-na a-dí Ku-bu-ur-na-[at]* 3 GÍN KÙ.BABBAR *a-na ša bi<sub>4</sub>-lá-tim ik-šu-ud* 6 GÍN KÙ.BABBAR *ṭa<sup>1</sup>-na ni-is-ḥa-tim a-ba-té š[a .....] a-dí-in* 2 GÍN *a-na É [ub-ri] a-dí-in* 2 GÍN *a-na É [ub-ri]a-dí-in*<sup>104</sup>.

### Թարգմանություն

Ես վճարեցի կես սիկդ արծաթ՝ Խուրամայում գիշերելու համար: Ես Լուհուզապուրիյայում վճարեցի Դայայի որդի Իկունպիյային 12 սիկդ կրորեղենի մաքսանենգության համար: Ես վճարեցի 3 սիկդ ավանակի և գիշերակացի համար: Ես վճարեցի [...] սիկդ անագ կամրջի վրա: Վճարեցի [...] սիկդ անագ Սամուխայում գիշերակացի համար: Վճարեցի 1 սիկդ արծաթ բեռնակրին որպես աշխատավարձ՝ բեռը մինչև Սամուխա լրեղափոխելու համար: Վճարեցի 3 սիկդ անագ Խապիկահիպրայում: Վճարեցի 1 ½ մինա անագ Կուլիյայի քաղաքագլխին: Վճարեցի 12 սիկդ անագ Կարախնայի ուրի սիկկապիմիին<sup>105</sup>: Կարախնայից մինչև Կուլուրնալ 3 սիկդ արծաթ վճարեցի բեռնակիրներին: Վճարեցի 6 սիկդ արծաթ

<sup>104</sup> Barjamovic 2011: 152, δ. 504, 257, δ. 982, 282, δ. 1111:

<sup>105</sup> Փոքրասիական քաղաքներում հիշատակված պաշտոնյաներից մեկը, ով հավանաբար ունեցել է նաև կառավարչական գործառույթներ:

որպես նիսխագում-հարկ<sup>106</sup> սահմանի վրա: Վճարեցի 2 սիկդ գիշերակացի համար...:

\* Տեքստը աշշուրցի առևտրականի համառոտ հաշվետվությունն է, որում նա ներկայացնում է կատարված ծախսերի ու Փոքր Ասիայի տարածքում իր առևտրական շրջագայության մասին: Նրա շրջագայությունը ընդգրկել էր բավականին մեծ աշխարհագրություն: Իր առևտրական գործերով նա այցելել էր Խուրամա, Լուսուզատիյա, Սամուխա, Խատիկախտիա<sup>107</sup>, Կուտիյա, Կարախնա, Կուբուրնատ քաղաքները:

## VS 26, 195

(I. 1-11)

### Գիտական տառադարձումը՝

*a-na ší-ip-ri ša a-lim ù kà-ri-im Kà-ni-iš qí-bi-ma um-ma wa-bar-tum  
ša Ša-mu-ħa-ma a-na-kam a-šu-mi ša-áp-tim ša É.GAL-lúm iš-bu-tù-[ni] É.GAL-lam<sub>5</sub> nu-ni-iħ-ma um-ma É.GAL-lúm-ma šu-ma mì-iš-lá-am [t]a-lá-qé-a li-[qé-a šu-ma] [lá ta-l]á-qé-[a ...] ... (I. 1'-7'): lu ni-ir-[de<sub>8</sub>] 16 GÚ 30 m[a-na SÍG.ħI.A] ù 3 ANŠE.ħ[I.A] [sa-lá]-mi i-di-[nu]-ni-a-[tí-ma] [a-na] ší-ip-ri-ku-nu [ni]-ip-qí-id-ma i-[ra]-de<sub>8</sub>-ú-ni-ku-nu-tt<sup>108</sup>.*

### Թարգմանություն

Սամուխայի վարարդումից քաղաքի<sup>109</sup> և Քանեշի կարումի բանագնացներին: Այսինք մենք հանգստացրել ենք (կորերը) պալարում՝ կապված բրդի հետ, որը բռնագրավել էր պալա-

<sup>106</sup> Հարկի այս տեսակը հիմնականում վճարում էին ներկրվող ապրանքների համար:

<sup>107</sup> Դատելով «կապադովկյան» տեքստերից՝ քաղաքը գտնվել է Սամուխայից մինչև Կարախնա ընկած հատվածում:

<sup>108</sup> Տեքստը թվագրվում է Քանեշի կարումի հնագիտական II փուլի շերտով (Ք.ա. 1970-1840 թթ.) (տե՛ս Barjamovic 2011: 153, ձ. 512):

<sup>109</sup> «Կապադովկյան» տեքստերում քաղաք (առք.' ᾶτιμ) բառը նշելով՝ նկատի ունեն Աշշուրցի առևտրականների մայրաքաղաքը:

դղ, սակայն պալաղից մեզ ասում են. «Եթե դուք ցանկանում եք վերցնել կեսը (ապրանքի), ապա կարող եք վերցնել կեսը, բայց եթե դուք չվերցնեք կեսը [.....], մենք առաջնորդեցինք (պալաղից): Նրանք մեզ կվել են 16 տաղանդ ու 30 մինա բուրդ և 3 սև ավանակներ, ու մենք այն վստահել ենք ձեր բանագնացներին, և նրանք բերում են դրանք ձեզ:

\* Տեքստից պարզ է, դառնում, որ Սամուխայի կառավարիչները բոնագրավել են աշշուրցի առևտրականների ապրանքը: Պարզ չէ, թե ինչ պատճառով են նրանք այդ արել, և անհասկանալի է նաև, թե արդյոք ում ապրանքն էր դա՝ Սամուխայի վաճառականների՞նը, թե՛ Քանեշի: Այնուամենայնիվ, ապրանքը բավականին կարևորություն է ներկայացրել նրանց համար, քանզի գործին խառնվել են նաև Աշշուր քաղաքից և Քանեշի կարումից ժամանած ներկայացուցիչները: Հավանաբար Սամուխայի կառավարիչները վերադարձրել են միայն ապրանքի կեսը:

### Kt 93/k 84

(I. 3-6)

#### Գիտական տառադարձումը՝

7 GÚ 20<sup>9</sup> *ma-na SÍG.ՀԻ.A lá-hu-tám ša ki-ma ku-a-tí i-Lu-hu-za-tí-a-e i-dí-nu-nim* 1 GÚ 50 *ma-na SÍG.ՀԻ.A ú-ší-tám áš-ra-kam-ma i-dí-nu-nim ... (I. 9): i-Ša-mu-ḥa al-qé ... (I. 20-21): mi-ma a-nim [i-na] Ša-mu-ḥa ra<sup>10</sup> al-qé ... (I. 26-30): 3 me-at ki-pú-na-ni ú 1 me-at mu-uštá-tim ša ki-ma ku-a-tí i-Lu-hu-za-tí-a i-dí-nu-nim ... i-Ša-mu-ḥa-a eбли áš-ta-a-am*<sup>110</sup>.

#### Թարգմանություն

Քո ներկայացուցիչները կվեցին ինձ 7 տաղանդ և 20 մինա անլվա բուրդ Լոխուզապրիյայում և նույնակա այնպես 50 մինա ստիտ-բուրդ: .... Ես վերցրի Սամուխայում,

<sup>110</sup> Barjamovic 2011: 136, δ. 435:

300 kipunani<sup>111</sup> և 100 սանր, որը դրվել են Լուխուզապրիյայում ինձ քո ներկայացուցիչները, .... ես գնել եմ ճոպան Սամուխայում:

\* Հերթական նամակ-հաշվետվություն առևտրականից, որն առևտրական գործեր էր վարում Լուխուզատիյա և Սամուխա քաղաքներում:

**Kt 93/k 237**  
(I. 9-12)

**Գիտական տառադարձումը՝**

ŠU.NIGÍN 2 ½ *ma-na* KÙ.BABBAR *A-sà-nim ub-lá-kum lu i-na Lu-hu-za-tí-a lu i-na Ša-mu-ḥa-a lu-qú-tám ta-dá-nam*<sup>112</sup>.

**Թարգմանություն**

Ընդհանուր առմամբ 2 ½ մինա արծաթ բերեց քեզ Ասանումը: Վաճառի՛ր ապրանքները՝ կա՞մ Լուխուզատիյայում, կա՞մ Սամուխայում:

\* Նամակից պարզ է, որ վաճառականը առևտրական գործեր ուներ Սամուխա ու Լուխուզատիյա քաղաքներում:

**KUG 19**  
1-13

**Գիտական տառադարձումը՝**

1/3 *ma-na* LÁ 1 ¼ GÍN KÙ.BABBAR *Pá-pá-lá i-dí-šu-um* 4 ½ GÍN  
*ší-im* *hi-im-tim* 1/3 *ma-na* *gám'-ru* 3 GÍN *i-nu-mì a-Na-ak-šu-na a-li-[ku]* *a-sà-ḥa-ar-tí* *ú-ša-qí-il<sub>5</sub>* 1 GÍN *ší-im* {*ší-im*} *ší-it-ri* *ša a-na Áš-wa-tù-ma-an a-dí-nu* 2 ½ GÍN *a-sà-ḥa-ar-tí* *ša Ša-mu-ḥa ub-lu ú-ša-qí-Γil<sub>5</sub>*<sup>113</sup>

<sup>111</sup> Հավանաբար կենցաղային իր, գուցե՛ ճարմանդ, տե՛ս CAD 8: 401:

<sup>112</sup> Barjamovic 2011: 136, ծ. 436:

<sup>113</sup> Ulshöfer 1995: 223.

### **Թարգմանություն**

Պապպալան դվեց նրան  $1/3$  մինա,  $1\frac{1}{4}$  սիկո արծաթ:  $4\frac{1}{2}$  սիկո էր գնման գինը կաշվե բարայի համար:  $1/3$  մինա էր իս ծախսերը, 3 սիկո վճարեցի մանր ապրանքների համար, երբ որ գնացել էի Նակոնին: 1 սիկո արժեր հագուստը, որ ես դվեցի Աշվագումանին:  $2\frac{1}{2}$  սիկո վճարեցի մանր ապրանքների համար, որ բերեցի Սամուխան:

\* Առևտրականը ներկայացնում է իր ծախսերը: Հավանաբար նրա շրջագայության վերջնակետը Սամուխան էր:

### 1.3. ԱՇՇՈՒՐՅԱՆ («ԿԱՊԱԴՈՎԿՅԱՆ») ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԿՈՒՍՍԱՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Կուսսարը (հիմնականում Կուսսարա ձևով) բազմից հիշատակվել է «կապադովկյան» աղյուսակներում և խեթական սեպագիր արխիվներում: Նրա մասին հիշատակությունները, սակայն, բավականին քիչ են: Խեթագիտության բնագավառում մինչ օրս չկա հստակ պատկերացում, թե որտեղ կարող էր գտնվել այն: Եղած նյութը հնարավորություն է տալիս միայն մասնակիորեն այն տեղորոշելու: Քաղաքի համար առաջարկվել են մի շարք տեղադրություններ: Եղած նյութը թույլ է տալիս քաղաքը տեղորոշել Քանեշից հյուսիս-արևելք՝ Անտիտավրոսի լեռների մոտ<sup>114</sup>:

Քաղաքը հիշատակվել է 26 «կապադովկյան» տեքստերում: Այն հիշատակվել է Դուրխումիտ (*AKT* 6, 491), Զալպա (kt 87/k 547), Թեգարամա (*AKT* 6, 149), Լուխուլզզատիյա (*AKT* 6, 491, *ICK* 1, 1, *Kay* 95, *Kay* 1830), Խաթթում (Խաթթուսա) (kt 87/k 34<sup>2</sup>, *ICK* 1, 1), Խախխում (kt k/k 5)<sup>115</sup>, Խարսա (kt n/k 67)<sup>116</sup>, Խուրամա (*AKT* 6, 149, *AKT* 6, 491, *ICK* 1, 1, *TC* 1, 10, *VS* 26, 22), Կուբուրնատ (*AKT* 6, 491), Մամմա (*Neşr. Boğ.* 2), Սալախսուվա (*AKT* 6, 383, *AKT* 6, 491), Սալատուվար (*AKT* 6, 491), Սամուխա (*AKT* 4, 71, *TC* 1, 10), Տիլմրա (*TC* 1, 10), Տիմելիյա (*AKT* 6, 491, kt k/k 5), Վախսուսանա (kt n/k 67) քաղաքների հետ:

<sup>114</sup> Կուսսարայի տեղադրության վերաբերյալ տե՛ս **Ghazaryan 2017**:

<sup>115</sup> Խախխում կամ Խախխա քաղաքը գտնվել է Աշշուրից դեպի Քանեշ տանող գիսավոր առևտրական ճանապարհի վրա: Հավանաբար այն Եփրատի ափին գտնվող հետագայի Սամոսատի (Շամշատի) մերձակայքում էր, տե՛ս նաև **RGTC VI**: 61-62:

<sup>116</sup> Քաղաքի եզակի հիշատակությունն ու նյութի սղությունը հնարավորություն չեն ընձեռում այն տեղորոշելու:

Այս թնակավայրերի մեծ մասը Քանեշից արևելք կամ հյուսիս-արևելք են գտնվել: Ըստ «կապադովկյան» աղբյուրների՝ Կուսսարայում եղել է աշշուրցի առևտրականների կայան՝ վարարդում: Քաղաքից առևտրական ճանապարհները տանում էին դեպի Քանեշ, Լուխուզատտիյա, Թեգարամա, Խուրամա և այլն: Քաղաքին առավել մոտ են եղել Լուխուզատտիյա և Խուրամա քաղաքները: Քանեշից դեպի Կուսսարա ճանապարհը անցնում էր Խուրամայով: Կուսսարան նաև Պիթսանայի ու Անիտտայի նստավայրն էր: Խեթական արքա Խաթթուսիլի 1-ը Կուսսարայում պալատ է ունեցել, այն հանդիսացել է նրա նստավայրը իր կառավարման վերջին շրջանում:

\*\*\*

Միայն 26 «կապադովկյան» տեքստերում է նշվել Կուսսարա քաղաքը: Այդ տեքստերից վեցը Շալիմ-Աշշուրի արխիվից է (AKT 6): Նրա ընտանիքը մասնագիտացած էր Քանեշից արևելք ընկած քաղաքների հետ առևտրում:

### **Աշշուրյան «կապադովկյան» աղբյուրներ, որտեղ առկա են տվյալներ Կուսսարայի մասին**

#### **AKT 6, 149**

(I. 4)

#### **Գիտական տառադարձումը՝**

*i-na Té-ga-ra-ma wa-áš-<sup>1</sup>ba<sup>1</sup>-ku ... (I. 11-16): i-na <sup>4</sup>UTU-ši tup-pí ta-ša-me-a-ni A-lá-ḥu-um lu a-na Ḫu-ra-ma lu a-na Ku-ša-ra a-na sé-ri-a li-li-kam<sup>117</sup>.*

---

<sup>117</sup> Barjamovic 2011: 145, δ. 478.

## Թարգմանություն

Ես կանգ եմ առնում թեզարամայում ... Այն օրը, երբ որ դու կկարդաս իմ նամակը, Ալի-ախումը պեղը է եկած և հանդիպած լինի ինձ հետ կա'մ Խուրամայում, կամ Կուսսարայում:

\* Շալիմ-Աշշուրի արխիվի նամակներից մեկն է, որտեղ կատեղեկություն աշշուրդի առևտրականի առևտրական շրջագայության մասին Խուրամա, այնուհետև՝ Կուսսարա քաղաքներ:

### AKT 6, 491

(I. 65-69)

#### Գիտական տառադարձումը՝

『<sup>4</sup> G[ÍN KÙ.BABBAR] 『É』 ub-ri 1 ½ GÍN KÙ.BABBAR a-kà-ší-im  
[i-*Ḫu-r]a-ma [x] ma-na KÙ.BABBAR a-na ì-lí-ku-li 5 GÍN  
『KÙ.BABBAR 『É』 ub-ri 1 GÍN KÙ.BABBAR a-na kà-ší-im 『i[-na]  
『...』 Ku-ša-ra šu-a-tí-ma a-dí-in<sup>118</sup>.』*

## Թարգմանություն

4 սիկղ [արծաթ] գիշերակացի համար, 1 ½ սիկղ արծաթ [Խուրամայում կաստում-պաշտոնյայի<sup>119</sup> համար, [...] մինա արծաթ Իլիկովիին, 5 սիկղ արծաթ գիշերակացի համար, 1 սիկղ արծաթ կաստում-պաշտոնյային Կուսսարայում նոյնպես պվեցի:

\* Աշշուրդի առևտրականի նամակ-հաշվետվությունն իր առևտրական գործունեության մասին:

<sup>118</sup> Barjamovic 2011: 145, δ. 479.

<sup>119</sup> Այդ պաշտոնյան փոքրասիական քաղաքներում կարևոր դիրք է ունեցել և հավանաբար նրա հիմնական գործառույթները կապված են եղել առևտրի ու հարկերի հետ (առք. *kaššu* բառի մասին տե՛ս CAD 8: 292-293):

### Գիտական տառադարձումը՝

[um-ma A-šùr]-re-ší [ù] A-šùr-tak-lá-ak-[ma] [a]-na Šú-Sú-en<sub>6</sub> qí-bi<sub>4</sub>-ma [šu]-ma Puzúr-A-šùr ha-ra-an [sú]-qí-nim-ma iš-tí [s]ú-ha-rí-šu i-tá-ra-ad-kà [um]-ma a-ta-ma i-pá-ní-šu [l]e-tí-iq-ma [i-na] Hu-ra-ma ù-lá [Ku-š]a-ra KÙ.BABBAR [l ma-na iš]-tí DAM.GÀR-im [... l]á-al-qé [...] -x-dí-šu-nu [...] -x-i i-na [...] ú-lá i-na [Ku-š]a-ra ki-lá a-dí [x]-dí i-kà-šu-du-ni [u]m-ma a-ta-ma ...<sup>120</sup>

### Թարգմանություն

Աշշուր-ոեծիից և Աշշուր-թակլակուից Շու-Սուենին: Եթե Պուրգուր-Աշշուրը ցանկանա իր ծառաների հետ միասին քեզ ուղարկել «Նեղ արահետով»<sup>121</sup>, դու պետք է նրան ասես. «Ծո՞յլ փուր նրա առջևից գնամ և թո՞յլ փուր վերցնեմ մեկ մինա արծաթ բուկոսադրույթով վարկ առևդրականից Խուրամայում կամ [Կուսայարայում [...] նրանց [...] կանգ առան [...] ] [Կուսայարայում: Մինչև [...] չհասնեն քեզ, պետք է ասես....

\* Փաստացի սա աշշուրցի առևտրականների խորհուրդներն են մեկ այլ առևտրականի՝ կապված «Նեղ արահետով» անցնելու վերաբերյալ: Առևտրականի ուղին պետք է անցներ նաև Կուսայարայով:

<sup>120</sup> Barjamovic 2011: 145, δ. 480:

<sup>121</sup> Աքքադերեն *harrān sūqinnim* բառակապակցությունը սովորաբար թարգմանվում է որպես «Նեղ արահետ»: Փոքրասիական տարածաշրջանում այն մաքսանենգ ճանապարհով ապրանք անցկացնելու կամ հարկերից խոսափելու համար էր և ուներ զարտուիդ ճանապարհ իմաստը, տե՛ս Barjamovic 2011: 169-180:

### Գիտական տառադարձումը՝

*i-ša-am-ši ša tup-pí-ni ta-ša-me-ú šu-ma na-tù-ma a-na Ša-mu-ḥa ú Ku-ša-ra a-na tup-pé-kà lá ta-ša-ḥu-ut-ma ta-lá-ak tup-pè-kà a-na 3-[š]í-šu ma-ḥa-aş-ma i-na pá-ni-kà lu-šé-tí-qú-ma ù a-ta ur-kà-tám alik šu-ma lá na-tù-ma a-na Ša-mu-ḥa ú Ku-ša-ra lá ta-lá-ak tup-pí-kà a-na 3-sí-šu ma-ḥa-aş-ma a-na Tí-li-im-ra lu-šé-tí-qú-ma ù a-ta iš-tí ur-ki-ú-tím et-qam ù a-ma-at-kà Sí-li-ma a-na ḥu-ra-ma lu-šé-tí-qú-ma ù a-ta [a]-ni-ša-am er<sup>!</sup>-ba-am<sup>122</sup>.*

### Թարգմանություն

Այն պահին, երբ որ դու կկարդաս մեր նամակը, դու պեսք է, հնարավորության դեպքում առանց զախենալու մեկնես Սամոլսա և Կուսարա՝ աղյուսակներիդ եղլիից: Բաժանի՛ր աղյուսակները երեք մասի և ուղարկի՛ր դրանք քեզանից առաջ և դրանից հետո ինքդ ճանապարհ ընկի՛ր: Եթե դա հնարավոր չէ, ապա մի գնա Սամոլսա և Կուսարա, սակայն թող նրանք դրանք բաժանեն երեք մասի և ուղևորվեն: Թող նրանք ուղևորվեն դեպի Տիլիմրա, այնուհետև դու ինքդ կարող ես ճանապարհ ընկնել: Նրանք պեսք է թույլ դան, որ քո սպրկուիի Միլիմման գնա դեպի Խուրամա, որպեսզի դու ևս կարողանաս մուսք գործել այսպես:

\* Ամենայն հավանականությամբ այդ աղյուսակները մեծ կարևորություն են ունեցել: Այդ պատճառով կարիք է եղել ամեն գնով դրանք դուրս բերելու Սամոլսայից և Կուսարայից:

<sup>122</sup> Barjamovic 2011: 146, δ. 481:

## **AKT 4, 71**

(I. 10-13)

### **Գիտական տառադարձումը՝**

*um-ma a-ta-ma a-na 10 『u<sub>4</sub>』-[me] iš-tù Ku-ša-ra ú-ul iš-tù Ša-mu-ha [ú- šé-ba-lá-kum] šu-ma lá [ú-sé-bi<sub>4</sub>-lá-kum] šu-ša-a[l-šu-um a-ša-qá-al]<sup>123</sup>.*

### **Թարգմանություն**

Դու ասացիր. «10 օրվա ընթացքում [ես կուղարկեմ քեզ այն] կա'մ Կուսարայից, կա'մ Սամուխայից: Եթե ես չկուղարկեմ այն, ես կվճարեմ եռակի ավել:

\* Հավանաբար առևտրականներից մեկը հիշեցնում է մեկ այլ առևտրականի նրա տված խոստման մասին: Խոսքը Կուսարայից կամ Սամուխայից ապրանք ուղարկելու մասին է:

## **Kt 87/k 547**

(I. 1-5)

### **Գիտական տառադարձումը՝**

*a-[na H]a-nu-nu qí-bi<sub>4</sub>-ma um-ma [um]-ma A-šur-DU<sub>10</sub>-ma a-na-kam iš-tí [šú]-ha-ri-e ša I-[di]-Sú-en<sub>6</sub> DUMU Ku-ku-lá-nim i-ma-at Za-al-pá ku-ša-[ra-i-ú]-um ma-qí-it-ni-a-tí (I. 13-26): [mi-m]a a-nim ša KI DU NI [a-n]a Ku-ša-ra e-li-ú-ni-ni [a]-na-ku e-li-ma [...] -e ú šú-ha-ra-am [i-na] ba-áb a-bu-li-im [aş]-ba-at-ma i-na e-mu-qi [x]-x-lim ú-bar-ta-am e-pu-uš-ma [x]-x-e ú šú-ha-ra-am a-na É.GAL-lim uš-té-li ú al-pu ší-im-tù-um i-na É.GAL-lim i-za-zu a-na É.GAL-lim a-dí ma-lá ú šé-ni-šu né-li-ma um-ma É.GAL-lím i-na ša-li-tim i-ma-at Za-al-pá al-qé<sup>124</sup>.*

### **Թարգմանություն**

Աշշուր-փարից Խանունույին: Կուսարայի մարդը<sup>125</sup> հարձակվեց մեզ վրա այսպեղ՝ Զալպա երկրում, երբ որ մենք Կուկու-

<sup>123</sup> Barjamovic 2011: 146, δ. 483:

<sup>124</sup> Barjamovic 2011: 146, δ. 484:

<sup>125</sup> Նկատի ունի Կուսարայի արթային:

լանումի որդի Իդղին-Սուենի ծառաների հետ էինք: .... Այդ բոլորը<sup>126</sup>, որ .... զնաց Կուսսարա, ևս անձամբ նոյնպես զնացի այնպեղ: Եվ ես բռնեցի [անձնանուն] և ծառային քաղաքային դարպասի մուտ, և ես սպիտեցի [...] վարարդումին, և սպիտեցի [անձնանուն] և ծառային ինձ հետ բարձրանալ պալար: Եվ նշան արած անասունները կանգնած էին [այնպեղ]: Մենք բարձրացանք պալար մի քանի անգամ, սակայն պալարդում մեզ ասեցին. «Ես այն վերցրել եմ որպես ավար Զալպա երկրում»:

\* Այս տեքստում նկարագրվում է Կուսսարայի և Զալպայի միջև բռնկված պատերազմի մասին: Հավանաբար խոսքը մերձեփրատյան Զալպայի, այլ ոչ թե մերձսևծովյան Զալպա-Զալպուվայի մասին է: Փաստորեն՝ Կուսսարայի գործերի հարձակման հետևանքով տվյալ առևտրականի ապրանքները նոյնպես որպես ավար էին տարբել Կուսսարա: Բոլոր փորձերը՝ վերադարձնելու ապրանքը, որոնց մեջ էին նաև նրա նշան արված անասունները, անհաջողության էին մատնվում: Հավանաբար գործին խառնվել են նաև Կուսսարայի վարարդումի ավագները:

### Kt 87/k 551

(I. 1-8)

### **Գիտական տառադարձումը՝**

um-ma Šu-mì-a-bi-a-ma a-na A-šur-ba-ni ն A-šur-DU<sub>10</sub> qí-bi-ma mì-nam ša a-na KÙ.BABBAR ta-áš-ta-na-pá-ra-ni-ni a-tù-nu i-nu-mì a-na-kam tù-uš-ba-ni<sup>9</sup> lá<sup>9</sup> ta<sup>9</sup>-ad-gu<sub>5</sub>-lá [ki]-ma i-na Lu'-hu-za-tí-a KÙ.BABBAR ma-du-ni ... (I. 14-27): a-dí-i É.GAL-lim ša ta-áš-pu-ra'-ni um-ma a-tù-nu-ma ú-za-ni pì-té-e mì-na-má' a-na-ku ú-za-ku-nu lá áp-té a-na É.GAL-lim a-na-ku e-li-ma iš-tí É.GAL-lim a-ta-ú a-tù-nu a-ma-kam ta-áš-ta-pu-a-ma um-ma A-šur-i-mì-ti-ma 3 al-pè-e a-na

<sup>126</sup> Հավանաբար խոսքը առևտրականի ապրանքների մասին է:

*ma-at Za-al-pá ar-de<sub>8</sub>-ma a-na ur-ki-tim a-dí-šu-nu a-ni-ša-am mì-ma lá ub-lá-am*<sup>127</sup>.

### Թարգմանություն

Շումի-արիյան Աշշուր-բանիին և Աշշուր-փարին: Ինչո՞ւ ես դու անընդհափ գրում ինձ գումարի մասին: Եթք որ դու այսպեղ էիր ապրում, արդյո՞ք դու չէիր նկատում, որ Լոխուզափփի-յայում շափ արծաթ կա: .... Ինչ վերաբերում է պալափին, որի մասին դու ինձ գրում էիր՝ ասելով. «Տեղեկացրու մեզ»: Իսկ ինչի՞ մասին ես քեզ անձամբ չեմ գտեղեկացրել: Ես անձամբ գնացի պալափ և բանակցեցի պալափում: Դու լուր էիր այնպեղ, իսկ Աշշուր-իմիփփին ասաց. «Ես վերցրի երեք գլուխ անասուն և փարա Զալպա երկիր և այնուինչուն վաճառեցի դրանք»: Եվ նա ոչ մի դեպքում չբերեց դրանք այսպեղ:

\* Կուսսարայի պալատը բռնագրավել էր աշշուրցի առևտրական Աշշուր-տարի ուղարկած ապրանքը Զալպա երկիր վրա հարծակման ժամանակ: Առաջին նամակում նա պատմում է, թե ինչպես է նա գնացել Կուսսարա և պահանջում, որ իրեն թույլ տան վերադառնալ իր անասունների հետ միասին, որոնց տարել էին Զալպա: Երկրորդ նամակում, որը հավանաբար ուղարկվել էր այն ժամանակ երբ Աշշուր-տարի Քանեշում էր գտնվում, նույնպես վերաբերվում է Կուսսարայի պալատի հետ բանակցություններին և Զալպա երկիր տարված անասուններն:

### Kay 1830

(I. 1-12)

### Գիտական տառադարձումը՝

*a-na ší-ip-<sup>1</sup>ri-ní<sup>2</sup> ú kà-ri-im Kà-ni-iš qí-bí<sub>4</sub>-ma um-ma ú-bar-tum [š]a Ku-š[a-r]a-ma a-na-kam ni-iš-me-ma <sup>2</sup>DUMU A-šur i-na ma-at Lu-hu-za-tí-a dí-ku a-na É.GAL-lim ni-li-ma um-ma ni-nu-ma i-na ma-tí-*

<sup>127</sup> Barjamovic 2011: 147, δ. 485:

kà DUMU A-šùr dí-ku [a-Kà-ni-š]í-e iš-pu-ur-ma i-na e-ba-ar Lu-hu-za-tí-a iš-tí [x] e lu tí ša a kí ša dí-ku a-wi-le ša dí-ku-ni la ni-dé a-wi-lu i-na mu-ší-im dí-ku i-na ša-nim u₄-mi-im KÙ.BABBAR lu-qu-tí-šu-nu [...]<sup>128</sup>.

### Թարգմանություն

Կուսսարայի վաբարդումից մեր ներկայացուցիչներին և Քանեշի կարումին: Այսպեղ մենք լսել ենք, որ երկու աշշուրցիներ սպանվել են Լուխուզապրիյա երկրում: Մենք բարձրացանք պալար և ասացինք. «Աշշուրցիներ են սպանվել քո երկրում: Նա գրեց [քանեշ]ցիներին, և [...] հետի [...] Լուխուզապրիյայից այն կողմ: Մենք չգիտենք՝ ովքեր են սպանվածները, պղամարդկանց սպանել են գիշերը: Հաջորդ օրը արծաթը նրանց ապրանքների համար [...]】

\* Կուսսարայի աշշուրցիները տեղյակ են պահում, որ Լուխուզատուիյա երկրում երկու աշշուրցի են սպանվել, և դրա վրա ցանկանում էին ուշադրություն հրավիրել: Պարզ չէ, թե աշշուրցիները որ քաղաքի պալատում էին հանդիպում ունեցել՝ Կուսսարայի<sup>9</sup>, թե՛ Լուխուզատուիյայի: Եթե Կուսսարայի, ապա դա կնշանակի, որ այդ պահին Լուխուզատուիյան գտնվում էր Կուսսարայի ենթակայության ներքո:

### AKT 6, 383

(I. 6-16)

#### Գիտական տառադարձումը՝

a-na-kam A-da-da iš-tí A-šur-DÙG DUMU A-zu-za-a i-Ša-lá-ah-šu-wa í-mì-ig-ru-ma a-na Ku-ša-ra A-da-da a-na a-wí-lim ta-mu-im 『e』-tí-tí-iq ma-mì-tám iš-tí a-wi-lim i-lá-qé-『ma』 ú lu-qu-tám ša DUMU A-zu-za-a-ma ha-ra-an sú-qá-ni-ma i-ša-lá-ah<sup>129</sup>.

<sup>128</sup> Barjamovic 2011: 27, δ. 118, 147, δ. 487:

<sup>129</sup> Barjamovic 2011: 173, δ. 602:

## Թարգմանություն

Այսդեղ Ադադան ընդհանուր համաձայնության եկավ Ազուզայի որդի Աշշուր-պարի հետ Սալախսուվայում: Ադադան ճանապարհորդել էր դեպի Կուսսարա, որպեսզի այդ մարդուն երդման բերի: Նա երդման կրերի այդ մարդուն, այնուհետև Ազուզայի որդու ապրանքները Նեղ արահետով կուղարկի:

\* Հավանաբար խոսքը աշշուրցի առևտրականի ապրանքների համար երաշխիքներ տալու մասին է, միգուցե նաև գրավիր:

### ICK 1, 1

(I. 38-54)

#### Գիտական տառադարձումը՝

i-na lá i-da-i-ni ú ša-zu-za-tim ša a-bi<sub>4</sub>-ni iš-tù ḥu-ra-ma a-šé-er a-bí<sub>4</sub>-ni a-na Kà-ni-iš té-ru-ba-ma a-bu-ni er-šu-um ú-kà-al-šu a-bu-ni tù-ni-ma um-ma a-ta-ma 1 ½ ma-na 5 GÍN KÙ.BABBAR ša i-na li-bi<sub>4</sub> KÙ.BABBAR-pì-kà al-qé-ú a-na ší-im KÙ.AN ú-ra-dí-e ú 8 GÍN KÙ.GI ša A-lá-ba-am É.GAL-lúm i-na Ku-ša-ra ik-sí-ú a-na-ku áš-qú-ul ša KÙ.BABBAR a-ta ta-at-bu-lu-ma a-na ší-im KÙ.AN mì-ma lá tù-ra-dí-ú ú a-na Ku-ša-ra e-lá-ú-ma lá té-li-ú ú 8 GÍN KÙ.GI lá ta-áš-qú-lu<sup>130</sup>.

## Թարգմանություն

Առանց մեր կամ հորդ գործընկերների համաձայնության դու գնացել ես Խուրամայից մեր հոր մով' Քանեշ: Եվ քանի որ հիվանդությունը անկողնուն էր գամել մեր հորը, դու խարեցիր մեր հորը՝ ասելով. «Ես կավելացնեմ 95 սիկդ արծաթ, որը ես վերցրել էի քո դրամագիլսից ամուլումի<sup>131</sup> գնի դիմաց: Ես անձամբ վճարել եմ 8 սիկդ ոսկի, որը Կուսսարայի պալատը պարզադրել է Ալի-արումին վճարել»: Սակայն դու միայն

<sup>130</sup> Barjamovic 2011: 138-139, ձ. 440:

<sup>131</sup> Թանկարժեք մետաղի տեսակ, տե՛ս CAD 1/II: 97-98:

գումար ես վերցրել՝ ոչինչ անձամբ չվճարելով ամուսումի գնի համար: Դու երբեք չես գնացել Կուսսարա և երբեք չես վճարել 8 սիկդ ուկի ...

\* Այստեղ խոսքը աշշուրցի առևտրականների միջև դրամական հարաբերությունների մասին է: Շրջանառվում են մի քանի տարածաշրջանային կարևոր քաղաքների անուններ՝ Խուրամա, Քանեշ, Կուսսարա:

## ԳԼՈՒԽ 2

### ՀԻՆՔԱԲԵԼՈՆՅԱՆ ԵՎ ՄԱՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԳՐԵՐԸ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ

### ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

#### 2.1. ԲԱԲԵԼՈՆԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ<sup>132</sup>

##### Հայկական լեռնաշխարհը բարելոնյան դիցավիպական ավանդության մեջ

Հայկական լեռնաշխարհը բարելոնիայի բնակիչներին ծանոթ էր վաղնջական ժամանակներից՝ կապված տիեզերաստեղծման, համաշխարհային ջրհեղեղի և անմահության որոնումների դիցավիպական ավանդապատումների հետ:

Տիեզերաստեղծման մասին պատմող հին միջագետքյան ամենաամբողջական բնագրում՝ բարելոնյան «Էնումա Էլիշ...» («Երբ վերևում...») պոեմում, պատմվում է աստվածների հին ու նոր սերունդների պայքարի, երիտասարդ աստվածների հաղթանակի և արարչագործության մասին: Հին միջագետքյիների, մասնավորապես բարելացիների տիեզերածնական պատկերացումների անփոփոխ այս պատմության մեջ իբրև արարչագործության կենտրոն հանդես է գալիս նախնական լեռը, որը յուրօրինակ կապ է ապահովում երկնքի ու երկրի միջև: Այդ լեռից սկզբնավորվում են Տիգրիս ու Եփրատը: Այսինքն՝ հնագույն բարելոնյան ընկալումներում որպես

---

<sup>132</sup> Աշխատության այս հատվածը պ.գ.դ. Արտակ Մովսիսյանի աշխատությունն է և վերաբերում է Բարելոնյան պետությանը. Հայկական լեռնաշխարհի երկրների միջև հարաբերություններին ու տպագրվել էր «Հայաստանի հարակից երկրների պատմություն» քառահատորյակի առաջին հատորում: Այն ներկայացված է ամբողջական և առանց փոփոխության: Տե՛ս Մովսիսյան 2013: 136-140:

արարչագործության կենտրոն հանդես է գալիս Հայկական լեռնաշխարհը:

Համաշխարհային ջրհեղեղի մասին բարելոնյան ավանդագրուցքը հանգամանորեն շարադրել է Բարելոնի Բելաստծո տաճարի քրմապետ Բերոսոսը՝ թարգմանելով այն հունարեն: Ըստ այդմ՝ մեղսագործ մարդկությանը ոչնչացնելու որոշում կայացնելով՝ աստված չմոռացավ մի քանի բարեպաշտների՝ Քսիսութքու արքայի գլխավորությամբ, որոնց պատվիրեց տապան կառուցել: Երբ բարեպաշտ արքան ցանկացավ իմանալ, թե ուր պիտի հասնի իր նավը փրկելու համար, երկնքից պատասխան լսվեց. «Աստվածների մոտ»: Իսկ երբ փրկվածները ցած իջան նավից, երկնային ծայնն ավետեց, որ նրանք Հայաստանում են (հունարեն բնագրում՝ Արմենիա):

Բերոսոսը նաև ավելացնում է, որ նավի բեկորները մինչև իր ժամանակները պահպանվել են Հայաստանի լեռներում, որոնցից մարդիկ, պոկելով ծյութի կտորներ, թալիսմաններ են պատրաստել իրենց համար:

Հնագույն միջազգետքյան ավանդության մեջ անմահություն որոնող գլխավոր հերոսը Գիլգամեշն է, որի մասին ասքերը գրի են առնվել իին աշխարհի բազմաթիվ լեզուներով: Շումերական «Գիլգամեշն ու Անմահության երկիրը» վիպերգում Գիլգամեշը որոշում է ուղևորվել անմահության երկիր և բռնում է «դեպի Արատտա ճանապարհը»: Իսկ բարելոնյան «Գիլգամեշ» էպոսում հերոսը հաղթահարում է Մաշու լեռները՝ Հայկական լեռնաշխարհի հարավը եզերող Մասիու-Մասիոն լեռները:

## **Հինբարելոնյան թագավորությունը և Հայկական լեռնաշխարհը**

Հարուստ են նաև Բաբելոնի և Հայկական լեռնաշխարհի պատմական շփումները, որոնք առկա են դեռևս Հինբարելոնյան հարստության ժամանակաշրջանում: Հարստության ամենահզոր արքա Համմուրապին արշավել է դեպի Հայկական լեռնաշխարհ՝ թողնելով այս մասին հիշատակություններ: Մասնավորապես նրա իշխանության 30-րդ տարում՝ Էլամի դեմ արշավանքի ընթացքում, որպես վերջինիս դաշնակիցներ Համմուրապիի դեմ պատերազմել են Սուլարտու (Սուլրու) և Գ/Կուտիում երկրների զորքերը: 32-րդ տարում նա պատերազմել է Սուլարտուի, Գ/Կուտիումի և Էշնունայի (Դիալա գետի հովտում) դեմ: 33-րդ տարվա դեպքերի թվարկումներում նշվում է, որ նա գրավել է Սուլարտուի որոշ քաղաքներ (առանց որոշակիացման), իսկ 37-րդ տարում դեպի դեպի հյուսիս կատարած արշավանքի ընթացքում հաղթել է Թուրուկկու, Կակմու ու Սուլարտու երկրներին: 39-րդ տարում որպես ամփոփում նշվում է, որ Համմուրապին հաղթել է իր բոլոր թշնամիներին մինչև Սուլարտու երկիր:

Ուր քաղաքից գտնված շումերերեն և աքքադերեն երկինքու արձանագրության մեջ Համմուրապին պատմում է Էլամ (՝), Գուտիում, Սուլարտու և Տուգրիշ երկրների մասին, «որոնց լեռները հեռավոր են, լեզուները՝ խառնիճաղանջ»:

Սուլարտու (Սուլրու) երկրի հզորության մասին են վկայում նաև այդ ժամանակաշրջանի դիվանագիտական տեքստերը: Թեև Հարիրիից գտնված նամակներից մեկում նշվում է, որ Համմուրապին շարունակ հորդորում էր Մարիի արքա Զիմրիլիմին գնալ Սուլարտու և նրա արքաներին գրավել իրենց կողմը, ինչը, սակայն, հնարավոր չէր անել առանց մեծ բանակի: Զիմրիլիմը Համմուրապիին գրած նամակում

դժգոհում էր, որ դեպի հյուսիս արշավելու համար նա իրեն օգնության է ուղարկել ընդամենը 3-հազարանոց բանակ:

Սուրբարեցիները հիշատակվում են այդ ժամանակաշրջանի բազմաթիվ նամակներում և այլ տեքստերում: Հետաքրքիր է, որ Էլամից գտնված արձանագրություններում հիշատակվում է «սուրբարեցիների ջրանցքը», ինչը կարող է կապվել Սուրբութ-Էլամ դաշինքի (Համմուրապիի իշխանության 30-րդ տարրում) հետ:

### **Միջինբարելոնյան թագավորությունը և Հայկական լեռնաշխարհը**

Հայկական լեռնաշխարհի և Բարելոնի առնչությունների հետ կարող է կապվել նաև կասսիտների պատմաշրջանը: Կասսիտներն առաջին անգամ գրավեցին Բարելոնը Ք.ա. XVIII դարում, սակայն չհաստատվեցին այնտեղ: Հետագայում՝ Ք.ա. 1595 թ., նվաճելով Բարելոնը՝ նրանց արքայատիմն իշխեց կենտրոնական Միջագետքում մինչև Ք.ա. 1155 թվականը:

Կասսիտների էթնիկ բնութագրի ու սկզբնական բնակավայրի հարցերը գիտության մեջ եղել են երկարատև բանավեճի առարկա և ներկայումս էլ վերջնական պատասխան չեն գտել: Ուսումնասիրողների մի մասն ուշադրության է հրավիրում այն փաստին, որ նրանցից մեզ հասած անվանումներում առկա է խիստ ընդգծված հնդեվրոպականություն (Սուրիաշ, Բուրիաշ, Մարրուտաշ, Գանդաշ, Թիմիրաշ, Բուրգաշ, Դակաշ, Շումայիա և այլ դիցանուններ ու անձնանունները), ինչը կարող է կողմնորոշել դեպի Հայկական լեռնաշխարհ: Կասսիտների լեզվանյութում առկա են արևելափոքրասիական զուգահեռներ, որոնք խոսում են հօգուտ այդ շրջանների հետ երկարատև շփումների: Մյուս կողմից խեթական աղբյուրներում Հայկական լեռնաշխարհի արևմուտ-

քում և հարավ-արևմուտքում գտնվող Թեզարամա, Խիմուվա, Խոսկա, (Ծոփք) Երկրների զորքերը կրում են «կասսիտական» անվանումը, իսկ Մասիուս-Մասիոն (Ներկայումս՝ Տուր-Աբդին) լեռներն ասորեստանյան աղբյուրներում կոչվում են Քաշիյարի: Կասսիտ արքաները կրում էին «արքա Արման և Պարան Երկրների» տիտղոսը, իսկ ողջ Բաբելոնիային տիրելուց հետո այն կոչեցին Կարդունիաշ (անջատելով Վերջավորությունները՝ կատանանք մաքուր տեղանունը՝ Քարորու, այդ անվամբ է Հայաստանը կոչվում նաև Աստվածաշնչի հին ասորական Պեշիտուա անվանումը կրող թարգմանության մեջ):

Հատկանշական է, որ Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի հնագիտական առնչություններում իր առատությամբ առանձնանում է հենց կասսիտական Բաբելոնի դարաշրջանը: Ուշագրավ է նաև, որ ավելի ուշ շրջանում հիշատակվող Նահրի-Խուրուշկիայի արքա Յանզուի անունը կասսիտների լեզվում նշանակում է «արքա»:

### **Նորբաբելոնյան թագավորությունը և Հայաստանը**

Ք.ա. VII դ. վերջին քառորդում Առաջավոր Ասիայում կարևոր դերակատարում ձեռք բերած Նորբաբելոնյան թագավորությունն ու Մարաստանը որոշեցին միավորել ուժերն ընդդեմ Ասորեստանի: Մովսես Խորենացու տեղեկացմամբ Սկայորդու որդի Պարույր Հայկազունին, որն իր իշխանության ներքո միավորել էր Վանա լճից մինչև Եփրատ ընկած տարածքը, միացավ Մարաստանի և Բաբելոնի հակասորեստանյան դաշինքին: Ք.ա. 612 թ. դաշնակից զորքերը գրավեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն, որին մասնակցելու համար Պարույրը թագադրվեց Մարաստանի արքա Կիաքսար-Վարբակեսի կողմից և ճանաչվեց Հայաստանի թագավոր:

Դատելով Աստվածաշնչից՝ Ք.ա. 590-ական թվականներին Հայոց թագավորությունը պետք է լուրջ ուժ դարձած լիներ տարածաշրջանում: Դա է վկայում Երեմիա մարգարեի կողմից Արարատի թագավորության հիշատակությունն անհրավ Բաբելոնի դեմ պատերազմի կանչվող թագավորությունների շարքում:

### **Հայաստանն աշխարհի հնագույն՝ Բաբելոնյան քարտեզում**

Բաբելոնյան քաղաքակրթության ուշագրավ ժառանգություններից մեկը հանրահայտ «Աշխարհի բաբելոնյան քարտեզն է, որը պատմության մեջ ողջ հայտնի աշխարհը մեկ գծագրմամբ ներկայացնելու առաջին օրինակն է: Ք.ա. I հազարամյակի առաջին կեսին ստեղծված բացառիկ այդ քարտեզում հիշատակվում է յոթ երկրանուն (Ուրարտու (Ուրաշտու), Ասորեստան, Դեր, Սուզա (Շուշան), Բիթ-Յակին, Խարբան, Բաբելոն), որոնցից առաջինը Հայաստանն է՝ նշված «Ուրարտու» («Ուրաշտու») անվամբ:

### **Հայ-բաբելոնյան առնչություններն Աքեմենյան տերության ժամանակաշրջանում**

Կյուրոս Մեծը, որպես դաշնակից ունենալով Տիգրան Երվանդյանին, Եռամյա պայքարում հաղթեց Աժդահակին և Ք.ա. 550 թ. հիմնեց իր տերությունը: Վերջինիս դեմ ստեղծվեց հզոր դաշինք՝ Լիդիայի (Փոքր Ասիա), Բաբելոնի և Եգիպտոսի մասնակցությամբ: Ք.ա. 546 թ. Կյուրոսին հաջողվեց հաղթել Լիդիային, իսկ 539 թ. նվաճել Բաբելոնը:

Ուշագրավ տեղեկություններ է պահպանել Բեհիսթունյան արձանագրությունը հայ-բաբելոնյան դաշնակցության մասին: Երեք լեզուներով Դարեհ I-ը արձանագրել է տվել Կյուրոս Մե-

ծի մահից հետո սկսված գահակալական կոիվների և պարսից տիրակալության դեմ ուժքի ելած երկրների ու ժողովուրդների ապստամբությունների ճնշման պատմությունը։ Արձանագրությունը տեղեկացնում է, որ Հայաստանը (պարսկերեն մասում կոչվում է Արմինա, Էլամերենում՝ Հարմինույա, բարելերենում՝ Ուրարտու) նվաճելու համար Դարեհ I-ը իրականացրել է հինգ արշավանք։

Նույն արձանագրության 49-52-րդ բաժինները հաղորդում են չափազանց հետաքրքիր մի իրադարձության մասին։ Դրա համաձայն՝ Դարեհի դեմ Բարելոնում բարձրացած ապստամբությունը ղեկավարում էր «հայազգի Արախսան՝ Խալիխտայի որդին»։ Դա մի կողմից ցույց է տալիս, որ Ք.ա. 520-ական թթ. հայոց մեջ շարունակվում էր Խալիխի աստծո պաշտամունքը, մյուս կողմից՝ վկայում Բարելոն-Հայաստան կապի մասին։ Դա նաև մղում է Ենթադրելու, որ Բարելոնի ապստամբությունը կարող էր ուղղորդված լինել Հայաստանից։

Հայ-բարելոնյան տնտեսական առնչության մասին եզակի մի վկայություն է պահպանել Հերոդոտոսը։ Ըստ նրա հաղորդման՝ առևտուրը Հայաստանի և Միջագետքի միջև կատարվում էր Եփրատ գետով։ «Այժմ ես կպատմեմ այն մասին, ինչն ինձ այս քաղաքից (Բարելոնից) հետո թվում է ամենազարմանալին։ Նավերը, որոնցով նավում են գետն ի վար՝ դեպի Բարելոն, կլոր են և ամբողջովին կաշեպատ։ Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերև, նրանք կտրում են ուտենիներ, որոնցով պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կավե ծածկով, նավի հատակի նման... Այդ նավերը պատրաստում են և՛ շատ մեծ, և՛ առավել փոքր։ Դրանցից ամենամեծերն ունեն հինգ հազար տաղանդ տարողություն»։

Մեկ հունական (ատտիկյան) տաղանդը հավասար է 26,2, իսկ բարելոնյան տաղանդը՝ 40 կիլոգրամի։ Զավիհ ժա-

մանակակից միավորով արտահայտված՝ ստացվում է, որ Հայաստանից Բաբելոն նավարկած ամենամեծ նավերն ունեցել են ավելի քան 130 տոննա (բաբելոնյան տաղանդով հաշվելու պարագայում՝ 200 տոննա) տարողություն: Եթե անգամ խիստ չափազանցված է այս թիվը, վկայությունը, այնուամենայնիվ, խոսում է հօգուտ Եփրատով Հայաստանից մեծածավալ նավարկություն կատարելու փաստի:

## 2.2. ՄԻՋԱԳԵՏՔՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ

Գրքի այս հատվածում ներկայացված են Ք.ա. XIX-XVII դդ. միջագետքյան այն աղբյուրները, որոնցում տեղեկություններ կան Հայկական լեռնաշխարհի երկրների մասին:

### Նամակներ Մարիից<sup>133</sup>

**ARMT 1:** № 18, Durand 1997: 160f., № 43.  
**Գիտական տառադարձումը՝**

Դկ

1. *a-na Ia-ás-ma-ah-*<sup>d</sup>IM
2. *[qf]-bí-ma*
3. *[um-ma]* <sup>d</sup>UTU-*ši-*<sup>d</sup>IM *a-bu-ka-a-ma*
4. *[aš-šum Ia-šu]-ub-AN* [*i-na*] *Tu-[ut]-tu-ul.KI i-mu-tu*
5. *[a-na] pu-ḥa-ti-[šu ḥa-ab-du-ma]-*<sup>d</sup>*Da-gan*
6. *[i]-na Tu-ut-tu-ul.KI [a-na ša-ka-ni-im]*
7. *ta-aš-pu-ra-[am]*
- 8-17. ....
18. *[ù] ki-a-am du-bu-ub-šu*
19. *um-ma-mi am-mi-nim i-na qí-in-ni*
20. *ša la in-ne-ep-pí-šu* և A.ŞÀ *ka-bi-tim*
21. *i-na Zi-ib-na-tim.KI wa-aš-ba-at*
22. *i-na Tu-ut-tu-ma.KI*
23. *a-šar qí-in-nam ta-qa-an-na-nu*
24. և *te-ep-pé-šu ši-ib*
25. A.ŞÀ *me-re-ēš-tum ma-a-ad*

---

<sup>133</sup> Մարի քաղաքը գտնվում էր Հյուսիսային Միջագետքում՝ ներկայիս Սիրիայի Թել-հարիրի հնավայրի տեղում՝ Եփրատ գետի մոտ։ Այն տարածաշրջանի կարևոր պետություններից մեկի կենտրոնն էր (Ք.ա. XXIX-XVIII դդ.): Մարի քաղաքի պեղումների ժամանակ հայտնաբերված արխիվում մեծաքանակ նյութ է պահպանվել Միջագետքի և հարակից տարածքների պատմության վերաբերյալ։

## Հկ

1. *ma-tum ši-i ki-ma ma-a-at Šu-ba-a[r-ti]m*
2. *i-ba-aš-ši A.ŠÀ me-re-èš-tum ma-ad*

## Թարգմանություն

## Դկ

1. Յասմախ-Աղդուին
2. ասա.
3. այսպես է ասում Շամշի-Աղդուն՝ քո հայրը:
4. Ինչ վերաբերում է Յաշուր-Էլին, որը մահացավ Թութառուում,
5. որպես նրան փոխարինող՝ Խաբդումա-Դագան
6. Թութթուում լինի կառավարիչ,
7. և գրիր ինձ:
- 8-17. ....
18. Եվ ասա նրան (Խաբդում-Դագանին)
19. այսպես. «Ինչո՞ւ ես բնակվում
20. պատսպարման համար անպատրաստ կացարանում, և ծանր (քարոտ) տեղանքում (դաշտում):
21. Զիբնաթումում դու ապրո՞ւմ ես:
22. Տեղափոխվի՞ր Թութթուլ,
23. որտեղ դու կացարան ձեռք կբերես
24. և տուն կկառուցես:
25. Այնտեղ հողերը առատ և բերրի են:

## Հկ

1. Այդ երկիրը նման է Սուլաբարտու երկրին.
2. այնտեղ առատ պարարտ հողեր են:

\* Վերին Միջագետքի ամորեացի տիրակալ Շամշի-Աղադ (Շամշի-Աղդու) I-ի (Ք.ա. 1813-1781 թթ.) նամակն իր որդի և Մարիի փոխարքա Յասմախ-Աղդուին (Ք.ա. 1793-1775 թթ.): Նամակում Շամշի-Աղադը I-ը կոչ է անում համոզել ոմն Խաբդումա-Դագանին, որպեսզի վերջինս Զիբնաթումից տեղա-

փոխվի Թութթով, որպես վերջինիս կառավարիչ: Շամշի-Ալադ լ-ը, Խաբղումա-Դագանին համոզելու գործում օգտագործած փաստարկներում հիշատակում է նաև Սուլարտու Երկիրը՝ որպես առատ, բերի Երկիր:

Thureau-Dangin 1936: 171-175.

### Գիտական տառադարձումը՝

- «1. *a-na be-li-ia*
- 2. *qí-bí-ma*
- 3. *um-ma I-ba-al-pī-El*
- 4. *warad-ka-a-ma*
- 5-27. ....
- 28. *an-na-nu-um a-na še-er be-lí-ne*
- 29. *ki-a-am ta-áš-ta-na-ap-pa-ar um-ma at-ta-ma*
- 30. *a-na ma-a-at.KI Šu-bar-tim e-li-ma LUGAL.MEŠ-ni*
- 31. *šu-nu-ti a-na i-di-ni te-er-šu-nu-ti an-ni-tam*
- 32. *a-na še-er be-lí-ne ta-áš-ta-na-ap-pa-ar*
- 33. *i-na-an-na ša-ba-am a-na še-er be-lí-ne ú-ul ta-tá-ra-dam*
- 34. *ba-lum ša-bi-im ma-di-im im-ma-ti be-el-ni*
- 35. *a-na ma-a-at.KI Šu-bar-tim i-il-li»*

### Թարգմանություն

- «1. իմ տիրոջն
- 2. ասա այս.
- 3. Այսպես է ասում Իբալ-ալ-Էլը՝
- 4. քո ծառան:
- 5-27. ....
- 28. Այսպես իմ Տիրոջը (Զիմրի-Լիմին)
- 29. դու (*Համմուրապին*) անընդհատ գրում ես.
- 30. «Բարձրացի՛ր Սուլարտուի Երկրները, և նրա թագավոր-ներին
- 31. մեր կողմը դարձրու»:
- 32. Դու ես անընդհատ գրում ես իմ տիրոջը:
- 33. Իսկ հիմա դու զորք չես ուղարկում իմ տիրոջը:

34. Առանց մեծ բանակի իմ տերը  
 35. ինչպե՞ս կբարձրանա Սուբարտուի երկիր»:

\* Պալատական կառավարիչ Իբալ-պի-Էլի նամակն իր տիրոջը՝ Մարիի տիրակալ Զիմրի-Լիմին (Ք.ա. 1775-1761 թթ.): Իբալ-պի-Էլի Զիմրի-Լիմին է հաղորդում արտաքին ոլորտում տիրող իրավիճակը և վերապատմում է հետևյալ գրուցք, որը նա ունեցել է Զիմրի-Լիմի դաշնակցի՝ Բաբելոնի արքա Համմուրապիի (Ք.ա. 1792-1750 թթ.) հետ: Նամակի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ Մարիի տիրակալը պատրաստում է արշավանք կատարել դեպի Սուբարտու ու Բաբելոնի արքայից օժանդակ ուժեր է ակնկալում:

#### **ARMT 28: № 181.**

#### **Գիտական տառադարձումը՝**

1. [um-m] SUKKAL.MAḪ-[ma]
2. *a-na šar-ra-ni ša Šu-bar-tim* և *pa-ṭi-[ia ka-li-šu-nu]*
3. [q]ý-bí-[ma]
4. [i-na p]a-ni-tim pí-i-ku-nu a-na Ha-am-mu-ra-b[i]
5. [a-ga-na a]t-tu-nu-m[a] ša-bu-ni և ša-b[u]-u[m ša]
6. [a-ḥu-um qa-d]u-um a-ḥi-i[m] li-in-[n]e-em-d[u-nim]
7. [.....-b]i il-la-am ša x [-]

#### **Թարգմանություն**

- «1. Այսպես է ասում սուկկալմախը.  
 2. Սուբարտուի բոլոր արքաներին ու իմ սահմաններին՝  
 3. ասա այս.  
 4. – Նախ՝ Ձեր ելույթը Համմուրապիին (ուղղե՛ք) ....,  
 5-7. իսկ ինչ վերաբերում է ձեզ, ձեր զորքը և ... զորքը ... թող կողք կողքի կանգնեն ... »:

\* Էլամի սուկկալմախի<sup>134</sup> նամակը Սուբարտուի արքաներին: Նամակն իր համատեքստում կարող է աղերսներ ունենալ նախորդ տեքստի բովանդակության հետ:

<sup>134</sup> Էլամ պետության արքայի տիտղոսը, տե՛ս CAD 15: 360-361:

ԱՐՄՏ 26 I/2: № 308.  
Գիտական տառադարձումը՝

**Դկ**

1. *a-na Aq-ba-a-ħi-im*
2. *q[í]-bí-ma*
3. *[um]-ma Ia-am-sú-um*
4. *[DUMU?]-ka-a-ma*
5. *ki-[ma]1-šu 2-šu ù [10]-šu a-na še-er*
6. *'Ha-ià-su-m[u]-ú*
7. *be-lí i[š]-pu-rn-[am u]m-ma be-lí-ma*
8. *[i]-nu-ma [DUMU.M]EŠ ši-ip-ri*
9. *ma-li [a-na š]e-ri-ka it-ta.-na-la-[ku]*
10. *'Ia-[am-š]ú-um ԻR-di*
11. *[i-na] pí-ri-iš<sub>7</sub>-tim li-[iz-zí-iz]*
12. *[an]-ni-tam be-lí iš-p[u-rn-am]*
13. *i-na-an-na te<sub>4</sub>-em A-[tam-ri-im]*
14. *te<sub>4</sub>-em Ku-un-na-m[a-an]*
15. *ù te<sub>4</sub>-em LUGAL.[MEŠ]*

*Rev.*

16. *ša Šu-ba-a[r-tim]*
17. *ša a-na še-[ri-šu ub-ba-lu]*
18. *i-na pí-ri-i[š<sub>7</sub>]tim ú-ul az-az-az]*
19. *ù te<sub>4</sub> -ma-am [ša-a-tu]*
20. *ú-ul e-še-em-[me]*
21. *i-na-an-na te<sub>4</sub>-ma-[am]*
22. *ša a-na še-er Ḥa-am-mu-ra-bi*
23. *i-ša-ap-pa-ru*
24. *an-ni-tam la an-ni-tam*
25. *a-bi li-iš-pu-rn-am*
26. *'Ha-ià -su-mu-ú*
27. *i-na mu-ut-ta-at li-ib-bi-šu*
28. *it-ti be-lí-ia i-ta-wi*
29. *ù te<sub>4</sub> -em-šu ga-am-ra-am*
30. *a-na še-er be-lí-ia*
31. *ú-ul i-ša-ap-pa-ar*

## **Թարգմանություն**

**Դկ**

1. «Աքբա-Ախիմին
2. ասա՛,
3. Այսպես է ասում Յամծումը՝
4. քո [որդին]:
5. Մեկ, երկու և տասն անգամ
6. Խայա-սումուին այս բառերով
7. իմ տերը գրեց՝  
«8-9. ամեն անգամ, երբ սուրհանդակներն այցելում են քո տուն,
10. երբ իմ ծառա Յամծումը
11. մասնակցում է Գաղտնի խորհրդին»:
12. Ահա թե ինչ է գրել իմ տերը՝
13. այժմ Աթամրումի մասին լուրը,
14. Կուննամանի մասին լուրը,
- Հետո 15-16. և Սուրբարտումի թագավորների մասին լուրերը,
17. որ ուղարկվել են նրան,
18. Գաղտնի խորհրդին [(չայցելող)],
19. այս լուրերը
20. ես չեմ կարող լսել:
21. Այժմ լուրը,
22. որ Համմուրապիին,
23. նա ուղարկում է,
24. ինչ էլ որ լինի,
25. քող հայրս գրի ինձ:
26. (Քանի որ) Խայա-սումուն,
27. (միայն) իր սրտի կեսով է
28. խոսում իմ տիրոջ հետ:
- 29-30. Նա նաև լուրերն ամբողջական չի ուղարկում իմ տիրոջը»:

\* Նամակում ոմն Յամծումը դժգոհում է, որ ոմն Խայա-սումուն, հակառակ Աքբա-Ախիմի խնդրանքին, իրեն հնարավո-

րություն չի տվել մասնակցելու գաղտնի խորհրդին: Հաղորդվում է, որ այս պատճառով չհաջողվեց իմանալ կարևոր տեղեկությունները: Նամակում կասկածի տակ է առնվում Խայասումով հավատարմությունը Զիմրի-լիմին: Կրկին հիշատակված են նաև Սուբարտուի արքաները:

**ARMT 26 I/2: № 309.**  
**Գիտական տառադարձումը՝**

**Դկ**

1. [a-na] *Ia-an-ši-i[b-...]*
2. *qí-bí-[ma]*
3. *um-ma [Ia]-am-šú-[um]*
4. *ra-im-ka-a[-ma]*
5. *ki-ma 1-šu 2-šu և 10-[šu a-na še-er]*
6. *'[H]a-ià-su-mu- [ú]*
7. *b[e]-lí [i]š-pu-rn-[am u[m-ma be-lí-ma]*
8. *'I[a-am-šú-u]m ՚R-[di]*
9. *i-na pí-r[i-i]š₇-tim li-iz-[zi-iz]*
10. *an-n[i-tam be-]lí i[š-p]u-rn-am*
11. *[i-na-an-na te₄]-em A-tam-ri-im*
12. *[te₄-em Ku]-un-na-ma-an*
13. *ù t[e₄-e]m LUGAL.MEŠ*

**Ըկ**

14. *[ša Šu-ba]-ar-tim*
15. *[ša a-na s]e-ri-šu ub-ba-lu*
16. *[i-na pí-ri-]iš₇-tim ú-ul a[z-az-a]z*
17. *ù te₄-m[a-am ſ]a-a-ti ú-u[l e-še-e]m-[m]é*
18. *i-na-an-n[a] te[₄]-ma-[am]*
19. *ša a-na še-er x[...]*
20. *i-ša-ap-p[a-ru]*
21. *an-ni-tam [l]a an-ni-tam b[e-lí li-iš-pu-ra-am]*
22. *'Ha-ià-su-mu-[ú]*
23. *i-na mu-ut-ta-at li-i[b-bi-šu]*
24. *it-ti be-lí-*<ia>* i-ta-[wi]*
25. *ù te₄ -em-šu [g]a-am-r[a-am]*
26. *a-na še-er be-lí-[ia]*
27. *ú-ul i-ša-ap-[pa-ar]*

## **Թարգմանություն**

### **Դկ**

1. Յանձի[թ-...]-ին
2. ասա',
3. Այսպես է ասում Յամծումը՝
4. քո ընկե[րը]:
5. Մեկ, երկու և տասն անգամ
6. Խայա-սումուին այս բառերով
7. իմ տերը գրեց՝

«8-9. ամեն անգամ, երբ սուրհանդակներն այցելում են քո տուն, երբ իմ ծառա Յամծումը մասնակցում է Գաղտնի խորհրդին»:

10. Ահա թե ինչ է գրել իմ տերը՝
11. այժմ Աթամրումի մասին լուրը,
12. Կուննամանի մասին լուրը,
- 13-14. և Սուբարտումի թագավորների մասին լուրերը,
15. որ ուղարկվել են նրան,

### **Հկ**

16. Գաղտնի խորհրդին [(չմասնակցող)]:
  17. Ես չեմ կարող լսել այս լուրերը:
  18. Այժմ լուրերը,
  19. որ [ ... ], ինչ էլ որ լինեն,
  20. որ նա ուղարկում է,
  21. թող [իմ] տ[եր]ը գրի ինձ:
  - 22-27. (Քանի որ) Խայա-սումուն, (միայն) իր սրտի կեսով է խոսում իմ տիրոջ հետ: Ավելին, ամբողջական լուրեր չի ուղարկում իմ տիրոջը»:
- \* Նամակն իր բովանդակությամբ բավականին մոտ է նա-խորդ նամակի տեքստին: Նամակն ուղարկված է Յամծումի կողմից իր ընկեր՝ Յանձի[թ-...]-ին:

**ARMT 26 I/2: № 365-bis.**  
**Գիտական տառադարձումը՝**

**Դկ**

1. *a-[n]a [be-l]í-ia [qí-bí-ma]*
2. *[um]-ma Ia-ri-im<sup>d</sup>IM ՚[R-ka-a-ma]*
3. *[KASKAL š]a be-lí-ia [a?]-[n]a ma-a-at Ia-am-ha-ad*
4. *[.....] Ra-za-ma-a.KI ւ ma-a-at Šu-b[a-ar-tim.KI]*
5. *[.....] te<sub>4</sub>-ma]-am ša-a-tu Ba-ah-di-[li-im]*
6. *[i-na pa-ni-tim a-na še-er be-lí-ia i]š-pu-ra-a[m]»*

**Թարգմանություն**

**Դկ**

1. «Տիրոջս, ասա՛
2. այսպես է ասում Յարիմ-Աղդուն՝ քո ծառան
3. իմ տիրոջ [արշավանքը] դեպի Յամխադի երկիր [...]
4. [...] Ուզաման և Սուլբարտումի երկիրը [...]
5. [...] Բախտի-լիմն այս լուրը
6. նախապես գրել է իմ տիրոջը»:

\* Բավականին վնասված նամակը հասցեագրված է Զիմրի-լիմին Յարիմ-Աղդուից: Նամակի սկզբում նկարագրված է Զիմրի-լիմի դեպի Յամխադ կատարած արշավանքի նկարագրությունը: Ապա և (գրեթե նոյնական է և մասամբ վերականգնվում է ARMT 26 I/2: № 365-ի հիմնական տեքստի օգնությամբ) Մութիաբայից մի մարդ, որին գերի էին վերցրել էլամցիները, առաջարկում է Սուլկալին, որ իր հայրենակիցները ապստամբեն Համմուրապիի դեմ: Վերջինս, նախապես զգուշացված լինելով նման ելքի մասին, Կազալլուի ժողովորդին առաջարկում է ապաստանել Բաբելոնում: Բնակչության մի մասը համաձայնվում է, իսկ մնացածը նախընտրում է տեղում մնալ: Բաբելոնի պաշտոնյաների կոտորածից հետո Համմուրապին ջոկատ է ուղարկում, որը ջախջախում է ապստամբ մութիաբալցիներին:

ARMT 26 I/2: № 384  
Գիտական տառադարձումը՝

**Դ**

1. «[ik-šu]-[du-nim ( ... ) [ru?]] [....]
  2. ù te<sub>4</sub>-em be-lí ú-wa-i-[ra-an-ni ... ]
  3. DUMU.MEŠ ši-ip-ri ša Iš-me-<sup>d</sup>Da-gan a-n[a ....]
  4. i-na Di-il-da-ba.KI u<sub>4</sub>-ma-am ša ik-[šu-du-nim a-na ba-ab é-kál-lim is-ni-qú]-ma
  5. it-ti Ḫa-am-mu-ra-bi ú-ul in-n[am-ru a-na še-er <sup>d</sup>Su'en-be-el-ap-lim SUK]KAL ú-ba-ri
  6. a-na ka-ra-ši-im il-li-ku-[nim-ma a-na pa-ni-šu-nu lú SUKKAL ú-ba-ri]
- 7-18.
- .....

19. um-ma Iš-me-<sup>d</sup>Da-gan ḪR-ka -a-ma a-na ma-ru-uš-ti be-lí-ia uš-ta-am-ri-iş
  20. i-nu-ma LÛ.ELAM.MA it-ti be-lí-ia na-ak-ru LUGAL.MEŠ ša ma-a-at Šu-bar-tim
  21. kar-ši-ia a-na LÛ.SUKKAL ELAM.MA-tim i-ku-lu-ma a-na ÈŠ.NUN.NA.KI it-ru-ni-in-ni<sub>5</sub>-ma
  22. LÛ SUKKAL ELAM.MA-tim ú-sà-an-ni-qa-an-ni-ma i-na ša ra-si ú-še-e-em
  23. ù i-nu-ma LÛ.ELAM.MA a-lam Ḫi-[r]i-tam.KI la-wu-ú ša a-na be-lí-ia ú-[d]a-mi-qú
  24. be-lí-mai-de-e [a]-na ma-ru-uš-ti be-lí-ia uš-ta-am-ri-iş
  25. i-na-an-na na-wa-ar be-lí-ia a-na-ku a'-a<sub>4</sub>-di-ir Za-z-i-ia LÚ tu-ru-uk-ku-ú
  26. a-na ma-a-ti-ia iḥ-ḥa-[ba-t]am-ma 3 4 a-la-né-ia il-qé-e
  27. ma-a-ti ú-ba-za-a' ù a-na ša-bi-im aš-pu-ra-kum-ma ša-ba-am
- 28-60. .....

**Հ**

61. <sup>1</sup>Ha-am-mu-ra-bi ki-a-am iq-bi um-ma šu<-ma> LUGAL.MEŠ ša m[a]-a-at Šu-bar-t[i]m
62. ú-ba-nam e-li be-lí-ku-nu ta-ar-šu-ma ki-a-am aš-pu-ur-šum um-ma a-na-ku-ma

63. *a-na LUGAL.MEŠ ša a-ia-ši-im ma-ru-tam i-ša-ap-pa-ru-nim at-ta a-ḥu-tam [šu-pu-ur]*  
 64. *a-na Zi-im-ri-li-im ša a-ia-ši-im a-ḥu-tam i-ša-ap-pa-ra-am*  
 65. *at-ta ma-ru-tam šu-pu-ur an-ni-tum ša aš-pu-ru-šum ha-ṭi-e-et»*

## Թարգմանություն

«**ՀԿ**

1. Ժամանել են [ ... ]
2. և այն հաղորդագրությունը, որով իմ տերը ինձ մեղադրել էր [ ... ]:
3. Իշմե-Դագանի սուրիանդակները [ ... ]
4. Դիլդաբայում՝ այն օրը, երբ նրանք հասան, մոտեցան պալատի դարպասին,
- 5-6. բայց նրանք զրոյց չեն ունեցել Համմուրապիի հետ: Նրանք գնացին ճամբար՝ [արտաքին գործերի նախարարի մոտ, [Սին-Բէլ-ապիհմը և այս մեկը] դուրս եկան նրանց ոլիմավորելու համար]:

7-18.

---



---

19. Այսպես է ասում քո ծառա Իշմե-Դագանը. Ես ինքս ինձ նեղություն կրեցի (հիվանդացա) իմ տիրոջ դժվարությունների պատճառով:
20. Երբ Էլամացիները պատերազմում էին իմ տիրոջ հետ՝ Սուրարտումի երկրի թագավորները
21. զրպարտեց ինձ Էլամի սուկկալուի առջև, և ինձ տարան Էշնունա:
22. Էլամի սուկկալուն ինձ դաս տվեց, և Ես հենակներով դուրս եկա(՞):
23. Եվ երբ Էլամացիները պաշարեցին Խիրիթում քաղաքը, այն ծառայությունը, որը Ես մատուցեցի իմ տիրոջը,
24. իմ տերը գիտի: Ես հիվանդացա իմ տիրոջ դժվարությունների պատճառով:

25. Այժմ ես հարգում եմ իմ տիրոջ շքեղությունը: Զազիա, սուլրուկեացին,
26. գնաց դեպի իմ երկիր, և վերցրեց 3 կամ 4 քաղաք:
27. Իմ երկիրը դժբախտության մեջ է, և ես քեզ գրեցի զորքերի մասին, բայց որու ինձ չտվեցիր զորք, սակայն ուղիշներին տվեցիր:
- 28-60. Այնուհետև Իշմե-Դագանի և Համմուրապիի դեսպանները պարզում են, թե արդյոք վերջիններս իսկապես զորք են դրվել՝ որևէ մեկին օգնելու համար, և մի շարք այլ հարցեր, մասնավորապես արդյոք Իշմե-Դագանը վերաբերում է Զիմրի-Լիմին՝ Մարիի թագավորին՝ որպես հավասարի կամ վերադասի: Համմուրապին Իշմե-Դագանի սուրհանդակներին հայդարարում է՝**
61. Համմուրապին ասաց (Իշմե-Դագանի) սուրհանդակներին. «Սուրբարտումի թագավորները.
62. դատապարտեցին (մարդնացոց արեցին) ձեր տիրոջը: Ես նրան գրեցի այս հետևյալ պայմաններով.
63. «Թագավորներին, որոնք գրում են ինձ որպես որդիներ, գրի՞ր նրանց որպես եղբայրներ:
64. Զիմրի-Լիմին, որը գրում է ինձ որպես եղբայր՝
65. Դու նրան որպես որդի գրի՞ր», վա՞տ է այն, ինչ գրել եմ նրան»:

\* Նամակում ուղարկողի և հասցեատիրոջ անուններով ներածական բանաձևը չի պահպանվել, բայց հասցեատերը, ըստ երևույթին, Զիմրի-Լիմն է: Էքալաթումի սուրհանդակները (Իշմե-Դագանից՝ Շամշի-Ադադի որդին, նրա կառավարչակիցն ու ժառանգորդը), Դիլտաքա են ժամանել, Համմուրապիի համար ուղերձով: Ակզբում հաղորդվում է, որ դեսպանները հրաժարվել են կարդալ նամակը Մարիի ներկայացուցիչների ներկայությամբ:

## ARMT 27: № 147

### Գիտական տառադարձումը՝

- «6. *te₄-mu-um a-na Ha-am-[mu-r]a-bi*  
 7. *ki-a-am im-qú-ut um-ma-a-mi* LÚ SUKKAL NIM.MA-*tim*  
 8. 20 *li-mi ša-ba-am* ÈŠ.NUN.NA.KI և 10 *li-mi* NIM.MA  
 9. 30 *li-mi ša-ba-am a-na ma-a-at Šu-bar-tim*  
 10. *iṭ-ru-ud .... »*

### Թարգմանություն

- «6. Այս լուրը Համմուրապիի վրա  
 7. կարծես փլուզվեց: Էլամի սուկկալը ուղարկեց  
 8. 20 հազար էշնունայից զորք և Էլամից 10 հազար,  
 9. ընդհանուր 30000 զորք Սուբարտու երկիր  
 10. ուղարկեց»:

\*Նամակ՝ հասցեագրված Զիմրի-Լիմին՝ Զիմրի-Ադրուից:

## ARMT 2: № 81

### Գիտական տառադարձումը՝

- «1. [a-na] *be-lí-ia*  
 2. [...] *qí-bí-ma*  
 3. *um-[m]a Za-ki-ra-ha-am-mu-u*  
 4. ID-*ka-a-ma*  
 .....  
 25. *ú ka-lu-šu a-na še-im iš-tu Šu-bar-tim»*

### Թարգմանություն

- «1. Տիրոջս  
 2. ասա՝,  
 3. այսպես է ասում Զակիրա-Խամմուն՝  
 4. քո ծառան:  
 .....  
 25. Սուբարտուից (թերված, ներմուծված) յուրաքանչյուր հացահատիկի համար»:

\* Կատունանայի կառավարիչ Զակիրա-Խամմուլի նամակը՝ հասցեագրված Զիմրի-Լիմին: Հիմնական բովանդակությունը հետևյալն է. խոսքը հացահատիկի մասին է, որը թագավորի իրամանով պետք է տրվի Զակիրա-Խամմուլին Ենթակա Կատունանայի բնակչությանը և այլն:

**ARMT 6: № 27, Durand 1997: № 424.**

### **Գիտական տառադարձումը՝**

#### **Դ**

1. «[a-n]a be-lí-ia qí-b[í-ma]
  2. [u]m-ma Ba-ah-di-Li-im ID-k[a-a-ma]
  3. a-lum Ma-ri.(KI) é-kál-lum ù ha-al-[sum ša-lim]
  4. ša-ni-tam MÂRU.MEŠ ši-ip-ri e-ti-i[q-tum ...]
  5. a-na É-kál-la-tim.(KI) ù [...]
  6. <sup>(1)</sup>I-ba-al-<sup>d</sup>IM MÂR [ši-ip-ri ... ]
  7. <sup>(1)</sup>Ha-aq-bu-da-di [...]
  8. ù IM.GUR.<sup>d</sup>UTU LÚ [...]
  9. 3 LÚ.MEŠ šu-nu-ti ú- [...]
  10. i-na qa-ab-li-it bu-lim [...]
  11. a-na še-er Me-ep-ti-i-im ir-[du-ni-iš-šu-nu-ti]
  12. ù Me-ep-tu-ú a-na [š]e-ri-i-[a it-ru-da-aš-šu-nu-ti]
- 

#### **Հ**

15. ù wu-ú-ur-ta-šu-nu áš-ta-al-ma
16. a-na Iš-me-<sup>d</sup>Da-gan ù Ha-am-mu-ra-bi
17. ki-a-[a]m ša-ap-ru um-ma-a-mi ma-a-at Šu-bar-tim
18. i-na qa-ti-ku-nu ki-la ù ša-ba-am til-la-tam
19. a-na LÚ KÁ.DLNGIR.RA.KI la ta-na-ad-di-na
20. ú a-na Zi-im-ri-li-im šu-up-ra-am
21. [sa-b]a-am til-la-tam a-na LÚ KÁ.DLNGIR.RA.KI
22. [l]a i-na-ad-di-in»

### **Թարգմանություն**

#### **Դ**

1. «Տիրոջս ա[սա՛]»,
2. [այ]սպես է ասում Բախտի-Լիմը՝ քո ծառ[ան]՝
3. Մարի քաղաքը, պալատը և շրջանը [լավ են կատարում]:

4. Մեկ այլ դեպք: Սուրիհանդակները, անցնելով
  5. Էկալլաթումին և [....]
  6. Իբալ-Աղդուն, սուրի[հանդակ]
  7. Խաբթու-դադին [....]
  8. և հմգուր-Շամաշը, մարդը (փղամարդ) [...]
  9. Երեք մարդ (փղամարդ) [...]
  10. Նախիրի մեջ [...]
  11. [նր]անց Մեպտումը առ[աջնորդեց]
  12. և Մեպտումը [նրանց ուղարկեց] ինձ մոտ:
- .....

## **ՀԿ**

15. Ես նաև հետաքրքրվեցի նրանց առաքելությամբ,
16. Իշմե-Դագանի և Համմուրապիի հետ,
17. դրանք գործարկվում են հետևյալ կերպ. «Պահե՛ք Սուրարտուի երկիրը
18. Զեր ձեռքերում և օժանդակ (օգնական, համալրման համար) զորքեր
19. Բարելոնի մարդուն մի՛ ուղարկեք:
20. և Զիմրի-Լիմը կգոի,
21. որ Բարելոնի մարդուն օժանդակ զորքեր
22. չի ուղարկել»:

\* Բախտի-Լիմի նամակը հասցեագրված Զիմրի-Լիմին: Նամակի բովանդակության մեջ ներկայացված է Միջագետքի ռազմաքաղաքական իրադրությունը: Այն, ըստ երևույթին, հասցեագրված է եղել Իշմե-Դագանին:

## **ARMT 13: № 117 Գիտական տառադարձումը՝**

## **ԴԿ**

1. «[a-na] be-lí-[i]a
2. [q]l-bí-ma
3. [um]-ma Kibri-<sup>d</sup>Da-[gan]

4. [I]D-ka-a-[ma]

---

**Rev.**

1. [.....]
2. *um-m[a? ...]*
3. LUGAL.MEŠ [*ša ma*]-*a-at Šu-b[a-ar-tim]*
4. [*it-ti*] [*be-lí-ia pa-ah-ru* ù [...]]
5. [*k*]*a-mi-ìs an-ni-tam ú-ba-si-[ra-an-ni]*
6. [*a-n*]*a-ku* ù LÚ.MEŠ ŠU.GI *a-lim.KI*
7. [.. *b*]*e-lí-ia* ù *um-ma-na-ti-šu-nu ka-[....]*
8. [x x x *a*]-*na pa-an be-lí-ia* ù *um-ma-na-ti-š[u*
9. [..... *i-na*]-*an-na* LUGAL.MEŠ *ša Šu-ba-ar-ti[m ...]*
10. [.....] *um-ma-na-tum ra-ap-ša-[t]um it-ti* [...]

**Թարգմանություն**

**Հկ**

1. «Տիրոջս
  2. [ասա՛],
  3. [այսպես է այսում Կիբրի-Դագանը՝
  4. [քո] [ծառ]ան:
- 

**Հկ**

1. [...]
2. այս պայմաններով [...]
3. Սուբարտու Երկրի արքաները ...
4. Իմ [տիրոջ] հետ հավաքվել են և [...]
5. միացան»: Ահա թե ինչ ասաց նա ինձ:
6. Ես և քաղաքի մեծերը (ավագանին - հեղ.)
7. [... իմ տիրոջ և նրանց զորքերը [...]
8. [...] իմ տիրոջ առջև և նրա զորքերը [...]
9. [...] Այժմ Սուբարտուի արքաները [...]
10. [.....] մեծաքանակ զորքով հանդերձ [...]

\* Տերքայի կուսակալ Կիբրի-Դագանի նամակը Զիմրի-Լիմին:  
Նամակը բավականին վնասված է և վերականգնելու համար  
վատ պահպանված:

**ARMT 14: № 50**  
**Գիտական տառադարձումը՝**

**ՀԿ**

1. «*a-na [be-l]í-i-a*
2. *qí-bí-ma*
3. *um-ma Ia-qi-im- <sup>d</sup>IM*
4. *ID-ka-ma*
5. *LÚ <sup>d</sup>A-mi-i-ba-al šum-šu*
6. *LÚ Na-še-er.KI iš-tu I-la-an-šú-ra-a.KI*
7. *it-ta-al-kam 1 LÚ i-na bi-ir-tim*
8. *ša i-na I-la-an-šú-ra-a.KI wa-aš-bu*
9. *[š]a a-na LÚ.MEŠ pa-ṭe<sub>4</sub>-ri ta-ri-im*
10. *[i]l-li-kam iš-b[a-as-s]ú [u]m-m[a]-a-mi*
11. *[p]a-ṭe<sub>4</sub>-er ù <sup>d</sup>A-[mi-i-ba-al]*
12. *[k]i-a-am i-pu-ul-šu*

**ՀԿ**

13. *u[m-m]a-a-mi iš-tu MU 4 KAM*
14. *a-na ma-a-at Šu-bar-tim aḥ-bu-ur-m[a]*
15. *i-nu-ma A-tam-rum iš-tu EŠ.NUN.NA.KI*
16. *i-le-em ni-ku-ra-tim ap-la-aḥ-ma*
17. *a-na li-ib-bi I-la-an-šú-ra-a.KI*
18. *e-ru-ub-ma it-ti aḥ-ḥi-ia wa-aš-ba-ku*
19. *ú-ul a-na bé-eḥ-ri-im mu-ul-la-a-ku»*

**Թարգմանություն**

**ՀԿ**

1. «[Տիր]ոջս
2. ասա՛,
3. այսպես է ասում Յաքիմ-Աղդուն՝
4. քո ծառան:

5. Ամի-իբալ անունով մի մարդ,
6. ծագումով նաշերցի՝ հլանծուրայից
7. Եկավ: Մի մարդ ամրոցից՝
8. հլանծուրայի, Եկել էր
9. վերադարձնելու դասալիքներին,
10. (և) բռնելով նրան ասաց՝
11. «Դասալիք է», բայց Ամի-իբալը
12. նրան պատասխանեց,

#### *Հկ*

13. ասելով՝ «Չորս տարի է, ինչ
14. ես տեղափոխվել եմ Սուբարտու:
15. Երբ Ատամրում բարձրացավ Էշնունայից,
16. ես թշնամիներից վախեցա
17. (և) փախա հլանծուրա:
18. Որտեղ ես բնակվում եմ եղբայրներիս հետ:
19. Ինձ երբեք ծառայության չեն վերցրել ....»:

\* Այս նամակը պատկանում է Սագարատումի կուսակալ Յաքիմ-Աղդուին և նույնպես հասցեագրված է Զիմրի-Լիմին:

#### ARMT 14: № 112 Գիտական տառադարձումը՝

#### *Հկ*

1. «*a-na be-lí-ia*
  2. *qí-bí-ma*
  3. *um-ma Ia-qi-im-<sup>d</sup>IM*
  4. *ID-ka-ma*
- 

#### *Հկ*

19. *te<sub>4</sub>-em şa-bi-[i]m*
20. *şa i-ka-aš-şa-dam aš-şum a-na Ma-ri.KI*
21. *e-te-qí-im ù la e-te-qí-im*

22. *an-ni-tam la an-ni-tam be-lí li-iš-pu-ra-am*
23. *ù aš-šum SÁ.DUG<sub>4</sub> LÚ GAL MAR.TU.MEŠ*
24. *ša LUGAL.MEŠ Šu-ba-ri-i ša i-na pa-an*
25. *ša-bi-im i-la-ku-nim*
26. *ù mi-id-di LUGAL-ma ša Šu-bar-t[im]*
27. *pa-an ša-bi-šu i-ša-ab-ba-tam*
28. *[t]e<sub>4</sub>-em SÁ.DUG<sub>4</sub> LUGAL.MEŠ ù SÁ.DUG<sub>4</sub>*
29. *LÚ GAL MAR.TU.MEŠ ša ma-at Šu-bar-tim*
30. *be-lí li-iš-pu-ra-am»*

### **Թարգմանություն**

#### **ՀԿ**

1. «[Տիր]ոջս
  2. ասա',
  3. այսպես է ասում Յաքիմ-Աղբուն՝
  4. քո ծառան:
- .....

#### **ՀԿ**

19. Զորքի վերաբերյալ,
20. որ կժամանի, մուտքը Մարի
21. թույլատրե՞մ, թե՞ չթույլատրեմ:
22. Այս կամ այն, թող իմ տերը գրի:
23. Եվ ինչ վերաբերում է ամորեացի առաջնորդների օրապահիկին,
24. որ սուբարական արքաների (մարդիկ)
25. գլխավորում են զորքը,
26. կամ հնարավոր է Սուլարտուի արքան
27. իր զորքը կգլխավորի:
28. Ինչ վերաբերում է արքաների օրապահիկին և օրապահիկին,
29. Սուլարտու երկրի ամորեացի առաջնորդների՝
30. թող իմ տերն ինձ գրի»:

\* Կրկին Սագարատումի կուսակալ Յաքիմ-Աղդուի նամակ-ներից՝ հասցեագրված է, Զիմրի-Լիմին: Բավականին հետաքրքիր այս նամակ-գեկուցում Յաքիմ-Աղդուն հայտնում է, որ Սադախումից իբալ-պի-Էլն ու Ամուդ-պի-Էլը զորքով, որոնց թվում նաև հազար խանեացիներ, դուրս են Եկել Կատտունայից և շարժվում են դեպի Սագարատում:

**Հինբարելոնյան արձանագրություններ. Բարելոնիայի  
արքա Համմուրապիի տարեգրական/թվագրական  
բանաձևերը և տնտեսական բնույթի այլ տեքստեր**

**Ungnad 1938: 180, Oppenheim 1955: 270.**

### **Գիտական տառադարձումը՝**

«30. MU *Ha-am-mu-ra-bi* LUGAL-e á-gál ki-ág <sup>d</sup>*Marduk-ké usu mah* DINGIR gal-gal-e-ne ugnim ELAM.KI-ma zag *Mar-ha-ši.KI-ta* SU.BIR<sub>4</sub>.KI *Gu-ti-um.KI EŠ.NUN.NA.KI ù Mā-al-gi.KI nam-dugud-bi im-zí-zí-eš-àm gár-dar-a-bi i-ni-in-gar-ra-a suhuš KI.EN.GI KI.URI i-ni-in-gi-bi»*

### **Թարգմանություն**

«30. Այն տարին, երբ Համմուրապի արքան՝ Մարդուկ աստծո հզոր սիրելին, մեծ աստվածների գերագույն զորությամբ ջախջախեց բանակը Էլամի, որ հավաքել էր Մարխաշի, Սուրբարտուի, Գուտիումի, Էշնունայի (*Snuallih – հեղ.*) և Մալագայի սահմաններից, որոնք մեծ զորությամբ բարձրացել էին, մեկ արշավանքով ջախջախեց Նրանց, և նա (Համմուրապին) ապահովեց Շումերի և Աքքադի հիմքերը»:

\* Այստեղ ներկայացվել է Բարելոնիայի արքա Համմուրապիի կառավարման 30-րդ տարվա տարեգրական բանաձևը:

**Ungnad 1938: 180, Oppenheim 1955: 270.**

**Գիտական տառադարձումը՝**

«32. MU ḫa-am-mu-ra-bi LUGAL ur-sag ù-ma sá-sá <sup>d</sup>Marduk-ké GIŠ.TUKUL KALAG-ga EŠ.NUN.NA.KI SU.BIR<sub>4</sub>.KI Gu-ti-um.KI mè-ta šu bí-ib-šub-bi ma-da Ma-an-ki-súm.KI ù ma-da <sup>ID</sup>IDIGNA en-na ma-da SU.BIR<sub>4</sub>.KI-šè šu-ni ša sá bí-du<sub>11</sub>-ga»

**Թարգմանություն**

«32. Այն տարին, երբ Համմուրապի արքան, հերոս, որը Մարդուկ աստծո համար հաղթանակների է հասնում: Իր հզոր զենքով ջախջախեց Էշնունայի, Սուբարտուի և Գուտիումի ամբողջ բանակներն ու զինվորներին և նվաճեց Մանկիսում երկրները և Տիգրիսի ափի երկրները մինչև Սուբարտու:»

\* Համմուրապիի կառավարման 32-րդ տարվա տարեգրական թանաձնը:

**Ungnad 1938: 180, Oppenheim 1955: 270.**

**Գիտական տառադարձումը՝**

«33. MU ḫa-am-mu-ra-bi LUGAL-e ID-ḥa-am-mu-ra-bi-nu-ḥu-uš-ni-ši šá šà-ge túm-àm AN <sup>d</sup>EN.LÍL mu-un-ba-al A da-rí hè-gál-ka NIBRU.KI ERIDU.KI URI.KI LARSA.KI-ma UNUG.KI-ga ī-si-in-na.KI mu-un-gar-ra-àm KI.EN.GI KI.URI bir-bir-re-a ki-bi-šé bì-ing-i-a ugnim Ma-rí.KI ù Ma-[al-gi.KI] mè-ta bí-ib-šub-bé Ma-rí.KI ù á-dam-bi ù URU.DIDL SU.BIR<sub>4</sub>.KI du<sub>11</sub>-ga-ni ku-li-bi bí-in-tuš»

**Թարգմանություն**

«33. Այն տարին, երբ Համմուրապի արքան, փորեց ջրանցքը (կոչեց) «Համմուրապին առատություն է մարդկանց համար», Ան և Էնլիլ աստծո սիրելին հավիտենական առատ ջրեր հաստատեց Նիպուրի, Էրիդուի, Ուրի, Լարսայի, Ուրուկի և Խսինի համար: Վերականգնեց Շումերն ու Աքքադը, որոնք ցրված էին, մարտում ջախջախեց Մարդի ու Մալդի բանակները, տապալեց և ստիպեց բարեկամաբար բնակվել նրանք:

իշխանության ներքո Մարի Երկրներին ու Սուլարտուի տարբեր քաղաքներին»:

\* Համմուրապիի կառավարման 33-րդ տարվա տարեգրական բանաձևում կրկին հիշատակվում է Սուլարտու Երկիրը, փաստացի՝ Երկու տարի անընդմեջ:

**Ungnad 1938: 181, Oppenheim 1955: 270.**

#### **Գիտական տառադարձումը՝**

«37. MU *Ha-am-mu-ra-bi* LUGAL-e Á.KAL gal <sup>d</sup>Marduk-ka-ta ugnim ÉREN.MEŠ *Qú-tu-ú Su-tu-um* և *Tu-ru-uk-kum.KI Ka-ak-mu-um.Ki* և KUR SU.BIR<sub>4</sub>.KI-bi-ta mè-ta bí-íb-šub-ba»

#### **Թարգմանություն**

«37. Այն տարին, երբ Համմուրապի արքան Մարդուկ աստծո մեծ զորությամբ մարտում տապալեց Գուտիումի, Սուլումի, Տոլումկուի, Կակմուի և Սուլարտու Երկիրի բանակներն ու զինվորներին»:

\* Համմուրապիի կառավարման 37-րդ տարվա տարեգրական բանաձևում կրկին հիշատակվում է Սուլարտու Երկիրը:

**Ungnad 1938: 181, Oppenheim 1955: 270, Stol 1976: 33.**

#### **Գիտական տառադարձումը՝**

«39.1. MU *Ha-am-mu-ra-bi* LUGAL-e Á.KAL kala-ga AN <sup>d</sup>EN.LÍL *mu-un-na-sum-ma-ta* kilib gú-dà-a-bi KUR SU.BIR<sub>4</sub>.KI-šè-ta sag giš bí-in-ra»

«39.2. MU *na-ap-ḥa-ar* KUR *Šu-ba-ar-tum*»

#### **Թարգմանություն**

«39.1. Այն տարին, երբ Համմուրապի արքան Ան և Էնլիլ աստծո կողմից պարգևած մեծ զորությամբ մինչև Սուլարտու Երկիր մարտում ջախջախեց բոլոր թշնամիների ամբողջությունը»:

«39.2. Այն տարին, երբ Սուլարտու Երկրի ամբողջությունը ...»:

\* Համմուրապիի կառավարման 39-րդ տարվա տարեգրական բանաձև:

**Stol 1976: 33-34.**

### **Գիտական տառադարձումը՝**

«MU *Ha-am-mu-ra-bi* LUGAL MA.DA KUR S[U]<sup>1</sup>.BIR<sub>4</sub>.KI É.GAL-la-tum.KI *Bu-ru-un-da*.KI և MA.DA Za-[a]m<sup>2</sup>-la-áš.KI GÚ (կամ՝ ZAG<sup>1135</sup>) ÍD.IDIGNA EN.NA ÍD.[UD].KIB.NUN.KI gú.ki.šè MI.NI.GAR»

### **Թարգմանություն**

«Այն տարին, երբ Համմուրապիի հպատակեցրեց Սուլարտումը, Էկալլատումը, Բուրունդան և Զամլաշ (՝) Երկիրը Տիգրիսից մինչև Եփրատ»:

\* Համմուրապիի կառավարման անհայտ տարվա տարեգրական բանաձև:

**Gadd, Legrain 1928:** № 146, Col. 3 (*շում. պերսկո*), Col. 4 (*արք. պերսկո*), հմմտ.<sup>1</sup> **Frayne 1990:** 339, E4.3.6.5

### **Գիտական տառադարձումը՝**

#### **Սյունակ III**

- «1. LÚ [NI]M<sup>(2)</sup>.KI
- 2. Gu-ti-um.KI
- 3. SU.BIR<sub>4</sub>.KI
- 4. *Tu-uk-ri-iš.KI-KÈ*
- 5. KUR-bi bad-du
- 6. eme-bi GILI-ma
- 7. ki-da-bi-su
- 8. ISKIM ḥa-ma-tuk
- 9. um[uš]-a-bi»

---

<sup>1135</sup> Մանրամասն տե՛ս **Stol 1976:** 33-34:

## **Սյունակ IV**

- «1. [.....]
- 2. *Gu-ti-um.KI*
- 3. *SU.BIR<sub>4</sub>.KI*
- 4. *Tu-uk-ri-iš.KI*
- 5. *ša ša-du-šu-nu ne-su-ú*
- 6. *li-ša-an-šu-nu*
- 7. *e-eg-ru*
- 8. *a-na ri-it-ti-šu lu-wa-di-a-a-am*
- 9. *te-em-šu-nu*
- 10. *e-še-a-am a-na-ku-ma*
- 11. [I]u uš-te-eš-še-er»

## **Թարգմանություն**

- «1. [Էլամի]<sup>(۱)</sup> մարդկանց,
- 2. Գուտիում երկրի,
- 3. Սուլբարտու երկրի,
- 4. Տուկրիշ երկրի,
- 5. որոնց լեռները հեռու (բարձր) են,
- 6. որոնց լեզուները բարդ են՝
- 7. նրա (*Մարդուկ ասպծո – հեղ.*) ձեռքը հանձնեցի(՝)
- 8. (և) շփոթեցրեց
- 9. նրանց ծրագրերը, նա (՝)
- 10. ուղղորդեց (ինձ)
- 11. յոթերորդ [անգամ (՝)]»:

\* Համմուրապիի երկեզու՝ շումերերեն ու աքքադերեն նույնիմաստ պակասավոր արձանագրության մեջ նույնպես հիշատակված է Սուլբարտու երկիրը:

**Gelb 1944: 106.**

## **Գիտական տառադարձումը՝**

- «1. 1 SAG.GEMÉ *Ma-am-ma M[U.NI]*
- 2. *Šubarītum* (SAL SU.BIR<sub>4</sub>.KI)
- 3. *wa-ri-da-tum 'Bi-da-ra.KI»*

### **Թարգմանություն**

- «1. Մամմա անվամբ մեկ ստրկուիի,
2. սուբարիացի՝
3. ստրկուիի Բիդարա քաղաքից ...»:

\* Բարելոնիայի արքա Աբի-Էշուլսի (Ք.ա. 1711-1684 թթ.) կառավարման ժամանակաշրջանով թվագրվող մի առևտրական տեքստում<sup>136</sup> հիշատակվում է սուբարտացի կնոջ մասին:

**Gelb 1944: 106.**

### **Գիտական տառադարձումը՝**

- «1. 1 SAG.GEMÉ *Um-mi-<sup>d</sup>He-bi-it* MU.NI
2. *Šubarītum* (SAL SU.BIR<sub>4</sub>.KI)
3. *Ša-si-lí.KI»*

### **Թարգմանություն**

- «1. Ումմի-Խերիտ անվամբ մեկ ստրկուիի,
2. սուբարիացի՝
3. Շածիլի քաղաքից ...»:

\* Տեքստը թվագրվում է Բարելոնիայի արքա Ամմիդիտանայի (Ք.ա. 1683-1647 թթ.) կառավարման 4-րդ տարով:

**Finkelstein 1955: 1.**

### **Գիտական տառադարձումը՝**

- «1. 1 SAG.İR SU.BIR<sub>4</sub>.KI *A-ga-ab-[...]*
2. *Aš-la-ak-ka.KI*
3. *bi-ri-it* ԻԴ ...»:

### **Թարգմանություն**

- «1. Սուբարտուից Ագաբ- x-x անունով մեկ ստրուկ,

---

<sup>136</sup> Հին բարելոնյան տնտեսական բնույթի տեքստերում սուբարիացիների վերաբերյալ հիշատակությունների մասին մանրամասն տե՛ս Richardson 2020: 53-73:

2. Աշլակկա քաղաքից՝
3. գետերի միջև ...»

\* Բաբելոնիայի արքա Ամմիդիտանայի կառավարման 21-րդ տարով թվագրվող ստրուկու գնման և վաճառման հերթական տեքստը:

**Finkelstein 1955: 1.**  
**Գիտական տառադարձումը՝**

- «1. 1 SAG.GEMÉ *A-ba-šu-ša* MU.NI
2. *A-šu-uh.KI*
3. *KÙ.BI 1/2 MA.NA*
4. 1 SAG.GEMÉ *Pa-ħa-ia* MU.NI
5. *Lu-ub-da.KI*
6. *KÙ.BI 1/3 MA.NA 8 GÍN*
7. *ma-a-at SU.BIR₄.KI...»*

**Թարգմանություն**

- «1. Արաշուշա անունով մեկ ստրուկ,
2. Աշուխ քաղաքից՝
3. 1/2 մինա արծաթի դիմաց:
4. Պախիյա անունով մեկ ստրուկ,
5. Լուրդա քաղաքից՝
6. 1/3 մինա արծաթի դիմաց (և) 8 սիկդ արծաթ
7. Սուլբարտու երկրից ...»:

\* Բաբելոնիայի հաջորդ արքա Ամմիծադուկայի (Ք.ա. 1646-1626 թթ.) կառավարման 6-րդ տարով թվագրվող ստրկուիու վաճառման վերաբերյալ տեքստ:

**Finkelstein 1955: 1.**  
**Գիտական տառադարձումը՝**

- «1. 1 SAG.GEMÉ *Ta-ga-ša* [M]U.[N]I
2. *Ar-ra-mu.KI*
3. *ma-a-at SU.BIR₄.KI...»*

### **Թարգմանություն**

- «1. Թագաշա անունով մեկ ստրուկ,
- 2. Արամու քաղաքից՝
- 3. Սուլարտու երկրից ...»:

\* Ստրկուիու վաճառման հերթական տեքստ: Կրկին թվագրված Բաբելոնիայի արքա Ամմիδադուկայի կառավարման 6-րդ տարով:

**Finkelstein 1955:** 1.

**Ամմիծադուկայի կառավարման 9-րդ դարի՝  
Գիտական տառադարձումը՝**

«5. *a-na a-lu A-ku-ṣum* SU.BIR<sub>4</sub>.KI ... »

### **Թարգմանություն**

- «5. Դեպի Սուլարտուի Ակծում քաղաք ...»:

**Ամմիծադուկայի կառավարման 11-րդ դարի՝**

**Գիտական տառադարձումը՝**

«1 SAG.GEMÉ<sup>SAL</sup> *Si-nu-nu-tum* MU.NI

2. SAL SU.BIR<sub>4</sub>.KI

3. *Ar-ra-aḫ-ru.KI...*»

### **Թարգմանություն**

- «1. Շինունուառում անունով մեկ ստրկուիի,
- 2. Սուլարտու երկրից (*մի*) կի՞ն՝
- 3. Արրախու քաղաքից ...»:

\* Բրոնզա կացինների և ստրկուիու վաճառման տեքստ՝ համապատասխանաբար թվագրված նույն Ամմիծադուկայի կառավարման 9-րդ և 11-րդ տարիներով:

**Richardson 2010:** 64f.

**Գիտական տառադարձումը՝**

«1. [...] x 550 US<sub>5</sub>.UDU.ḪI.A

2. 12 ANŠE.ḪI.A և 1 SAG.İR SU.[BIR<sub>4</sub>].KI

3. *ša a-na ri-tim*<sup>d</sup>EN.ZU-na-di-in-šu-mi MÁŠ.ŠU.GÍD.GÍD
4. *a-na A-li-im-ki'-du* DUMU Ru-bi-a-[ta]-li-mi
5. É-Ú-ša-kan»

### **Թարգմանություն**

- «1. [ ... ] 550 գլուխ ոչխար և այծ,
2. 12 ավանակ և մեկ սուբարեացի ստրուկ,
3. որը գուշակ Սին-նադին-շումին տվեց
4. Ռարիյա-թալիմի որդի Ալիմ-Կիդուին՝
5. Բիթ-Ուշականից ...»:

\* Տեքստը անասունների, տարատեսակ ապրանքների և մեկ սուբարեացի ստրուկի գործով գուշակ Սին-նադին-շումիի հայցն է ընդդեմ Ալիմ-Կիդուի: Թվագրվում է Բաբելոնիայի արքա Ամմիդիտանայի կառավարման 4-րդ չորրորդ տարով:

## ԳԼՈՒԽ 3

### ՀԻՆ ԽԵԹԱԿԱՆ ԱՐՔՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ

Հին խեթական աղբյուրների մեջ ժամանակագրական առումով ամենահինը Կուսսարայի արքա Պիթխանայի որդի Անհտտայի տեքստն է<sup>137</sup>:

Ք.ա. XVIII դ. Փոքր Ասիայում տևական պայքարը քաղաք-պետությունների միջև հանգեցրեց Կուսսարայի արքայա-տոհմի հաղթանակին: Կուսսարայի արքա Պիթխանան գրա-վեց Նեսան (Քանեշը), իսկ նրա որդի Անհտտան՝ Զալպուվան՝ Պուրուսխանդան, Սալատիվարան և Խաթթուսան<sup>138</sup>:

Հետագայում Անհտտան՝ որպես Քանեշի արքա, Ք.ա. մոտ 1730 թ. գրավեց Խաթթի կենտրոն Խաթթուսան: Վեր-ջինս նրա իրամանով ավերվեց, և Անհտտան արգելեց այն վերականգնել և երիսէ բնակեցնել: Ճակատագրի հեգնանքով հետագայում հենց Խաթթուսան պիտի դառնար Խեթական պետության մայրաքաղաքը: Անհտտան նաև գերի վերցրեց Զալպուվայի արքա Խուցցիյային և նրան ու Զալպուվայի աստծուն տարավ Քանեշ:

Ք.ա. 1725 թ. նա պատերազմեց նաև Վասխանիյայի, Ուղամայի, Խարկիունայի, Զալպուվայի և Սալատիվարայի դեմ: Նա նաև դաշինք կնքեց փոքրասիական մեկ այլ հղոր պետության՝ Պուրուսխանդայի թագավորության հետ:

Անհտտայի և խեթական Հին թագավորության արքա-ների միջև ժառանգական կապի խնդիրը առայժմ պարզված չէ: Տեքստերից մեկում որպես արքա հիշատակվող ոմն Թուդ-խալիյան կարող էր լինել Անհտտայի անմիջական ժառան-գորդը, ըստ այդմ՝ Անհտտայից հետո Փոքր Ասիայում կարող

<sup>137</sup> Տե՛ս CTH 1:

<sup>138</sup> Տե՛ս Neu 1974: 10:

Էր շարունակվել նրա պետությունը՝ մեկ այլ կենտրոնում ընդհուած միջև էստոնական ժամանակաշրջանում է: Խեթական Հին թագավորության (Ք.ա. XVII-XV դդ.) հիմնադիր էստոնական հայության հիմնադիր է որպես Կուսասրից սերվող:

Անիտուայի ու խեթական Հին թագավորության արքաների միջև ժառանգականության խնդիրը առայժմ պարզված չէ: Ներկայումս խեթական Հին թագավորության հիմնադիր համարվող արքայի՝ էստոնական հաջորդների պատմության առնչությամբ տարբեր մասնագետների կողմից առաջարկվել են տարբեր վերականգնումներ՝<sup>139</sup>

Եղած սակավաթիվ աղբյուրների հիման վրա կարելի է առաջարկել հետևյալ վերականգնումը: Անիտուայից և Քանեշ-Ալախսղինայի արքա Զուզուայի ինչ-որ ժամանակ անց Սանախուիտտա քաղաքում իշխել է Թուրիխալիյա Լ-ը<sup>140</sup>, որը կարողացել էր հեռանալ Քանեշից, այնուհետև՝ հաստատվել հյուսիսում՝ Սանախուիտտայում: Աղբյուրներում հետագայում հիշատակվել է նրա որդին՝ Պուշարրուման, որի որդիներն էին Պավախտելմախը (էստոնական հայության հայր, որը հավանաբար զրկվել էր գահաժառանգման իրավունքից) ու Լաբարնա Լ-ը<sup>141</sup>:

Հետագայում երկու եղբայրների՝ Լաբարնա Ի-ի և Պավախտելմախի միջև իշխանության համար պայքար սկսվեց, որն ավարտվեց Սանախուիտտայում Պավախտելմախի կող-

<sup>139</sup> Էստոնական հայության առաջ իշխան արքաների հաջորդականության մասին տե՛ս նաև **Barjamovic et al 2012:** 51:

<sup>140</sup> Թուրիխալիյայի անունը կա նաև Կուսասրի Պիթիսանա արքայի տեքստում («կապադովկյան» kt 89/k379), որում նա գլխավոր մատովակի պաշտոնում է (աքք.՝ *rabi ššaqē*, այնպես ինչպես հետագայում Զուզու արքայի մոտ (տե՛ս «կապադովկյան» kt j/k 625 տեքստը): Եթե դա նոյն անձնն է, ապա նա հավանաբար արքայական տոհմին էր պատկանում: Այդ անունը հետագայում ընդունված էր խեթական արքայատոհմում:

<sup>141</sup> Տե՛ս **Gilan 2014:** 87:

մից գահի զավթմամբ<sup>142</sup>: Լաբարնա լ-ը հեռացավ Խաթթուսա, որտեղ նա ամուսնացավ Խաթթուսայի արքայի (հավանաբար Խուցցիյայի<sup>143</sup>) դստեր՝ Տավանաննայի<sup>144</sup> հետ, որը նաև Լաբարնայի քույրն էր, քանի որ Լաբարնան որդեգրվել էր Խաթթուսայի արքայի կողմից: Այդ պատճառով էլ հավանաբար Խաթթուսայիլին իրեն իիշատակում է որպես Տավանաննայի Եղբոր որդի<sup>145</sup>: Հավանաբար Լաբարնայի հետ Խաթթուսա էր հեռացել նաև Խաթթուսայիլին:

Խաթթուսայի արքայի իշխանությունը տարածվում էր մինչև Խուրմա (Խուրամա), ինչը նշանակում էր, որ Փոքր Ասիայի կենտրոնական և արևելյան շրջանների մեծ մասը, Քանեց և Կուսարա քաղաքներով հանդերձ, նրա ենթակայության ներքո էր, այսինքն՝ նրա ստեղծած պետությունը զբա-

<sup>142</sup> Այս մասին վկայված է Խաթթուսայիի «Հոչակագրում», որում նշված էր, որ Լաբարնայի փոխարեն Սանախուիտտայի բնակիչները զահին են բազմեցնում Պավախուելմախին. «Նա (նկատի ունի իր պապը) Լաբարնային նշանակեց Սանախուիտտա քաղաքում: Բայց հետագայում նրա ծառաներն ու քաղաքի ավագանին չհարգեցին նրա խոսքը և Պավախուելմախին զահ բարձրացրին», տե՛ս Beckman 2000: 81, Bryce 2005: 66, Gilan 2014: 87-88, Քոյան 2022: 80:

<sup>143</sup> Ժամանակին Անիտուան էր հարթել Խուցցիյա անունով Հալպուվայի արքային: Խուցցիյա անունը առկա է նաև, այսպես կոչված, «Խաչաձև կնիքի» վրա: Կնիքը պատրաստվել էր Մուրսիի II-ի օրոք (Ք.ա. 1321-1295 թթ.) և տեղեկություններ էր պարունակում նաև խեթական պետության վաղ շրջանի մասին: Խուցցիյա արքայի անունը այդ կնիքի վրա նշված է առաջինը, տե՛ս Gilan 2018: 13: Խուցցիյա անունն էին կրում նաև հետագայի այլ խեթական արքաներ:

<sup>144</sup> «Խաչաձև կնիքի» վրա Խուցցիյայից հետո նշվում են նաև Տավանաննայի և Լաբարնայի անունները: Սա կարող է հիմք համարվել հօգուտ այն ենթադրության, որ ժամանակի ընթացքում այդ անձնանունները դարձել են արքաների ու թագուհիների տիտղոսներ (հմմտ.՝ Հովհնոս Կեսարի անունից առաջացած հովմեական կեսար տիտղոսը), տե՛ս Gilan 2018: 13, Bryce 2005: 65:

<sup>145</sup> Տե՛ս Otten 1958: 78, Melchert 1978: 7:

ղեցրել էր Անհտտայի թագավորության տեղը տարածաշրջանում:

Այդ ժամանակ Խաթթուսայի արքայի օգնությամբ Լաբարնան կարողանում է դառնալ Սանախուիտտայի արքա: Անհայտ է, թե ինչ ճակատագրի էր արժանացել Պավախտելմախը, որը մինչ այդ կառավարում էր այդ քաղաքը: Իսկ Պուշարրումային է տրվում Խուրամա (Խուրմա) երկրի կառավարումը: Իր հերթին Լաբարնա I-ը որդեգրում է Պավախտելմախի որդուն՝ Խաթթուսիլիին (Լաբարնա II-ին<sup>146</sup>):

Հետագայում՝ Լաբարնա I-ի կառավարման սկզբնական տարիներին կամ նրա զահ բարձրանալուց առաջ, նրա իշխանությունը տարածվում էր ավելի սահմանափակ տարածքների վրա: Հավանաբար շատ քաղաքներ դուրս էին եկել արքայի վերահսկողությունից: Այդ է ակնարկում այն տեքստը, որում նկարագրվում է, որ Լաբարնայի պետությունը սկզբում փոքր էր, այնուհետև ընդարձակվեց, և նա իր որդիներին նշանակեց տարբեր քաղաքների (Խուախսնա, Տուվանուվա, Նենասսա, Լանդա, Չալլարա, Պարսուխանտա, Լուսնա) կառավարիչների<sup>147</sup>:

Եթե մենք հետևում ենք այս «գահերի խաղին», ապա դուրս է գալիս, որ խեթական աղբյուրների կցկոտուր տեղեկությունները հնարավորություն են տալիս նշելու, որ խեթական Հին թագավորության հիմնադիր համարվող Խաթթուսիլիի ու նրա նախնիների կենսագրությունում առնվազն չորս կենտրոններ՝ Սանախուիտտան, Խաթթուսան, Կուսարը և

<sup>146</sup> Խեթական Կադրուա թագուիին աղբյուրներից մեկում հիշատակվել է որպես Լաբարնայի կին (KUB XXXV 120), մեկ այլ տե՛ղ՝ Խաթթուսիլիի (KBo XIII 43): Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է Խաթթուսիլիի I-ին հիշատակել նաև որպես Լաբարնա II, քանի որ մեկ այլ Լաբարնա նրան որդեգրել էր և նրան կարելի է նշել որպես Լաբարնա I:

<sup>147</sup> Ste' u Hoffmann 1984: 12-15: Տեքստի այդ մասում թվարկված երկրները գտնվել են «Ստորին երկրում»՝ Հայիս (խեթ.՝ Մարասանտիյա) գետից հարավ, տե՛ս Forlanini 2008: 62:

